


ԴՊՐՈՑՆԵՐԸ ԵՒ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԼԻՔԱՆԱՆԱՅԱՅ ԶԱՄԱՅՆՔԻՆ ՄԷՋ
ՈՒՍՈՒՑՈՒՄ, ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹԻՒՆ, ԳՈՐԾԵԼԱՈՃ
ՆՈՐ ՄՇԱԿՈՑԹԻ ՄԸ ԱՆՋՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Տեղեկագիր՝ պատրաստուած

Դոկտ. Զուրիկ Աղդարեանի կողմէ



CALOUSTE GULBENKIAN FOUNDATION



CALOUSTE GULBENKIAN FOUNDATION
Armenian Communities Department

Դպրոցները եւ կրթութիւնը լիբանանահայ համայնքին մէջ
Ուսուցում, ուսումնասառութիւն, գործելաոճ
Նոր մշակոյթի մը անհրաժեշտութիւնը

Տեղեկագիր՝ պատրաստուած
դոկտ. Զուրիկ Ադդարեանի կողմէ

Հրատարակիչ

© **Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութիւն**

Գրութեան հեղինակներ

Հուրիկ Աղդարեան, Ռազմիկ Փանոսեան (Նախաբան), **Մարթին Էսաեան** (Յառաջաբան)

Համակարգող

Օսքար Օ՛Սալիան

Թարգմանութիւն

Շաղիկ Շահինեան

Հայերէն գրութեան վերստուգող խմբագիր

Վարդան Մատթեոսեան

Տպագրութիւն

Agapex

Տպաքանակ

200 օրինակ

ISBN: 978-972-8767-29-7

Մարտ 2014

Կողքի նկարը՝ Սեւան Նազգաշեան, «Անձրեւ», կտաւ, իւղաներկ, 2004

Բովանդակություն

| | |
|--|----|
| Համառոտ ակնարկ | 5 |
| Ցառաջարան | 6 |
| Նախաբան | 8 |
| Ներածական | 10 |
| Առանցքային ինդիկորներ | 14 |
| Նիւթականի հարցեր | 16 |
| Արեւմտահայերէնի անկում | 21 |
| Ուսուցիչներու կրթութիւն | 23 |
| Ծնող-դպրոց յարաբերութիւններ | 30 |
| Թաղային եւ միացեալ դպրոցներ | 31 |
| Առաջարկ-յանձնարարականներ | 35 |
| Յատուկ նշանակութեան յանձնախումբի ստեղծում | 39 |
| Նիւթականի տեւակայունութիւն | 39 |
| Մանկավարժական տեւակայունութիւն | 43 |
| Փորձի փոխանակում եւ երկխօսութիւն | 51 |
| Հետազօտութիւն եւ զարգացում | 53 |
| Եզրակացութիւն | 55 |
| Աղբիւրներու ցանկ | 56 |
| Յաւելումներ | 57 |
| Յաւելում Կ - Յանձնարարականներու աղիւսակ | 58 |
| Յաւելում Բ - Չրուցակիցներու ցանկ | 63 |
| Յաւելում Գ - Աշակերտութեան թիւ | 64 |
| Յաւելում Դ - Սուրիահայ աշակերտներու բաշխում 2012-13-ին | 66 |
| Յաւելում Ե - Հայերէնագիտական դասապահերու բաշխում | 67 |
| Յաւելում Չ - Ուսումնականներու սանդղակներ | 70 |
| Յաւելում Է - Բառացանկ | 76 |
| Յաւելում Ը - Ուղեցոյց-հարցարան | 79 |
| Յաւելում Թ - Առաջադրանքի պայմաններ | 81 |
| Հեղինակին մասին | 83 |

Դպրոցները եւ կրթութիւնը լիբանանահայ համայնքին մէջ Ուսուցում, ուսումնառութիւն, գործելաճ Նոր մշակոյթի մը անհրաժեշտութիւնը

Յամառօտ ակնարկ

Այս ուսումնասիրութեան նպատակը լիբանանահայ դպրոցներու դիմագրաւած գլխաւոր մարտահրաւերներու մասին համապարփակ ակնարկ մը, ինչպէս նաեւ կրթական քաղաքականութեան վերաբերեալ առաջարկ-յանձնարարականներ ներկայացնելն է: Գաղտնիք չէ, որ հայկական դպրոցներու աշակերտներու թիւը զգալի կերպով նուազած է, որ կրթութեան որակը ինկած է, եւ որ հայկական դպրոցները նիւթականի լուրջ սահմանափակումներ կը դիմագրաւեն: Այս ուսումնասիրութիւնը կը նպատակադրէ այս միտումներուն պատճառները վերլուծել եւ բերել կանոնակարգային եւ ծրագրային նորարար, բայց եւ իրապաշտ լուծումներու առաջարկներ: Ասոնք կրնան իրականացուիլ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան (ԳԿՀ), այս մտահոգութիւնները ունեցող այլ կազմակերպութիւններու թէ Լիբանանի մէջ գործող այլ առանցքային շահագրգիռ անձերու կողմէ՝ յօգուտ հայ հանրութեան:

Ուսումնասիրութիւնը նաեւ փորձ մըն է 2013 յուլիսին պէյրութեան երկշաբաթեայ փաստահաւաք առաքելութեան ընթացքին հնչած ամենակարեւոր մտահոգութիւնները որսալու, ինչպէս նաեւ ընդգծելու այն գտածոյ տուեալները, որոնք ի յայտ եկան շահառուններու՝ ներկայացուցիչ անհատներու, կրթական մշակներու (ներառեալ դպրոցի տնօրէններ եւ ուսուցիչներ, համալսարանի դասախօսներ եւ գիտնական-մտաւորականներ), ուսումնական խորհուրդի անդամներու, հոգաբարձուներու եւ լիբանանահայ համայնքի ներկայացուցիչներու լայն զանգուածի մը հետ քննարկումներու ընթացքին:

Լիբանանահայ դպրոցներու դիմագրաւած մարտահրաւերները անճրկեցնող են: Տարածաշրջանի խառնաշփոթ վիճակը, քաղաքացիական պատերազմին յաջորդող կացութեան արձագանգ-հետեւանքները, տնտեսական անկումը տակաւին ազդեցութիւն ունին դպրոցներու դիմագրաւած իրականութեան վրայ: Միւս կողմէ՝ անխուսափելի փաստ է նաեւ, որ արեւմտահայերէնը անկում կ'ապրի, որ ուսուցիչներու այժմու սերունդին միջին տարիքը հետզհետէ աւելի մեծ է, եւ որ սերնդափոխութեան ծրագրուած ընթացք մը չկայ: Եթէ հայկական դպրոցները այս ընդհանուր պայմաններուն եւ մթնոլորտին մէջ պիտի ոչ միայն գոյատեւեն, այլ նաեւ կայուն քայլերով ծաղկում ապրին, պէտք է որ ուսումնական ծրագիրներու, դասագիրքերու եւ առհասարակ կրթական ոլորտի նորարար եւ թիրախային բարեփոխումներ տեղի ունենան: Այս ուսումնասիրութիւնը կ'առաջարկէ առաջարկ-յանձնարարականներու ընթացագիծ մը, որուն շնորհիւ այդ բարեփոխումներու ուղին իրագործելի կը դառնայ: Արդ, հակառակ նիւթական եւ մանկավարժական դժուարութիւններով լի այս մռայլ իրականութեան, կա՛ն լաւատես ըլլալու եւ մանաւանդ փոփոխութեան ձգտելու պատճառներ. փոփոխութիւններ, բարեփոխումներ՝ տեսլականակերտ մօտեցումով մը, որ կ'ընդգրկէ ուսումնառութեան, ուսուցումի եւ աշխատելաճի նոր մշակոյթի մը որդեգրումը:

Յառաջաբան

Սարթին Էստեան

Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան հոգաբարձու

Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Յայկական համայնքներու բաժանմունքի առաքելութիւնն է «ստեղծել կենսունակ ապագայ մը հայ ժողովուրդին համար, ուր իր մշակոյթն ու լեզուն կը պահպանուին եւ կ'արժեւորուին»: Կրթութիւնը եւ դպրոցները, բացայայտ է, որ Էսկան դեր ունին լեզուի եւ մշակոյթի պահպանման մէջ, մանաւանդ երբ կը զուգակցուին կենսաշխոյժ համայնքներու հետ եւ տան մէջ, ընտանեկան յարկի տակ հայերէն խօսելուն հետ: Արդ, կրթութիւնը միշտ եղած է եւ պիտի մնայ մեր աշխատանքին սիրտը: Լիբանանը մէկն է տակաւին յամեցող մեր այն սակաւաթիւ կեդրոններէն, ուր արեւմտահայերէնը մայրենի լեզու է: Աւելին. Լիբանանը մտաւորականներու, առաջնորդներու եւ ուսուցիչներու բեղուն ակունք եղած է սփիւռքի միւս գաղութներուն համար եւ կրնայ շարունակել գաղափարներ ու լաւ աշխատելաոճեր ստեղծել եւ փոխանցել, եթէ մենք անելի սերտ կապ հաստատենք անոր եւ բնակչութեան նուազ «բեկումնային զանգուած» հաշուող միւս գաղութներուն միջեւ:

Սակայն, ինչպէս այս տեղեկագիրը զգաստացնող անկեղծութեամբ ցոյց կու տայ, լիբանանահայ կրթական համակարգը անճրկեցնող մարտահրաւերներու դէմ յանդիման է՝ քաղաքական, ժողովրդագրական, մանկավարժական եւ նիւթականի մարտահրաւերներ: Անցած տասը տարիներուն ընթացքին մենք անելի քան 11 միլիոն ԱՄՆ տոլարի ներդրում ըրած ենք լիբանանահայ կրթական համակարգին մէջ, որուն առնուազն 7 միլիոնը՝ դպրոցներուն: Թերեւս այսպիսով կանխուեր է կացութեան վատթարացումը, բայց այս մէկը արժեւորելու համար տուեալները քիչ են, եւ մեր ձգտումները պէտք է անելի բարձր ըլլան: Պարզ խօսքով՝ մենք չենք կրնար շարունակել յաւելեալ գումարներ յատկացնել առանց տեսնելու արդիւնք եւ շարժ դէպի տեւակայունութիւն: Իսկ այս տեղեկագիրը բացայայտօրէն ցոյց կու տայ, որ վերոյիշեալը չի կրնար իրականանալ առանց մանկավարժական եւ նիւթականի ոլորտներուն մէջ հիմնարար բարեփոխումներու:

Մեր առաքելութիւնը համահայկական բնոյթ ունի: Յետեւաբար՝ լիբանանահայ դպրոցական համակարգը մենք կը դիտարկենք համընդհանուր շրջարկի մէջ, իբրեւ աշխարհասփիւռ Արտերկրի մէկ մասնիկը: Բացի այդ, մենք իրատես ենք եւ կ'ընդունինք որ Լիբանանի քաղաքական կացութիւնը անորոշ պիտի մնայ եւ, որքան ալ մեծ ըլլայ լիբանանահայութեան անընկճելիութեան հանդէպ մեր հիացմունքը, պէտք է բազմալծակ գործելաոճով շարժինք:

Ահա թէ ի՞նչը պիտի առաջնորդէ մեր մօտեցումը եւ ինչը մենք, եւ այլ նուիրատուներ, տեսած ենք՝ արդիւնք տուած է այլուր.

- Յամակարգայինի եւ երկարաշունչի մասին ի մտի ունենալով նայիլ հարցերուն
- Ախտանշաններու փոխարէն արմատական խնդիրները լուծելով զբաղիլ
- Փաստեր փնտռել, փոխան երկար փայփայուած անձնական կարծիքներու
- Յիմնարար փոփոխութիւնը եւ արդիւնքը պայման դնել յատկացումներ ընելու համար
- Ամբողջ աշխարհի տեսածիրով փնտռել նորարար մօտեցումներ եւ նայիլ, թէ ինչը արդիւնքի բերած է այլուր

- Կապ հաստատել լիբանանահայ դպրոցներուն ու անոնց մանկավարժական ընտանիքին եւ համահայկական ընտանիքին միջեւ (վերջինս թերեւս պէտք պիտի ըլլայ որ ստեղծենք)

- Ներառական եւ համագործակցային մօտեցում ունենալ:

Այս բոլորը համահունչ են սոյն տեղեկագիրի առաջարկ-յանձնարարականներուն հետ: Գիտենք, որ ոմանց կարծիքով կրնան խիստ սեպուիլ: Կը յուսանք, սակայն, որ շատ կ'ըլլան անոնք, որոնք պիտի ողջունեն ուշադրութեան կարօտ հնամենի հարցերը յստակ ձեւակերպելու եւ յանդուգն պատասխաններ առաջարկելու բարի կամեցողութիւնը. այս պատասխանները, այնուհանդերձ, խորունկ յարգանք ունին արդէն գոյութիւն ունեցածին հանդէպ, զայն կ'ընդունին իբրեւ հիմ եւ կը կառուցուին անոր վրայ: Կացութիւնը շատ լուրջ ու հրատապ է, չենք կրնար խուսանաւելու փորձեր ընել:

Նախաբան

Ռազմիկ Փանոսեան

Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունքի տնօրէն

Ռուս. Հուրիկ Ադդարեանին այս ուսումնասիրութիւնը կատարելու առաքելութիւնը յանձնեցինք՝ նպատակ ունենալով Լիբանանի հայկական դպրոցներու հանդէպ մեր յանձնառութեան բարելաւումը: Այս տեղեկագիրի առաջին մասը կացութեան վերլուծում մըն է, իսկ երկրորդը, աւելի կարեւոր կերպով, ստոյգ եւ որոշակի յանձնարարականներ կը ներկայացնէ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան ու այլոց: Հիմնուելով այս ուսումնասիրութեան եւ անոր գտածոյ տուեալներուն վրայ՝ մենք պիտի վերաուղղենք սփիւռքի այս կենսականօրէն կարեւոր հայ համայնքի կրթութեան ոլորտին մեր աջակցութիւնը:

Տասնամեակներ շարունակ մենք նեցուկ կանգնած ենք Լիբանանի դպրոցներուն եւ դարեմանքներուն. մեր զօրակցութիւնը պիտի շարունակուի, բայց ոչ առաջուան նման: Աւելի մեծ գումարներ պիտի տրամադրենք թիւով աւելի քիչ ստացողներու. յատկացումները պիտի կատարուին ըստ դպրոցներուն կողմէ ներկայացուած ծրագրային թէ նախագծային նախաձեռնութիւններու: Մենք մեզի անկեղծօրէն հարց տանք. դպրոցի մը համար մի քանի հազար տոլարը այդքան տարբերութիւն պիտի ընէ, երբ լիբանանահայ ամբողջ կրթական համակարգը կառուցային թէ մանկավարժական այդքան մեծ թիւով մարտահրաւերներու դէմ յանդիման է (յատկապէս հայերէնագիտական նիւթերու դասաւանդումի առումով): Պետք է մտածենք նորարար լուծումներու մասին, որոնց ընդմէջէն պիտի կարենանք առաւելագոյն նպաստ բերել աւելի մեծ ներգործութեան ի խնդիր:

Այս ուսումնասիրութիւնը կատարելու համար դուրս. Ադդարեանը եղած է բացարձակապէս անկախ: Առաւել, իրեն յստակ ըսուած է, որ թէեւ տեղեկագիրը նախ եւ առաջ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան համար է, ան նաեւ պիտի տրամադրենք համայնքին եւ շահագրգիռ ու մտահոգ բոլոր անձանց: Կը յուսանք, որ իր վերլուծութիւնը առիթ կ'ըլլայ լիբանանահայ ամբողջ համայնքը ընդգրկող հաւաքական քննարկումներու:

Այս ուսումնասիրութենէն կը բխին որոշ առանցքային գաղափարներ. գումարներու պայմանական և ըստ արդիւնքի յատկացումը, հետազօտութեան եւ ապացոյցներու վրայ հիմնուած որոշումներու կարեւորութիւնը, համալիր մօտեցման անհրաժեշտութիւնը, որուն մէջ մանկավարժական եւ նիւթականի տեսակայունութիւնը իրար հիւսուած ըլլան, համընթաց ուսուցումի եւ ուսումնառութեան հրամայականը եւ, ի վերջոյ, համակարգուած եւ համագործակցային կերպով բարեփոխումներու գործընթացի լծուելու կենսական անհրաժեշտութիւնը՝ փոքր, բայց յարաճուն քայլերով: Տեղեկագիրը բազմաթիւ գործնական յանձնարարականներ կը պարունակէ, ոմանք փոքրածաւալ, ոմանք ալ յանդուգն ու խորքային:

Ամենակարեւորը ան է, սակայն, որ այս տեղեկագիրը կը փաստէ, որ կացութիւնը լուրջ է, բայց անյոյս չէ. որ լաւ առաջնորդումով, ռազմավարական տեսլականով եւ ժրջան աշխատանքով կրնանք փոխել վիճակը: Իրականութեան մէջ տեղեկագիրի առաջին մասի մնայլ վերլուծութիւնը ճանապարհ կը հարթէ յանձնարարականներով լի յուսադրիչ երկրորդ մասին համար:

Հայ մշակույթի, մայրենի լեզուի եւ հայ դպրութեան պահպանումը եւ զարգացումը վերջերս հրապարակած մեր հնգամեայ ծրագիրին առաջնահերթ նպատակներէն են: Լիբանանը եւ լիբանանահայ դպրոցական համակարգը ասոր մէջ կարեւոր դեր ունին: Դպրոցներու, ուսուցիչներու եւ աշակերտներու հանդէպ մենք յանձնառու ենք: Խնդիրը ինչպէս աւելի լաւ զանոնք սպասարկելն է: Հաւատացած ենք, որ այս ուսումնասիրութիւնը բոլորիս համար երկարաշունչ ծրագրումի եւ գործունէութեան ամուր հիմք ու հենք կրնայ ըլլալ:

Ներածական

Լիբանանահայ դպրոցներու եւ առհասարակ լիբանանահայ ուսումնական համակարգին մասին փաստերու վրայ հիմնուած լուրջ ուսումնասիրութիւն գոյութիւն չունի: Այնպէս կը թուի, որ եթէ նկատի չառնենք ահագանգ հնչեցնող կամ զարհուրելի կացութիւնը ողբացող պարբերաբար լոյս տեսնող խմբագրականները, այս նիւթը նոյնիսկ հանրային քննարկման առարկայ չէ: Առաջին նայուածքով կարծես տիրող կեցուածքը տասնամեակներ առաջ, լիբանանահայ համայնքին «ոսկեդարի» օրերուն ստեղծուած մշակութային «դրամագլուխի» ինքնընթացին ապաւինիլն է: Համայնքի բոլոր դրսեւորումներուն վրայ լեզուական անկումի շօշափելի ազդեցութիւնը, ինչպէս նաեւ ահագնացող տնտեսական դժուարութիւնները կրթական համակարգի քննական ուսումնասիրութիւնը անյետաձգելի հրամայական կը դարձնեն: Այս տեղեկագիրին նպատակը ոլորտին տարբեր շահառուներուն հետ սպառիչ եւ խորագին քննարկումներու վրայ հիմնուած վերլուծական մը ներկայացնելն է այն ցայտուն խնդիրներուն եւ մարտահրաւերներուն, որոնք կը ծառանան լիբանանահայ համայնքի կրթական համակարգին դիմաց: Աշխատութիւնը նաեւ կը նպատակադրէ ներկայացնել առաջարկ-յանձնարարականներու շարք մը, որոնք կը միտին նիւթականի եւ մանկավարժական գոյգ առումներով ապահովել տեւակայունութիւն՝ ժամանակի ընթացքին դիմացող եւ զարգացող կայունութիւն:¹

Այս տեղեկագիրը դժբախտաբար չի կրնար ոլորտը ուսումնասիրող անցեալ հետազոտութիւններէ մակաբերումներ պարունակել՝ տրուած ըլլալով, որ լիբանանահայ դպրոցներուն դիմագրաւած տագնապը քննող ուսումնասիրութիւնները խիստ սակաւաթիւ են: Միակ բացառութիւնը ՀԲԸՄ Դարուհի-Յովակիմեան վարժարանի նախկին տնօրէն, գրաքննադատ եւ խմբագիր Ժիրայր Դանիէլեանին կողմէ 2002-ին հրապարակուած «Լիբանանահայ դպրոցը. թիւեր եւ մտորումներ» վտիտ աշխատութիւնն է: Այս մենագրութիւնը² դպրոցներու աշակերտութեան թիւի եւ առնչակից այլ տուեալներու մասին վիճակագրական ընդհանուր պատկերացում տալու առաջին փորձ մըն է: 2002-էն ի վեր Դանիէլեանը նաեւ Լիբանանի բոլոր հայկական դպրոցներու աշակերտութեան թիւերուն վերաբերեալ տուեալներու շտեմարանը ամենամեայ լրամշակումի կ'ենթարկէ: Դանիէլեանի գիրքը կը վերհանէ հայկական դպրոցներու այժմու ճգնաժամը ծնող առանցքային որոշ ազդակներ: Յատկանշական է, որ այդ օրերէն ի վեր շատ բան չէ փոխուած.

- Յետ քաղաքացիական պատերազմեան արտագաղթ, որուն հետեւանքով Լիբանանի մէջ ապրող հայ բնակչութեան թիւը զգալիօրէն նուազած է: Թէեւ այստեղ ալ չունինք ճշգրիտ կամ վստահելի տուեալներ, սակայն լիբանանահայութեան թիւին մասին շրջանառուող գնահատումները 65 000-էն 80 000-ի միջեւ կը տարուբերին. 80 000-ը խիստ լաւատեսական կը սեպուի:
- Որոշ ծնողներու իրենց զաւակները օտար դպրոց դրկել նախընտրելը. ասիկա բարդ եւ բազմաձալ խնդիր մըն է, եւ շերտերէն ոմանք կապուած են հասարակական դիրքորոշումներու հետ («ընտրեալ կրթութիւնը» գերադասելը իբրեւ հասարակական դիրքի խորհրդանիշ), իսկ ոմանք ալ՝ տնտեսական կացութիւններու (ծնողները ի վիճակի չեն ուսումնավճարը հայթայթելու եւ կ'ընտրեն պետական դպրոցի տարբերակը):
- Ընկերային-տնտեսական պայմաններ. քաղաքացիական պատերազմին յաջորդած

1. Մասնագիտական եզրերու համար տե՛ս Յաւելուած Է, Բառացանկ:

2. Գիրքին առաջին հիւնգ հատուածները 2002-ին որպէս յօդուածաշարք լոյս տեսած են «Չարթօսք» օրաթերթին մէջ:

տնտեսական անկումը, միջին խաւի աստիճանական վերացումը, ցած եկամուտներու պատճառով ընտանիքներու դիմագրաւած ծայրայեղ անձուկ նիւթական կացութիւնը, եւ այս բոլորը՝ տարածաշրջանի աշխարհաքաղաքական անհանդարտ կացութեան պայմաններուն մէջ բնականաբար բարենպաստ ազդեցութիւն չեն գործեր:

Դանիելեանը այս կացութեան փոխկապակցուած արձագանգ-հետեւանքները կը յարաբերակցէ աշակերտութեան թիւի նուազումին հետ: Աշակերտութեան թիւի նօսրացումին հետեւանքը ուսումնալծարներէն գոյացած եկամուտի նուազումն է. այս ալ, իր հերթին, կը տանի դպրոցներու ամսական վճարել կարենալու դժուարութեան: Իսկ աշխատողներուն վճարել չկարենալու բերումով դպրոցներ կը փակուին վերջնականապէս, կամ մի քանի դպրոց իրարու կը միանան. ինչն ալ, ի վերջոյ, կը յանգեցնէ նիւթականի բացերը գոցելու նպատակով դպրոցական աշխատակազմի անդամներուն գործէ արձակուելուն: Յեղինակը նաեւ դիտել կու տայ, որ մինչ այս կացութիւններուն մասին ատենին մամուլի մէջ շատ բան գրուած է, ուսուցիչները մնացած են լուռ: Ճգնաժամի խորանալուն զուգահեռ ուսուցիչներու ձայնագուրկ դառնալու մասին հետաքրքրական դիտարկում մըն է այս: Ստորեւ՝ դպրոցներու դիմագրաւած նիւթական տագնապին նպաստող, Դանիելեանի կողմէ մատնանշուած եւ տակաւին այժմեական գործօններէն ոմանք.

- Ծնողներու դիմագրաւած նիւթական դժուարութիւնները, որոնք կ'ազդեն ուսումնալծար տալու կարողութեան վրայ: Ըստ յաճախ հնչող կարծիքներու՝ ծնողներու ընդհանուր թիւի երկու երրորդը անվճարունակ է, իսկ որոշ տեղեկաբերներ կ'ըսեն, որ ծնողներու 90%-ը վճարելու անկարող է կամ պարզապէս ուսումնալծար տալ չ'ուզեր:
- Պետական օրէնսդրութեան հիման վրայ ուսուցիչներուն տրուելիք ամսականի յաւելումները. սահմանափակ պիտոճեով դպրոցները հետզհետէ աւելի կը դժուարանան զանոնք վճարելու:
- Ուսուցիչներու բժշկական ապահովագրութեան, Ուսուցչաց սնտուկի (ուսուցիչներու հանգստեան թոշակի) եւ այլ հարկերու համար պետութեան կողմէ դպրոցներուն համար սահմանուած պարտադիր վճարները:

«Չայ դպրոցը, ի մասնաւորի Լիբանանի մէջ, հիւանդ է», - յայտարարած է Դանիելեանը 2002-ին եւ խնդիրը դարմանելու համար ատենին ըրած է ընդհանուր բնոյթի յանձնարարականներ, որոնք մեծ մասամբ տակաւին տեղին են ու ճշմարիտ. ա) Ապահովել, որ կրթական մարմիններու անդամները կրթական ոլորտին հետ փաստացի առնչութիւն ունեցող անձեր ըլլան, որպէսզի խնդիրներու խորքային իմացութեամբ որոշումներ կայացնեն, բ) Դպրոցի տնօրէն նշանակել կրթութեան կառավարման եւ ուսումնական վարչարարութեան մասնագետ անձիք, գ) Գործի առնել որակեալ ուսուցիչներ ու մասնագիտական հմտացումի եւ զարգացումի ծրագիրներ գործի դնել, դ) Անհրաժեշտութեան պարագային դպրոցները իրարու միացնել, ե) Աշակերտները եւ ծնողները ներգրաւել կրթական գործընթացին եւ դպրոցի կեանքին մէջ, անոնց հետ ներառական յարաբերութիւններ ունենալ:

Վերջին երկու տարիներուն ընթացքին Սուրիոյ մէջ ընթացող քաղաքացիական պատերազմին բերումով սուրիահայերու նկատառելի թիւ մը Լիբանան ապաստանած է: 2011-2012 ուսումնական տարեշրջանին համեմատ լիբանանահայ դպրոցներու աշակերտութեան թիւին 2012-2013-ին արձանագրած համեստ աճը կը համապատասխանէ այս համակարգին մէջ ուսանող սուրիահայ աշակերտներու ընդհանուր թիւին: Սուրիահայ աշակերտներէն գրեթէ բոլորին տրուած են իրենց ուսումնալծարը այս կամ այն ձեւով հոգալու ծառայող այլազան նիւթական նպաստներ: Սուրիահայերը տակաւին առաւելաբար տարանցող ոլորտ մը կը կազմեն. անոնցմէ մաս մը արտագաղթած է Լիբանանէն կամ վերադարձած է Սուրիա: (Սուրիահայ աշակերտութեան լիբանանահայ դպրոցական համակարգին մէջ մանրամասն տեղաբաշխման մասին տես Յաւելուած Դ):

Աշակերտութեան թիւի, կարիքներու եւ բացերու, ինչպէս նաեւ ուսուցիչներու մասնագիտական

կրթութեան խնդիրին առումով բոլոր դպրոցները նոյն բարոյութիւնները կը դիմագրաւեն: Սակայն Պուրճ Համուտի³ եւ այլ թաղամասերու ու արուարձաններու մէջ գտնուող հայկական դպրոցներուն միջեւ առաջնահերթութիւններու, ծնողներու կեցուածքի եւ անոնց իրազեկութեան աստիճանի, ինչպէս նաեւ ընկերային-տնտեսական կացութեան առումով նկատառելի տարբերութիւն կայ:

Դպրոցներու կացութիւնը, բնակչութեան արտագաղթը, ինչպէս նաեւ երկարատեւ ծրագրումի բացակայութիւնը բնականաբար կ'ազդեն լեզուի կենսունակութեան վրայ: Բացայայտ է, որ արեւմտահայերէնը անկում կ'ապրի, եւ տագնապայարոյց արագութեամբ: Այս բոլորը անհրաժեշտ կը դարձնեն կրթութեան ոլորտի փոխշաղկապուած խնդիրներու ամբողջ «բազմութեան» մը քննական ուսումնասիրութիւնը, ինչպէս օրինակ ուսուցիչներու մասնագիտական կրթութեան խնդիրը, ուսումնական ծրագիրներու խնդիրը, դասագիրքերու խնդիրները: Այս աշխատութիւնը կը քննէ առաջին երկուքը, իսկ դասագրքային բարեփոխումներու բարդ եւ առանձին ուսումնասիրութեան առարկայ խնդիրը, բացի ընդհանուր կացութեան պատկերումի մասէն, դուրս կը մնայ անկէ:

«Մենք հայագիտական նիւթերու դասագիրքի եւ ուսումնական ծրագրի հարց ունինք: Տարիներէ ի վեր հայերէնի, հայոց պատմութեան ծրագիրը վերատեսութեան չէ ենթարկուած: Մասնագիտական մօտեցում պէտք է ցուցաբերել, մասնագետներէ կազմուած խմբակի մը գործը

«Մասնագիտական մօտեցում պէտք է ցուցաբերել. այս ալ իր կարգին համապատասխան նիւթական կը պահանջէ:»

պէտք է ըլլայ, վճարովի: Անշուշտ այս ալ իր կարգին համապատասխան նիւթական կը պահանջէ»,- նշեց կրթական գործիչներէն մին՝ ակնարկելով փոխնիփոխ նիւթական եւ մանկավարժական բնոյթի մտահոգութիւններու միջեւ տարուբերող, երբեմն փակ շրջանի վերածուող անելանելի կացութիւններու: Չրուցակիցներէն շատերը խօսեցան դասագիրքերու բարեփոխումի նոր, համագաղութային նախաձեռնութեան մը մասին՝ կազմել համախումբ կեդրոնական մարմին մը եւ անոր զանազան ենթայանձնախումբերը: Յստակ համախոհութիւն կայ այն մասին, թէ դասագիրքերը պէտք է Սփիւռքի մէջ պատրաստուին, հակառակ ՀՀ Սփիւռքի նախարարութեան դէպի սփիւռքեան դասագիրքերու շուկայ «ելք

մը բանալու» ճիգերուն. պարզապէս որովհետեւ վերջինիս պատրաստած դասագիրքերը չեն համապատասխաներ Արտերկրի ընդհանուր պայմաններուն եւ իրավիճակին: Տեղւոյն վրայ ալ կան դասագիրք պատրաստելու եւ հրատարակելու անհատական փորձեր, «որոնք աւելի կը բարդացնեն այս լաբիրինթոսային կացութիւնը»,- մեկնաբանեց տեղեկաբեր մը: Ընդհանուր մտահոգութիւն մըն ալ կայ՝ նոր դասագիրքերը պատրաստուին այնպէս, որ կարելի ըլլայ զանոնք դիւրութեամբ պատշաճեցնել սփիւռքեան այլազան իրավիճակներու: Ասոր իրագործումին ի խնդիր լուծումներէն մէկը կրնայ ըլլալ իւրաքանչիւր երկրի կամ իրավիճակի համար խորացուած «Ուսուցիչի ձեռնարկ»-ներու պատրաստութիւնը: «Մէկ բան յստակ է. այս գործը պէտք է ըլլայ համակարգուած՝ համագաղութային կեդրոնական յանձնախումբի մը միջոցով. այլեւս անհատական նախաձեռնութեամբ չըլլայ»,- բացատրեց նոյն անձը: Առաջնահերթութեան առումով ծրագիրը հետեւեալն է. սկսիլ նախակրթարանէն մինչեւ երկրորդական կարգերու հայոց պատմութեան դասագիրքերէն, ապա անցնիլ մանկապարտեզի, յետոյ նախակրթարանի մայրենի լեզուի դասագիրքերուն, եւ անկէ ետք՝ երկրորդական կարգերու լեզուի եւ գրականութեան դասագիրքերուն: Առաջին եւ երկրորդ դասարաններու հայոց պատմութեան դասագիրքերու պատրաստութեան սկզբնական աշխատանքները արդէն ծայր առած են: Այս գիրքերուն

3. Պուրճ Համուտը՝ Պէրուտի հայաիոծ թաղամասը, գլխաւորաբար առեւտրական կեդրոն մըն է, իսկ բնակչութեան առումով մեծ մասամբ աշխատաւոր դասակարգի եւ ընկերային-տնտեսական համեստ խաւի պատկանող բնակիչներ ունի: Այլ թաղամասերու մէջ գտնուող երկու դպրոց՝ Հանրի Հայ Բարձրագրական Կերթմենեան վարժարանը եւ Խալիլ Պատաուլի Ռուբինեան ազգային վարժարանը (երկուքն ալ հայաիոծ շրջաններու մէջ) Պուրճ-Համուտի դպրոցներուն կացութիւններուն նման վիճակներու մէջ են:

Նախնական տարրերակները մէկ-երկու տարի դասարանային փորձարկումի պիտի ենթարկուին, յետոյ վերջնական տեսքի բերուին: Հակառակ անոր, որ գովելի է այսքան կարելոր խնդիրի մը համար վերջապէս համագործակցական նախաձեռնութեան մը գոյանալը եւ ուսուցիչներու ալ անոր մաս կազմելը, որոշ տեղեկաբերներ իրաւացիօրէն կը նշեն, որ անկէ բացակայ են արհեստավարժները: Շատ կենսական է նաեւ հետեւեալ իրողութիւնը՝ դասագիրքերու բարեփոխումը այս պարագային չի կրնար դատարկ միջոցի մէջ գոյութիւն ունենալ: Հրամայական է, որ դասագիրքերու բարեփոխումը շաղկապուի ուսումնական ծրագիրի բարեփոխումներուն հետ, եւ հետեւի, այլ ո՛չ թէ նախորդէ անոնց:

2013 ՅՈՒՆԻՍԻ ԱՌԱՔԵՆՈՒԹԻՒՆ Ի ՊԵՅՐՈՒԹ

Երկշաբաթեայ այս առաքելութեան ընթացքին (յուլիս 3-16) հանդիպումներ ունեցայ շահառուներու լայն պարունակի մը հետ՝ ամբողջ համայնքի կտրուածքով: Այցելեցի ներկայացուցչական նմոյշ մը կազմող դպրոցներ: Այցելեցի 14 դպրոց, 4 հիմնարկութիւն, 1 համալսարան, հանդիպումներ ունեցայ 1 կրթական մարմինի, 12 տնօրէնի, 6 ուսուցիչի, 4 գիտաշխատողի, վարչական պաշտօն ունեցող 4 անձի, դպրոցի 1 հոգաբարձուի, տարբեր մտաւորականներու, մէկ արուեստագետի եւ մէկ հրատարակիչի հետ: Ժամանակի անխուսափելի սղութեան հետեւանքով չկրցայ որոշ դպրոցներ այցելել: Դարեւանքերը եւ յատուկ կրթութեան օժանդները նոյնպէս ընդգրկուած չեն այս տեղեկագիրի ծիրէն ներս, որովհետեւ շատ ակնթիւքի թիւով աշակերտ ունին, քան մնացեալ դպրոցները: Հեռահար կտրուածքով՝ այս կրթօժանդները պէտք է կարելորուին, որովհետեւ դարեւանքերը ապագայ կղերականները եւ հոգեւոր առաջնորդները կը պատրաստեն, մինչ յատուկ կրթութեան այս առանձին ու անջատ հատուածը անհրաժեշտութիւն մըն է՝ այս խումբի աշակերտներուն կրթական կարելոր ծառայութիւններ մայրենի լեզուով առաջարկելու համար: Յետագայ նման ուսումնասիրութիւն մը պէտք է քննէ կրթական գործընթացին մէջ ծնողներու եւ աշակերտներու ներգրաւուածութիւնը, ինչպէս նաեւ նախատեսէ դասաւանդումի դիտարկումներ:

Հաւաքուած այս հանրագումար տուեալները կը բաղկանան ակնթիւքի քան երեսուն ժամուան ձայնագրուած առանձնագրոյցներէ, որոնց վրայ կ'աւելնան վիճակագրական այլազան տուեալներ (աշակերտներու թիւ, ուսումնավճար, եւ այլն) եւ դպրոցներէ հաւաքուած այլազան գրային նիւթեր: Հետազօտութիւնը կեդրոնացած է նիւթականի եւ մանկավարժական տեւակայունութեան զոյգ առանցքներուն վրայ, մասնայատուկ հարցումներով ռազմավարական երկարաժամկետ ծրագրումի, մանկավարժական այժմեականացումի ու համագործակցութեան, ինչպէս նաեւ ուսուցանելու փիլիսոփայութեան եւ նորարարութեան մասին:

Առանցքային խնդիրներ

Կրթական ոլորտի ոչ մեկ դրսևորման վերաբերեալ ուսումնասիրությունն զոյություն ունի, բացի Լիբանանի բոլոր հայկական դպրոցներու անցեալ տասներեք տարիներու աշակերտներու թիւերը ի մի բերող աշխատանքէ մը (Ժիրայր Դանիէլեանի անձնական նախաձեռնութեամբ կատարուած): «Յետագոտութիւնը առհասարակ բացակայ է: Մենք տուեալներու վրայ հիմնուած չենք խօսիր, որովհետեւ տուեալներ չկան: Ոչ հետագոտութիւն կայ, ոչ ալ անոր հասկացողութիւնը, թէ ինչ է ան, կամ ինչ կը բխի անկէ: Նոյն բանին մասին չենք մտածեր, նոյն լեզուն չէ որ կը խօսինք: Այս շատ մեծ դժուարութիւն մըն է, որ կ'ունենանք տարբեր մարմիններու, հիմնարկութիւններու, դպրոցներու եւ անոնց վարչական պատասխանատուներու հետ երբ որ գործ ունենանք» խօսքերով կացութիւնը տեղին եւ ճիշդ նկարագրեց կրթական մշակ մը: «Ոչ մեկ ուսումնասիրութիւն կայ, ոչ վիճակագրական ոչ ալ այլ, թէ այսօրուան երիտասարդները ինչ կը մտածեն, այս կամ այն հարցին մասին ինչ կարծիք ունին» բացատրեց մեկ ուրիշը՝ մէջտեղ բերելով սերնդափոխութեան կենսորոշ խնդիրը: «Մենք նաեւ ինքնաքննադատութեան պակաս ունինք: Պետք է ոչ միայն վիճակագրական վերլուծութիւններ ընենք, այլ նայինք խնդիրներուն արմատը եղող պատճառները ինչ են: Եղած մշակութային եւ ընկերային դրամագլուխը մսխուեցաւ. ներդրում չեղաւ, մարդ բան չդրաւ վրան, եղածն ալ կամաց-կամաց կը մաշի: Ոչ մեկ ծրագիր ունինք, ոչ ալ զաղափար ունինք թէ այս տագնապը ինչով պիտի վերջանայ»: Այս անհրաժեշտ մուտքը հիմքը կը կազմէ այս հատուածին մէջ քննուող առանցքային խնդիրներուն, որոնք գլխաւորաբար հիմնուած են մանրադէպային վկայութիւններու, երկարատեւ դիտարկումներու, այս ոլորտի մէջ փորձառութեան եւ շահառուներու կողմէ արտայայտուած մտահոգութիւններու վրայ:

Կայ մեկ հասարակաց դիտարկում, որուն բոլոր տեղեկաբերները համաձայն են՝ սփիւռքի տարածքին ինքնութեան ընդհանրացած խօսոյթին մէջ դպրոցը կեդրոնական, առանցքային դեր ունի: «Գոյատեւման մեր խարիսխը, ապագայի համար մեր միակ ապահինելիք տեղը դպրոցն է: Առանց դպրոցի ոչ ալումք կը մնայ, ոչ թերթ, ոչ կուսակցութիւն, ոչ եկեղեցի, ոչ մեկ հիմնարկութիւն կը գոյատեւէ», - բացատրեց զրուցակիցներէս մին: «Դպրոցը միշտ էր, հիմա նաեւ նպատակ է», - պնդեց ուրիշ մը: Որոշ տեղեկաբերներ ալ այն կարծիքը յայտնեցին, որ մինչ կրօնական հաստատութիւնները կամ քաղաքական կազմակերպութիւնները ինքնութեան պահպանման հարցերու իրենց մենատնօրինումը կարծես սկսեր են դանդաղ զիջիլ, դպրոցը միակ մարմինն է, որ կրնայ շարունակել ինքնութեան պահպանման մէջ իր կենսական դերակատարութիւնը: Յետեւաբար՝ կարելոր է, որ հայկական դպրոցի եւ առհասարակ հայեցի կրթութեան վերաբերեալ հարցերն ու ակնկալիքները ոչ թէ անջատ դիտուին, այլ որպէս սփիւռքեան մեր անախորժ կացութեան մասին քննադատաբար դրուելիք աւելի մեծ խնդիրներու մաս: Պատասխաններ գտնելը, մեր տեսլականը սահմանելն ու այդ սահմանումը յղկելը անխուսափելիօրէն ազդեցութիւն պիտի ունենան սփիւռքահայ մեր համայնքներուն առաջնահերթութիւններուն մասին մեր պատկերացումներուն վրայ:

Դպրոցները թէ՛ մանկավարժական, թէ՛ նիւթականի խնդիրներու դէմ յանդիման կը գտնուին. հետեւաբար որոնուող լուծումները պետք է ձգտին հաւասարապէս տեւակայունութիւն ստեղծելու այս զոյգ ոլորտներուն մէջ, որպէս իրար լրացնող եւ իրարանցուկ զուգահեռ ընթացագիծեր: Մի քանի տեղեկաբեր խօսեցան հայկական դպրոցներու մասին տիրող կեցուածքներուն եւ կարծիքներուն մասին, որոնք ընկալուած խնդիրներուն սիրտը կը կազմեն: «Յայկական դպրոցին գլխաւոր առաքելութիւնը հայերէն սորվեցնելը պետք է ըլլայ: Վերջ: Նիւթականի խնդիրէն ետք ասիկա դպրոցներուն երկրորդ հիմնական հարցն է՝ երկու պատճառով: Առաջինը ան է որ որոշ

դպրոցներ⁴ [բարձր կարգերուն] հայերէնի դասապահերը պակսեցուցած են եւ առաջնահերթութիւնը տուած են [պետական քննութիւններուն համար պետք եղած] այլ նիւթերու, իսկ երկրորդը որակեալ ուսուցիչներու պակասն է, եւ այդ պակասը երթալէն աւելի զգալի պիտի դառնայ»,- բացատրեց կրթական գործիչ մը: Ուրիշ տեղեկաբեր մը ուշադրութիւն հրաւիրեց համայնքին մէջ լայն տարածում գտած «քննութիւնամուլ» մշակոյթին հակոտնեայ հետեւանքներուն վրայ: Անշուշտ բոլորը համաձայն են, որ հայկական դպրոցները պետք է որակեալ կրթութիւն տան: Ոչ ոք կը վիճարկէ, որ պետական քննութիւններուն յաջողութիւնը կարելոր է, որ նշանակալից մաս է այն ամէն ինչին, որ հայկական դպրոցը պետք է առաջարկէ: Ուրիշ բան է ըսուածը: «Կրթութեան վայր ըլլալու փոխարէն դպրոցը դարձեր է պաքալորեայի աշակերտ արտադրող գործարան: Ան լաւագոյն պարագային կը դիտուի որպէս «պրընէի» կամ «պաքալորեայի» վկայական ապահովող տեղ: Կը նային ինչ յաջողութիւն ունեցեր է պետական քննութիւններուն եւ չեն անդրադառնար, որ այս քննութիւնները միայն մէկ բաղադրիչն են այն ամբողջին, որ կրթական հաստատութիւնը եւ հայկական դպրոցը պետք է որ տան», - փաստարկեց տեղեկաբերը: Յոսիսքը անոր մասին է, որ մարդոց միտքերուն մէջ յստակ սահմանում կամ հիմնական յղացք չկայ, թէ պետական քննութիւններուն յաջողութեան բարձր թիւերէն անդին դպրոցը, եւ մանաւանդ հայկական դպրոցը ինչի մէջ պետք է ներգրաւուած ըլլայ: «Յայնպահպանումի» կամ «հայեցի դաստիարակութեան» մասին անցեալ տասնամեակներէն յամեցող բազմաթիւ եւ այլազան յղացքներ ու կարգախօսներ կը թելածեն, սակայն յստակ ըմբռնում չկայ, թէ իրօք ինչ է անոնց իմաստը, «հայեցի դաստիարակութիւնը» ինչ պետք է ապահովէ (ի տարբերութիւն ոչ-հայեցի դաստիարակութեան): Բազմաթիւ տեղեկաբերներ մէկէ աւելի անգամներ ակնարկեցին այս խառնաշփոթ կացութեան՝ ընդգծելով, որ անոր կը զուգակցի կուռ սահմանումներու եւ հնադարեան կարգախօսներու կազմաքանդումի ի սպառ բացակայութիւնը:

Դպրոցները թէ՛ մանկավարժական, թէ՛ նիւթականի խնդիրներու դէմ յանդիման կը գտնուին:

Ըստ տիրող ընդհանուր ընկալումին՝ հայկական դպրոցները «լաւ» կամ «զէշ» «կը հռչակուին» պետական քննութիւններուն իրենց աշակերտներուն արձանագրած յաջողութիւններուն կազմած ընդհանուր խորքին վրայ. այս սովորութիւնը ընթացք կու տայ «քննութիւնամուլ» մշակոյթին, որ դպրոցները յաջողութեան համար անհրաժեշտ այլ որակաւորումներէ կը զրկէ: Մամուլի հրապարակումներուն վրայ հիմնուելով կարելի է ըսել, թէ ըստ երեւոյթին հայկական դպրոցները ունին պետական քննութիւններուն յաջողութեան լաւ ցուցանիշներ: Բայց արժեւորման եւ գնահատման այս դրութիւնը աներկբայ եւ պարզ չէ: Մէկէ աւելի տեղեկաբերներ կը պատմեն բոլորին կողմէ կիրարկուող ընթացիկ «սովորութիւններու» մասին. օրինակ՝ դպրոցի կազմակերպած ներքին քննութիւններուն արդիւնքներուն հիման վրայ աշակերտներուն հետ համաձայնութեան գալ եւ որոշ աշակերտներ քննութեան արձանագրել որպէս ազատ մասնակից եւ ոչ այսինչ դպրոցի աշակերտ, որպէսզի տուեալ դպրոցին պետական քննութիւններու յաջողութեան թիւին վրայ բացասական ազդեցութիւն չըլլայ: Յասկնալի կերպով դժուար է ճշդել, թէ այս սովորութիւնը որքան տարածուած է հայկական դպրոցներուն մէջ, բայց ան յստակօրէն ցոյց կու տայ, թէ բոլորին երազանքը դարձած այս քննութիւններու յաջողութեան թիւերուն հիման վրայ դպրոցի որակը արժեւորելը սխալական բնոյթ ունի: «Քննութիւնամէտ» միջավայրերը

4. Յայերէնի, հայոց պատմութեան եւ առհասարակ հայերէնագիտական դասապահերու շաբաթական բաշխումը դպրոցէ դպրոց կը տարբերի եւ, ինչպէս նշեց տեղեկաբեր մը, գաղափարաբանական եւ փիլիսոփայական այլազան հիմքեր ունի: Ազգային դպրոցներէն եւ ճեմարանէն բացի միւս դպրոցները նկատառալիօրէն նուազ թիւով հայերէնագիտական դասապահեր ունին բարձր կարգերուն մէջ, իսկ որոշ դպրոցներ ժՐ դասարանին ոչ մէկ պահ ունին: Թէեւ ասիկա դժուար լուծելի (եթէ ոչ անլուծելի) խնդիր մըն է, կան հարցի այլ մտտեցումներ, որոնք քննարկուած են «Առաջարկ-յանձնարարականներ» բաժինին մէջ:

առհասարակ հմտութիւնները կարելորոջ կ'ըլլան, իսկ այս հմտութիւնները անպայման չեն նպաստեր քննադատական մտածողութեան եւ ստեղծագործ միտքի զարգացումին եւ կը ծնին կեցուածքներ ու մօտեցումներ, որոնք կրնան ուսումնառութեան եւ ուսուցումի առումով դպրոցական կրթութեան ամբողջ մթնոլորտին վրայ ազդել: Տրուած ըլլալով որ Լիբանանի Կրթութեան Նախարարութեան հանրակրթական ուսումնական ծրագիրը քննութիւններու առումով շատ ճկուն չէ, դպրոցէն ներս անհրաժեշտ հաւասարակշռութիւնը ստեղծելու համար այլ ուղիներ պէտք է փնտռել: Որպէս այդպիսին, հայերէնագիտական նիւթերը ներուժը ունին ուսուցումի եւ ուսումնառութեան այլընտրաբային, ստեղծագործ միտքը եւ քննադատական մտածողութիւնը խրախուսող միջավայրի մը խարխիս ըլլալու:

«Ինչ կը կորսուի այս խառնաշփոթին մէջ. դպրոցի հասկացութիւնը որպէս կրթական հիմնարկ, կրթական հաստատութիւն՝ ամենալայն առումով, բան մը որ տարբեր հասկացողութիւն եւ տարբեր վերաբերում կը պահանջէ»,- բացատրեց մանկավարժ մը: Տեղեկաբերները կրկին ու կրկին մատնանշեցին տիրող ընդհանուր կրաւորական վիճակը, ամէն ինչ յեղաշրջելու վերապահութիւնը, արդէն խորապէս հաստատուած կացութիւնը, «պատասխանատու մարմիններու» կողմէ ղեկավարութեան, առաջնորդութեան պակասը եւ համայնքի տարբեր ներկայացուցչական մարմիններուն միջեւ կարգախօսներ նետելու ընդհանուր կեցուածքէն անդին անցնող, անելի լայն, անելի սերտ ու գործնական համագործակցութեան բացակայութիւնը: «Պէտք է բոլորս միասին, հաւաքաբար ռազմավարութիւն մշակենք, բայց ատիկա ընելը շատ դժուար բան է»,- փաստը ընդունեց ուրիշ կրթական գործիչ մը: Զետգիտէ բոլորին համար պարզ կը դառնայ, որ դէպի յառաջ երթալը կրթութեան ոլորտին մէջ աշխատելաճի ընդհանուր մշակոյթի հիմնաւոր եւ տեսական փոփոխութիւն կ'ենթադրէ. այդ փոփոխութեան շնորհիւ բոլոր շահագրգիռ կողմերը, ներառեալ համայնքի միութիւնները եւ կազմակերպութիւնները, կրթական խորհուրդները թէ անհատ գործիչները, ինչպէս նաեւ ծնողները պիտի անդրադառնան, որ հայ դպրոցին յաջողութիւնը ապահովելուն մէջ բոլորը ունին թէ՛ իրաւունքներ, եւ թէ՛ պատասխանատուութեան իրենց բաժինը:

Այս թնճուկային խորքապատկերին վրայ կ'առանձնանան հետեւեալ առանցքային խնդիրները. նիւթականի հարցերը, արեւմտահայերէնի անկումը, ուսուցիչներու կրթութեան խնդիրը, ծնող-դպրոց յարաբերութիւնները եւ թաղային դպրոցները միացեալ վարժարաններէն զանազանող առանձնայատկութիւնները:

1. ՆԻԹԱԿԱՆԻ ԶԱՐՑԵՐ

Երբ հարցը կու գայ նիւթական հաշուեկշիռի տեսանկիւնէն դպրոցներուն նայելուն, լուրջ ուսումնասիրութիւններու բացակայութիւնը խիստ կերպով կը զգացուի: Բոլոր դպրոցները նիւթականի բաց ունին եւ կը փորձեն զայն ծածկել տարբեր միջոցներով, գլխաւորաբար հանգանակութիւններու ճամբով: Զին դպրոցները ունին նաեւ շէնքային պայմաններու բարեկարգ պահպանումին հետ կապուած խնդիրներ: Ելեւմտային վիճակը բարդացնող բազմաթիւ ազդակներ կան, ի շարս որոնց՝ աշակերտներու տարուէ տարի նուազող թիւը, ծնողներու ուսումնավճար տալ չկարենալը կամ պարզապէս չուզելը, եւ պետութեան կողմէ պարտադրուող ամսականի անկանխատեսելի յաւելումները:

ԱՇԿԱԵՐՏՈՒԹԵԱՆ ԹԻԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ

Իր «Լիբանանահայ դպրոցը. թիւեր եւ մտորումներ» (2002) գիրքին մէջ Ժիրայր Դանիէլեանը քանի մը տասնամեակի կտրուածքով կը ներկայացնէ լիբանանահայ դպրոցներու աշակերտութեան թիւերը: Վերջին տասնամեակի թիւերուն եւ լիբանանահայ գաղութի

70-ականներու կեսերու փառքի օրերուն համեմատութեան լոյսին տակ հայկական դպրոցներու պարզած պատկերը բաւական տժգոյն կը դառնայ: Ստորեւ բերուած Աղիւսակ Ա-ը կը ներկայացնէ Դանիէլեանի բերած թիւերը, որոնց կ'աւելնան վերջին երկու տարեշրջաններունը՝ ըստ այժմու տուեալներուն:

Յստակ չէ՝ դպրեվանքերու, արհեստագիտական վարժարաններու եւ յատուկ կրթութեան դպրոցներու աշակերտութեան թիւերը ընդգրկուած էին 2001-2002-ը նախորդող տարեշրջաններու թիւերուն մէջ, թէ ոչ. անոնք մաս չեն կազմեր սակայն յետ-2002-ի թիւերուն: Քաղաքացիական պատերազմին հետեւանքով 1970-ականներու կեսերու եւ 1980-ականներու կեսերու տուեալներուն միջեւ տեղի կ'ունենան հանրագումար թիւերու կտրուկ փոփոխութիւններ: Աշակերտութեան թիւը կը նուազի 38,45%-ով, մինչ դպրոցներու նուազումը աւելի փոքր թիւ է՝ 16%: Կտրուկ փոփոխութիւններու երկրորդ ալիքը վրայ կը հասնի 1990-ականներու սկիզբին. 30%-ով կը նուազի աշակերտութեան թիւը, իսկ դպրոցներունը՝ 33,33%-ով: 2001-02 եւ 2011-12 տարեշրջաններուն միջեւ երկարող այս վերջին տասնամեակին ականատես կ'ըլլանք աշակերտներու թիւի եւս 20,5%-ով նուազումին եւ եւս երկու դպրոցի փակումին, ինչը դպրոցներու թիւի նուազումի համեմատութիւնը կը հասցնէ 6,6%-ի: 2012-2013 տարեշրջանի ամփոփիչ տուեալները տակաւին ամբողջական չեն: Բայց ենթադրուող թիւերուն վրայ կատարուած նախատեսումները ցոյց կու տան աշակերտութեան թիւի 3-6%-ի համեստ աճ: Եթէ Աղիւսակ Բ-ին մէջ նայինք տեղահանուած եւ նախորդ տարի լիբանանահայ կրթական համակարգին մէջ ներգրաւուած սուրիահայ աշակերտներու ընդհանուր թիւին, պարզ կը դառնայ, որ աճը այդ ներհոսքին հետեւանքն է: (Անցեալ երկու տասնամեակներուն իւրաքանչիւր դպրոցի աշակերտութեան թիւը տէն Յաւելուած Գ-ին մէջ):

Աղիւսակ Ա - Աշակերտութեան թիւ

| Տարեշրջան | Դպրոցներու թիւ | Աշակերտութեան թիւ |
|-----------|----------------|--------------------------|
| 1964-65 | 44 | 13 398 |
| 1974-75 | 56 | 21 000 |
| 1987-88 | 47 | 12 924 |
| 1991-92 | 45 | 11 939 |
| 2001-02 | 30 | 8 327 |
| 2011-12 | 28 | 6 618 |
| 2012-13 | 28 | 6 951-7 063 ⁵ |

Աղիւսակ Բ - 2012-13 տարեշրջանին սուրիահայ աշակերտներու լիբանանահայ դպրոցներու մէջ բաշխում

| Յարակցութիւն | Դպրոցներու թիւ | Սուրիահայ աշակերտութեան թիւ |
|--------------|----------------|-----------------------------|
| ՅԲԸՄ | 3 | 111 |
| Կաթողիկէ | 6 | 57 |
| Աւետարանական | 6 | 64 |

5. Երկու դպրոցի (Թռչնոցբոյն եւ Սահակեան-Սկրտիչեան վարժարան) 2012-13-ի թիւերը կը բացակային: 6951-ը աշակերտութեան հանրագումար թիւն է այս դպրոցներու աշակերտները չհաշուած, իսկ 7063-ը հանրագումարի կանխագնահատում մըն է այս երկու դպրոցները ներառեալ՝ ենթադրելով, որ իրենց աշակերտութեան թիւը 2011-12-ի համեմատ չէ փոխուած:

| Յարակցութիւն | Դպրոցներու թիւ | Սուրիահայ աշակերտութեան թիւ |
|---------------|----------------|-----------------------------|
| Ազգային | 9 | 268 |
| Այլ - Թեքէտան | 1 | 6 |
| Ընդհանուր թիւ | 25 | 506 |

Բացայայտ է, որ աշակերտութեան թիւի այս անկումը տասնհինգ տարի տեւած լիբանանեան քաղաքացիական պատերազմի պատճառած արտագաղթէն բացի այլ պատճառներ ալ ունի: Ծնողներուն օտար դպրոցը նախընտրելուն որպէս դրդապատճառ երկու գործօն յաճախակի կը յիշատակուին: Ընկերային-տնտեսական դժուարութիւններ ունեցող ծնողները կը նախընտրեն իրենց զաւակները դրկել թաղի պետական վարժարանը, որուն ուսումնալծարը մատչելի է: Միւս կողմէ, աւելի բարեկեցիկ ընտանիքներու ծնողները օտար դպրոցը կը նախընտրեն այլազան պատճառներով, որոնցմէ են.

- Ծնողներու որոշ քաղթենի շրջանակի մը մէջ ոչ-պետական սուղ դպրոցները հասարակական կարգավիճակի, դասակարգի խորհրդանիշ սեպելու մօտեցումը տիրական է: Ասոր կ'աւելնայ նաեւ այն կարծիքը, որ այս դպրոցներուն մէջ իրենց զաւակները երկիրի «ապագայ ղեկավարներուն» հետ նստարան պիտի մաշեցնեն:
- Հայերէն լեզուի եւ հայեցի կրթութեան հանդէպ որոշակի եւ յստակ անտարբերութիւն կայ: Բանի մը հոգի այս երեւոյթին համար նոյն օրինակը բերին. ոչ պետական օտար դպրոց մը ամաչարկած է իր նկատառելի թիւով հայ աշակերտութեան համար կազմակերպել հայերէնի դասեր՝ հաւատացած ըլլալով, որ ծնողներուն համար հետաքրքրական եւ գրաւիչ բան մը կը մատուցանէ. բայց բախած էր վերջիններուս մերժումին:
- Եվ վերջապէս, որոշ ծնողներու ընկալմամբ (հաւանաբար իրենց անձնական դպրոցական փորձառութենէն մեկնելով) աշակերտը լիբանանեան կեանքին համարկուելու պատրաստելու ամուժով հայկական դպրոցները բաւարար չափով «զինուած» չեն, եւ թուարկուող պատճառներէն մէկն ալ արաբերէն լաւ գիտնալու խնդիրն է: Այս գործօնին մասին խօսող շահագրգիռ բոլոր անձերը նաեւ նշեցին, որ մեծաւ մասամբ թիւրըմբռնում մըն է, քանի որ պատերազմի աւարտէն ի վեր շատ բան փոխուած է, եւ հայկական դպրոցներուն մէջ արաբերէնի ուսուցումը հիմա աւելի լաւ հիմքերու վրայ դրուած է:⁶

Երբ 1990-ականներուն ամբողջ Լիբանանի կտրուածքով պարզուած աւելի լայն պատկերին կը նայինք, ըստ Ժիրայր Դանիելեանի գիրքին տուեալներուն, ուղղութիւն մը կը գատորոշուի. ոչ-պետական դպրոցներու աշակերտութեան ընդհանուր թիւի նուազում եւ պետական դպրոց յաճախողներու թիւի աճ: Հայկական դպրոցներու կացութիւնը լիբանանեան իրավիճակին պրիսմակով քննելու պարագային՝ այս միտումը յստակ ցուցանիշ կը դառնայ քաղաքացիական պատերազմին անմիջապէս յաջորդող ժամանակաշրջանին ամբողջ երկրի տարածքին մոլեգնող

6. Արաբերէնի ուսուցման հետ կապուած յաւելեալ նրբութիւն մը կայ. որպէս պետական ուսումնական ծրագրի մաս՝ գրական արաբերէն կը դասուանուի (բոլոր) դպրոցներէն ներս, իսկ ամօրեայ արաբերէնը անկէ բաւական տարբեր է: Տասնամեակներ ամաչ խնդիրն մէկ երեսը Լիբանանի հայ համայնքի կրօնացումն էր, որուն հետեւանքով հայերու յաջորդական սերունդները խօսակցական արաբերէնը չէին իւրացներ՝ տուն տալով լիբանանահայերու մասին կարծրատիպերու ստեղծումին: Այսօր սակայն, ըստ մանրադէպային ապացոյցներու, այլ է պատկերը, եւ տեղւոյն քաղաքական թէ մշակութային ասպարեզներէն ներս կան յաջողած օրինակելի կերպարներ, հանրային դէմքեր: Պետք է նաեւ նշել որ, դարձեալ ըստ մանրադէպային ապացոյցներու, նախապատերազմեան տարիներուն մէկէ աւելի հայկական դպրոց, ինչպէս օրինակ Ճեմարանը, ՀԲԸՄ վարժարանները, Հայ աւետարանական գոլթեճ պետական քննութիւններուն իրենց աշակերտներուն յաջողութեան եւ յետագայ համալսարան ընդունելութեան թիւերով ոչ-պետական օտար վարժարաններուն հետ համաքայլ կ'ընթանային:

տնտեսական դժուարութիւններուն եւ մտածել կու տայ, որ հայկական դպրոցները առանձին պարագայ չեն կազմեր: Աւելի հատու վերլուծութեամբ նոր ուսումնասիրութիւն մը պիտի ցոյց տար, թէ արդեօք այս ընթացքը կը շարունակուի տակաւին Լիբանանի մէջ, եւ թէ այս միջակայքին մէջ ղուր կ'իյնան հայկական դպրոցները: Հետաքրքրական պիտի ըլլար նաեւ տեսնել, թէ արդեօք հայկական դպրոցները համատարած կերպով աշակերտ կը կորսնցնեն, թէ կան տարբերութիւններ, եւ որոշ դպրոցներ աշակերտներու կայուն թիւ ունին, իսկ ուրիշ դպրոցներ՝ նուազող:

ՈՒՍՈՒՄՆԱՎՃԱՐ

Աւելի քիչ աշակերտ ունենալը դպրոցներուն համար բնականաբար կ'արտայայտուի նուազած եկամուտով: Բայց ուսումնական վարձուցանողներու իրատեսական աչքով նայիլը կը բարդացնէ եկամուտի խնդիրը: Ուսումնականները բաւական այլազան պատկեր մը կը կազմեն, որովհետեւ որոշուած սակը կախեալ է դպրոցին տեսակէն (թաղի դպրոց, երկրորդական դպրոց, եւ այլն) եւ յաճախող աշակերտութենէն: Պուրճ Համուտի թաղային պատիկ դպրոցներուն տարեկան ուսումնական վարձը \$400-600-ի միջեւ է (արձանագրութեան ծախսերը չհաշուած), մինչ աւելի սուղ դպրոցներու պարագային ան \$1000-3500-ի միջեւ կը տատանի⁷ (2011-2012 ուսումնական տարեշրջանի ուսումնականներուն համար տե՛ս Յաւելուած 2): Յետ քաղաքացիական պատերազմեան այս ժամանակահատուածին, ընկերային-տնտեսական յետընթացով եւ անոր հետեւանքով միջին խաւի վտիտացումով յատկանշուող այս օրերուն, Լիբանանի մէջ ծնողներու վճարունակութիւնը դարձած է հասարակաց խնդիր: Ըստ հայկական դպրոցներու մեծամասնութեան՝ ուսումնական վարձը ամբողջութեամբ վճարող ծնողները ընդհանուրին 1/3-ն են: Մնացեալ երկու երրորդը կը ստանայ ամբողջ ուսումնական վարձի 20-100%-ին չափով գեղջ:

Իրենց յատուկ հանգամանքներուն բերումով 2012-13 ուսումնական տարեշրջանին սուրիահայ ուսանողներուն ուսումնական վարձի այլազան գեղջեր տրամադրուած են, ներառեալ լրիւ անվճար ուսում ՀԲԸՄ-ի դպրոցներուն պարագային եւ նկատառելի գեղջեր այլ դպրոցներու պարագային: Ամենայն հաւանականութեամբ այս կացութիւնը մօտ ապագային պիտի մնայ անփոփոխ: Այսուհանդերձ, սուրիահայ աշակերտներու թիւը ընդհանուրին մօտաւորապէս 7%-ն է, եւ ուսումնականներու ընդհանուր պատկերին վրայ աննշան ազդեցութիւն ունի: Ուսումնական խնդիրին մէջ ըստ երեւոյթին ուրիշ, բազմակողմանի հարցեր ալ կան: Բազմաթիւ տեղեկաբերներ շեշտեցին, որ եթէ ծնողներու մեծամասնութիւնը իսկապէս վճարէր, դպրոցներու նիւթականի խնդիրները լուծուած կ'ըլլային: Յաւելեցին նաեւ, որ թէեւ ճիշդ է որ ծնողներու նշանակալից մասը նիւթական դժնի պայմաններու մէջ կ'ապրի, փաստացիօրէն վճարող ուսումնականներու այս վտիտացումը այլ գործօններով ալ պայմանաւորուած է: «Ծնողները օտար դպրոցին կը վճարեն ամբողջ գումարը, նոյնիսկ երբ որ հայկական դպրոցներէն աւելի սուղ է: Հայկական դպրոցներուն պարագային խնդիրը ան է որ հայ դպրոցին համար աշակերտութեան թիւը մտահոգութիւն մըն է, հայ աշակերտը ապահովել կը ջանան, գեղջեր կը տրամադրեն, ծնողներուն վճարումի դիւրութիւններ կու տան, անոնք ալ առիթէն կ'օգտուին, կը չարաշահեն կացութիւնը», - ամենայն անկեղծութեամբ բացատրեց կրթական գործիչ մը՝ արտորոշելով որոշ ծնողներու մէջ շատ տարածուած մտայնութիւն մը. անոնք կը կարծեն, որ իրենց զաւակները հայկական դպրոց ղրկելը իրենց «արդար իրաւունքն» է:

Ուսումնականներէ գոյացած գումարի այս նուազումը լուրջ խնդիր մըն է, որ երկարատեւ հետեւանքներ ունի: Ընդդէմ է՝ հայ աշակերտը պետք չէ զրկուի հայկական դպրոց յաճախելու

*Ըստ հայկական
դպրոցներու
մեծամասնութեան՝
ուսումնական
ամբողջութեամբ
վճարող ծնողները
ընդհանուրին 1/3-ն են:*

7. Աւելի բարձր ուսումնական վարձով դպրոցները աւանդաբար միջին եւ բարձր-միջին դասակարգի հայ ծնողներուն կ'առաջարկէին իրենց ծառայութիւնները: Այսօր դժուար է այսպիսի յստակ գատորոշում ընել, որովհետեւ համատարած կերպով բոլոր դպրոցներու պարագային ալ ծնողներու երկու երրորդը չի վճարէր իր զաւակին «դպրոցականը»:

հնարաւորութենէն: Այս սկզբունքէն մեկնելով կարելի է ասելի լաւ ծրագիրներ ի գործ դնել. ուսումնաւճարը զեղչել կամ ամբողջութեամբ գերծ կացուցանել անկէ աշակերտը, անհատական մօտեցումով ամէն մէկ աշակերտին ուսումնաւճարը որոշել կիրառելով ընտանիքին կարիքաւորութեան աստիճանը եւ աշակերտին ուսումնական առաջընթացը հաշուի առնող բանաձեւեր: Հրամայական է նաեւ, որ ուսումնասիրուին նոր գործընթացներ, որոնց նպատակը դպրոցներուն հանդէպ պատկանելիութեան եւ պատասխանատուութեան շրջանակ մը ստեղծելը ըլլայ: Իսկ այս շրջանակը ծնողներուն եւ առհասարակ համայնքին այս բոլորին ասելի յանձնառու կերպով մաս կազմելու այլեւայլ հնարաւորութիւններ ընձեռնէ:

ԱՄՍԱԿԱՆՆԵՐ

«Որակեալ ուսուցիչներու պարագային խնդիրը այն է, որ չենք կրնար ըստ արժանւոյն վարձատրել գիրենք»,- անկեղծացաւ տեղեկաբեր մը: Լիբանանի Կրթութեան նախարարութիւնը ունի ամսականներու հաստատուած սանդղակ մը, որմով պէտք է որ (սկզբունքով) առաջնորդուին դպրոցները: Կառավարութիւնը պարբերաբար ուսուցիչներուն ամսականները բարձրացնելու մասին օրէնք մը կ'ընդունի: Աղիւսակ Գ-ը կը ներկայացնէ սկսնակ ուսուցիչներու ամսականներուն պետական սանդղակը:

Աղիւսակ Գ - Սկսնակ ուսուցիչներու ամսականներու սանդղակ

| Վկայական | Ամսական ԼՌ-ով | ԱՄՆ \$-ի համարժէք |
|--|------------------|----------------------|
| Նուազագոյն ամսական | 675 000 | 450 |
| Ուսուցիչներու նուազագոյն ամսական | 640 000 | 426 |
| Պաթալորեա Բ / (Baccalauréat II) | 640 000 | 426 |
| Պսակաւոր արուեստից կամ գիտութեանց (BA/BSc.) | 785 000 | 523 |
| Արհեստից պաթալորեա, ԱՊ (Baccalauréat technique, BT) | 785 000 | 523 |
| Յառաջացած արհեստագետ, ՅԱ (Technicien supérieur, TS) ⁸ | 948 000 | 632 |
| Պսակաւոր արուեստից կամ գիտութեանց + Մանկավարժի վկայագիր, ՄՎ (Teaching Diploma, TD) | 1 088 000 | 725 |
| Մագիստրոս արուեստից կամ գիտութեանց (MA/MSc.) | 1 130 000 | 753 |

Ամսականները փշոտ հարց են: Կառավարութեան առաջարկած սանդղակը դպրոցները ինչպէ՛ս կը կիրարկեն, կամ հայկական դպրոցներու ամսականները ի՞նչ համեմատութեան մէջ են օտար ոչ-պետական վարժարաններու ամսականներուն հետ. ո՞չ առաջինին վերաբերեալ թափանցիկութիւն կը տիրէ, ո՞չ ալ երկրորդին վերաբերեալ փաստերու վրայ հիմնուած՝ ապացուցայէն ուղղակի համեմատութիւն գոյութիւն ունի: Տեղեկաբերներու մեծամասնութիւնը սակայն կը նշէ այն իրողութիւնը, որ որոշ դպրոցներ ասելի բարձր ամսական կը վճարեն այն ուսուցիչներուն, որոնք

8. Զաղաքացիական պատերազմէն ետք Լիբանանի կրթութեան նախարարութիւնը հանրակրթական դպրոցին զուգահեռ հաստատած է Արհեստից եւ արհեստագիտութեան հոսք, որ կ'առաջարկէ Արհեստագիտական պաթալորեա, ԱՊ (Baccalauréat technique, BT), Յառաջացած արհեստագետ, ՅԱ (Technicien supérieur, TS) եւ Պսակաւոր արհեստից (Licence technique, LT) վկայականները: TS-ը եւ LT-ն բարձրագոյն կրթութեան վկայականներ են. LT-ն մօտաւոր համեմատութեամբ կը համապատասխանէ համալսարանական պսակաւորի վկայականին: Նախարարութիւնը ըստ երեւոյթին նաեւ կը քաջալերէ, որ մանկապարտեզի եւ նախակրթարանի ուսուցիչները արհեստագիտական հոսքի շրջանաւարտներ ըլլան՝ համալսարաններու մանկավարժութեան բաժանմունքներէն ստացած Պսակաւոր մանկավարժութեան եւ Մանկավարժի վկայագրի (ՄՎ) մասնագիտական վկայականներէն անկախ: Ասով կը բացատրուի որ BA/BSc. եւ BT ունեցողներուն ամսականները նոյն համեմատութեան վրայ են, իսկ TS-ինը ասելի բարձր սանդղակի մէջ է, քան ՄՎ չունեցող պսակաւորինը:

Երկրորդականի մէջ կը դասաւանդեն. նաեւ անոնց, որոնց դասաւանդած նիւթերուն համար ուսուցիչ գտնելը դժուար է: Հայկական դպրոցները նիւթական դժուար պայմաններու մէջ են, իսկ ամսականները տարուէ տարի անոնց ընդհանուր պարտքը աւելի մեծ թիւի վերածող մասն են: Յամառ պատմութիւններ կը շրջագային, ըստ որոնց որոշ դպրոցներ ամսականներու վճարումներուն մէջ ետ մնացած են, հին ամսականներ տակաւին չեն վճարած ուսուցիչներուն, կամ որ որոշ դպրոցներ հանգստեան կոչուած ուսուցիչներու յատկացումները միանուագ վճարումով ընելու փոխարէն (ինչպէս որ օրէնքը կը թելադրէ) վերջիններուն համաձայնութեամբ մաս-մաս կը վճարեն: Բնականաբար, երբ որ դպրոցները որակեալ ուսուցիչներ կ'ուզեն գործի առնել (ոչ միայն հայերէնագիտական, այլ բոլոր նիւթերուն համար) բայց պիտոճէի խիստ սահմանափակումներ ունին, փակ շրջան մը կը գոյանայ: Եթէ դպրոցները կը ձգտին աշակերտութեան թիւը աւելցնելու եւ դպրոցի ընդհանուր որակը բարելաւելու, պէտք է որ ի վիճակի ըլլան իրենց ուսուցիչներուն մրցունակ ամսականներ առաջարկելու: Հայերէնագիտական նիւթերու ուսուցիչներուն վիճակը բարւոք չէ. անոնց միջին ամսականը, ըստ շրջագայող մանրադէպային տուեալներուն, \$600-\$700-ի միջեւ կը տատանի, եւ տասը տարուան փորձառութեան պարագային կրնայ հասնիլ \$1100-ի: Ընդհանուր խօսակցութիւն կայ նաեւ ամսականներու յաւելումի կառավարական նոր, մօտազայ օրէնքի մը մասին: Այս մասին խօսող բոլոր տեղեկաբերներուն կարծիքով, այս նոր յաւելումը, եթէ իրականութիւն դառնայ, բազմաթիւ դպրոցներու համար աղէտալի հետեւանքներ պիտի ունենայ, ներառեալ հայկական վարժարաններուն: Խնդիրը նոյնքան լուրջ պիտի չըլլայ արդէն համբաւ եւ անցեալ ամրապնդած ոչ պետական դպրոցներուն համար, որքան աւելի պզտիկ, եւ մանաւանդ յարանուանական դպրոցներուն համար, որոնք այս կտորով աճին հետեւանքով փակման եզրին պիտի յայտնուին:

Տակաւին յստակ չէ, թէ այս օրինագիծին առաջարկի քննարկումէն վաւերացում դառնալու ժամանակացոյցը ինչ է, ոչ ալ յստակ տուեալներ կան, թէ քանի՞ առ հարիւրի մասին է խօսքը (10-էն մինչեւ 50%-ի հասնող պատահական թիւերու մասին ենթադրութիւններէ բացի): Որոշակի ու յստակ է սակայն, թէ ինչ ալ ըլլան առաջարկուող յաւելումները, հայկական դպրոցներուն համար հարուածը պիտի ըլլայ ծանր: Դպրոցները ստիպուած պիտի ըլլան ուսումնաւճարները բարձրացնելու, յատկապէս երկրորդական կարգերուն պարագային: Մէկէ աւելի տեղեկաբերներ ուսումնաւճարներու 90%-էն աւելի բարձրացում կը նախատեսեն: Բացայայտ է, որ այսպիսի յաւելումը իր հերթին հետեւանքներ պիտի ունենայ աշակերտութեան թիւին վրայ եւ սկիզբը դնէ փակ շրջաններու նոր շարքի մը:

Տարբեր աղբիւրներ նաեւ նշեցին, որ հակառակ նիւթականի մարտահրաւերին եւ հակառակ անստուգութիւններուն, ուսումնական տարուան ընթացքին տարբեր ձեռնարկներ կազմակերպելով կարելի է մեծ գումար հանգանակել, այսինքն՝ վերհանեցին այն փաստը, որ համայնքին մէջ նիւթականի աղբիւրներ կան, զանոնք խելահաս կերպով ներդնելու ուղղորդութիւն չկայ: «Բուն օգնութիւնը երկարաժամկետ արդիւնք ունեցողն է», - ըսաւ տեղեկաբեր մը՝ այսպէսով ընդօժեւելով դրամական եւ էլեւմտային պատասխանատուութեան վերաբերեալ յստակ ռազմավարութիւն մշակելու եւ այլընտրանքային, հնարամիտ լուծումներ գտնելու բացայայտ կարիքը:

2. ԱՐԵՄՏԱՅԱՅԵՐԷՆԻ ԱՆԿՈՒՄ

«Մեր արմատները չորնալ սկսած են», - նկատել տուաւ կրթական մշակ մը: «Արեւմտահայերէնը փրկելու միակերկար ժամկետ լուծումը որուն հինք ուսուցիչներ պատրաստելն է, հայերէնագիտական նիւթեր դասաւանդող որակեալ ուսուցիչներ ունենալն է, թէ՛ տեղական, թէ՛ անդրազգային առումով»:

Լեզուի անկումին վրայ ազդող գործօններուն մասին խօսող տեղեկաբերները կրկին ու կրկին շեշտեցին այդ ազդակներէն մի քանին: Առաջինը, եւ ամենէն բացայայտը, դպրոցներու

աշակերտութեան թիւի նուագումին բացասական ազդեցութիւնն է: Դպրոցներու աշակերտութեան թիւին պակսիլը ուղղակիօրէն կը նշանակէ, որ լեզուն կրթական դասական ձեւին մէջ (դպրոց, դասարան) իւրացնողներու թիւը պիտի նուազի: Այդ ալ իր կարգին պիտի նպաստէ լեզուի ընդհանուր հիւծումին: Հայերէնի մաքրախնդիր նուիրեալներէն ոմանք նաեւ կարծիք յայտնեցին, որ լիբանանահայ տպագիր մամուլը, առցանց լրատուները բծախնդիր չեն արեւմտահայերէնի մաքրութեան եւ, հետեւաբար, լեզուի անկումին շուրջ ստեղծուած ընդհանուր մթնոլորտին մէջ բարենպաստ դերակատարութիւն չունին:

Միւս կողմէ, բոլոր դպրոցները նոյն մօտեցումը չունին սախակրթարանի եւ երկրորդականի հայերէնի դասապահերու թիւին վերաբերեալ: Թէեւ բոլոր դպրոցներուն մէջ հայերէնի եւ հայերէնագիտական նիւթերու դասապահերը երկրորդականի մէջ աստիճանաբար կը նուազին՝ առաջնահերթութիւնը տալով այլ (պետական քննութիւններուն առնչուող) դասանիւթերու: որոշ դպրոցներու մէջ դասապահերու թիւին նուագումը շատ անելի կտրուկ է, քան այլոց: Աղիւսակ Դ-ն կը ներկայացնէ դպրոցներու եւ դասապահերու բաշխումի տարբեր պատկերներու համեմատական ակնարկ մը⁹: Հայերէնագիտական նիւթերը խմբուած են «հայերէնով դասապահեր» ընդհանուր մէկ մակագիրի տակ (հայերէնագիտական նիւթերու ըստ դպրոցներու մանրամասն բաշխումին համար տես Յաւելուած Ե):

Աղիւսակ Դ - Համեմատական ակնարկ շաբաթուան մէջ հայերէնագիտական դասապահերու (ընդհանուր 40 դասապահի համեմատ)

| Կարգ | Ճեմարան | Ազգային | ՅԲԸՄ | Աւետարանական (ՀԱԳ) | Կաթողիկէ (Մեսրոպեան) | Թէքէեան |
|---------|---------|---------|------|--------------------|----------------------|---------|
| Ա կարգ | 11 | 11 | 10 | 10 | 7 | 8 |
| Բ կարգ | 9 | 11 | 9 | 10 | 6 | 8 |
| Գ կարգ | 9 | 13 | 9 | 11 | 7 | 7 |
| Դ կարգ | 9 | 11 | 9 | 10 | 7 | 9 |
| Ե կարգ | 9 | 11 | 9 | 9 | 5 | 7 |
| Զ կարգ | 8 | 11 | 7 | 9 | 5 | 7 |
| Է կարգ | 8 | 9 | 7 | 8 | 5 | 7 |
| Ը կարգ | 8 | 9 | 7 | 8 | 4 | 4 |
| Թ կարգ | 7 | 9 | 6 | 6 | 2 | 3 |
| Ժ կարգ | 6 | 7 | 5 | 5 | 3 | |
| ԺԱ կարգ | 6-10 | 7 | 5 | 6 | 3 | |
| ԺԲ կարգ | 2 | 6 | 0 | 1 | 1 | |

Բազմաթիւ տեղեկաբերներ, որոնց մէջ նաեւ մէկէ անելի ուսուցիչներ, խօսեցան, իրենց բառերով, «համաշխարհայնացումի բացասական հետեւանքներուն» մասին՝ համացանցի եւ ընկերային հաղորդամիջոցներու գործածութեան սրընթաց տարածումով: Ուրիշներ այս խնդիրը շրջարկի մէջ տեղաւորեցին եւ բացատրեցին, թէ տարիներ առաջ հայերէնի գործածութեան համար «համացանցի վտանգին» մասին հրապարակային յայտարարութիւններ եղած էին: Ասոնց անմիջական հետեւանքով գրագիտութեան շրջարկի մէջ եւ մանաւանդ կրթական դրուածքներու պարագային արհեստագիտութեան կիրառումը ողջունելու փոխարէն անկէ ինքնասաստ

9. Իւրաքանչիւր դասապահի տեւողութիւնը 45 վայրկեան է: Շաբաթը բաղկացած է 40 դասապահէ:

խորթացում մը ստեղծուած է: Բազում օրինակներ բերուեցան, թէ ընկերային հաղորդամիջոցներու գործածութիւնը պատանիներու հայերէնին վրայ ինչ վնասակար ազդեցութիւն կը գործէ եւ կը տանի դէպի նոր ձեւի «անգրագիտութեան» եւ «լեզուանցումի» ոչ միայն բանաւոր խօսքին մէջ, այլ նաեւ գրաւորին: Զոս մտահոգութիւնը միայն թուային աշխարհին մէջ հայերէն այբուբենը գործածելու փոխարէն լատինատառ գրելը չէ, այլ նաեւ նոր երեւոյթ մը՝ խաչադիր տառագրումը, գրաւոր խօսքի այլ հանգամանքներու պարագային ալ (առաւելաբար դպրոցական) հայերէն բառերու մէջ լատին տառեր գրելը: Առհասարակ, անկախաբար անհատական պարագաներէն եւ գործող ազդեցութիւններէն, գրեթէ ամէն մարդ խօսեցաւ շարադրանքի սահունութեան նկատառելի պակասին մասին:

Վերոնշեալ բոլոր մտահոգութիւններուն հանրագումար հետեւանքները ցոյց կու տան, որ պատանիներուն կողմէ հայերէնի իւրացումը, մայրենիին տիրապետելը լուրջ նահանջ կ'ապրի: Զետաքրքրական է սակայն, որ միայն հատուկէնտ մարդիկ արտայայտուեցան լեզուի գործածական ըլլալուն, իրական կեանքին առնչուելուն մասին եւ հարց բարձրացուցին, թէ երիտասարդներու կողմէ այս յատկանիշները ինչպէս կ'ընկալուին: Շատ բան չըսուեցաւ նաեւ գրագիտութեան եւ դասաւանդման կերպերուն միջեւ յարաբերակցութեան մասին, կամ այդքան վերապահումով դիմաւորուած «չարաբաստիկ» ընկերային հաղորդամիջոցները եւ թուային այլ հարթակները ուսումնառութեան ու ուսուցման միջավայրերու մէջ ներառելով լուծումներ գտնելու մասին: Բացայայտ է, որ երիտասարդութիւնը հայերէնը չ'ընկալել որպէս գործածական լեզու: Բայց հարցականի տակ չեն դրուիր այս երեւոյթին ակունքային պատճառները: Ծաղկում ապրելու համար լեզու մը պետք է գործածական ըլլայ եւ առօրեայ կեանքին առնչուող: Իրականութեան մէջ ինչպէ՞ս կը դասաւանդուի հայերէնը: Աշակերտները հայերէնով որքան ոչ դասագրքային, իրական կեանքին առնչուող ընթերցում կամ գրառում կ'ընեն՝ դպրոցէն ներս ըլլայ թէ դուրս: Լեզուին հետ ինչպէ՞ս կը վարուին, որքան ստեղծագործաբար կը գործածեն զայն: Զայերէնը որքանով մաս կը կազմէ իրենց առօրեայ կեանքին: Ինչպէ՞ս կրնանք հայերէնը վերածել իրենց համար կենսաթրոօն լեզուի մը, որ հաղորդ է դասաւանդման նորարարութեան, համացանց մուտքին, կրթութեան մէջ արհեստագիտութեան ներմուծումին. ահա՛ թէ որ հարցերը պետք է դրուին:

3. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Այս բաժինը լիբանանահայ կրթական ընդհանուր համակարգէն ներս ուսուցիչներու կրթութեան երեք կողմ կը քննէ. համայնքէն ներս մօտ անցեալին գոյութիւն ունեցած կամ տակաւին գործող հիմնարկներու կողմէ իրագործուող այլեւայլ ծրագիրները, ուսուցիչներու կրթութեան հետ կապուած այժմու ընկալումները եւ ուսուցիչներու կարծիքներն ու տեսակետները:

ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՈՂ ԱՅԼԵԲԱՅԼ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Թէեւ հայկական դպրոցները այժմ որեւէ նիւթ դասաւանդող ուսուցիչ գործի առնելու համար կը պահանջեն որ թեկնածուն առնուազն Պսակաւորի կոչում եւ Մանկավարժի վկայագիր (ՄՎ) ունենայ, երբ որ հարցը գայ հայերէնագիտական նիւթերու դասաւանդումին, խնդիրը կը բարդանայ զանազան պատճառներով: Զայերէնագիտական նիւթերը դասաւանդող ուսուցիչներէն շատերը այսօր չունին վաւեր համալսարանական աստիճան: Բայց կրնայ ըլլալ որ շրջանաւարտ են տարբեր հիմնարկներու կողմէ կազմակերպուած զանազան ուսումնական ծրագիրներու, որոնք Լիբանանի Կրթութեան նախարարութեան կողմէ պաշտօնական ճանաչում կրնան ունենալ կամ չունենալ: Օրինակ, Ազգային վարժարաններու ուսուցիչներէն շատերը Զամազգայինի հայագիտական բարձրագոյն հիմնարկի շրջանաւարտ են (այժմ փակուած): Ներքին կարգով իրենց վկայականը կը հաշուի Պսակաւորի համագործակցութեամբ, պայմանով, որ նախքան Զայագիտական հիմնարկի ուսանող ըլլալը

ձեռք ձգած ըլլան պաքալորեա Բ-ի վկայական: Նոյն կերպ ալ վերջին տարիներուն մանկապարտեզի եւ նախակրթարանի ուսուցիչներէն ոմանք Խաչեր Գալուստեան մանկավարժական կազմաւորումի կեդրոնի շրջանաւարտ են, իսկ Մեսրոպեան վարժարանը մանկապարտեզի մէջ գործի ընդունած է իր իսկ վարժարանի արհեստագիտական հոսքի նախադպրոցական կրթութեան շրջանաւարտները: Ստորեւ բերուած է ցանկ մը հայերէնագիտական դասանկութրու եւ ուսուցիչներու կրթութեան հետ առնչուող անցեալին գործած կամ տակաւին գործող այլեայլ նախաձեռնութիւններու:

1. ՀԲԸՄ Երուանդ Յիւսիսեան հայագիտական հիմնարկ - Ներկայիս ոչ գործօս (1994-ին փակուած). այս հիմնարկը հայագիտական կրթութեան յետ-դպրոցական սկիզբը քառամեայ, ապա երկու տարուան սահմանափակուած ուսումնական ծրագիր մը կ'առաջարկէր: Այս ծրագիրը Լիբանանի Կրթութեան նախարարութեան կողմէ պաշտօնական ճանաչում չէ ունեցած:

2. Համազգայինի հայագիտական բարձրագոյն հիմնարկ - Ներկայիս ոչ գործօս (փակուած է 2005-ին): Այս հիմնարկի ուսումնական ծրագիրը սկզբնական շրջանին քառամեայ էր, ապա դարձաւ եռամեայ տեւողութեան, որուն կ'աւելնար տարի մը Երեւանի պետական համալսարանէն ներս: Ան կ'առաջարկէր գրականագիտական եւ պատմագիտական զոյգ հոսքեր: Լիբանանի կրթութեան նախարարութեան կողմէ պաշտօնական ճանաչում չէ ունեցած:

3. Համազգայինի ուսուցիչներու պատրաստութեան ծրագիր - Այս նոր նախաձեռնութեան նպատակը շահագրգիռ թեկնածուներուն Երեւանի պետական համալսարանէն ներս հայագիտական նիւթերու երկու տարուան մագիստրոսական ուսման կրթաթոշակ մը կ'առաջարկէ՝ իրենց երկիրին մէջ Պսակաւորի կոչում եւ ՄՎ ձեռք ձգելէ ետք: Նախատեսուած է տարին առաւելագոյնը երեք ուսանողի համար:

4. Խաչեր Գալուստեան մանկավարժական կազմաւորումի կեդրոն - 1987-ին հիմնադրուած եռամեայ այս ծրագիրը սկզբնական շրջանին գործած է որպէս ապագայ ուսուցիչներու կրթութեան կեդրոն՝ համակարգուած ձեւով աշխատելով արդէն գործող հայագիտական կրթական ծրագիրներու հետ (Հիւսիսեան, Համազգային, Հայկազեան համալսարան) եւ առաւելաբար կեդրոնացած է դասաւանդման կերպերու վրայ: Տարիներու ընթացքին ան վերաճած է արդէն աշխատող ուսուցիչներու կրթութեան կեդրոնի եւ ապահոված է Կրթութեան նախարարութեան ճանաչումը՝ Արհեստներու եւ արհեստագիտական հոսքի ՅԱ վկայականին պատրաստելով իր ուսանողները: Կեդրոնի շրջանաւարտներէն շատերը մանկապարտեզի կամ նախակրթարանի ուսուցիչ են:

5. Կրթական եւ հայագիտական ծրագիրներու գրասենեակ - Անթիլիասի կաթողիկոսարանէն ներս հաստատուած այս գրասենեակին առաքելութիւնը լիբանանահայ դպրոցներու կրթական համակարգին եւ հայերէնագիտական դասանկութրու դասաւանդման կերպերուն վերաբերող նախագիծներու համակարգումն է: Համաձայն իրենց առաքելութեան սահմանումին՝ գրասենեակէն ներս «պիտի դասաւորուին տարեկան համագումարներն ու կրթական եւ ուսումնական կեանքին հետ առնչուող հրատարակութեանց վերահսկողութիւնը»:

6. Մեսրոպեան արհեստից վարժարան - Վարժարանը կ'առաջարկէ նախադպրոցական կրթութեան Արհեստից պաքալորեա (ԱՊ) եւ Յառաջացած արհեստագետ (ՅԱ)-ի պատրաստող դասընթացք: Վարժարանին մանկամտուրին եւ մանկապարտեզին մէջ աշխատող դաստիարակներուն մեծ մասը այս հոսքի շրջանաւարտ են: Ստեղծուած է հայերէնով դասաւանդող յատուկ ուսումնական ծրագիր՝ ուղղուած մանկապարտիզականութեան հայեցի կրթութեան ՅԱ աստիճանի պատրաստութեան:

7. Սէն Ժոզէֆ համալսարան - Այս համալսարանի հայագիտական ամպիոնը փակուած է 1975-ին: Տարբեր տեղեկաբերներ խօսեցան այս հին ծրագիրը մասամբ կամ ամբողջութեամբ վերականգնելու փորձերու մասին՝ զայն կապելով Սէն Ժոզէֆ համալսարանի մանկավարժութեան բաժանմունքին հետ:

8. Հայկազեան համալսարան - Հայկազեան համալսարանը ունի ապագայ եւ արդէն աշխատող ուսուցիչներու կրթութեան ամուր հաստատուած ծրագիր մը, որ կը գործէ իր Մանկավարժութեան բաժանմունքէն ներս: Ունի նաեւ հայագիտական ուսմանց բաժանմունք մը: Ապագայ ուսուցիչներու ծրագիրը կ'առաջարկէ տարբեր ուղղութիւններու մէջ մանկավարժութեան պակասութիւնը աստիճան, ներառեալ հայագիտութեան, ինչպէս նաեւ Մանկավարժի վկայագրի (ՄՎ) պատրաստող ծրագիր մը: ՄՎ-ի համար նուազագոյնը 18 միաւոր կը պահանջուի: Համալսարանը նաեւ Մանկավարժութեան մագիստրոսի երեք կրթական ծրագիր կ'առաջարկէ՝ կրթական վարչարարութիւն եւ վերահսկում, կրթական-հոգեբանական խորհրդատուութիւն եւ յատուկ կրթութիւն:

Այլազան շահառուներուն միջեւ յստակ համախոհութիւն չկայ, թէ ինչպէս պէտք է պատկերացնել կամ ինչպէս պէտք է ստեղծել համագաղութային կուռ եւ համակարգուած ծրագիր մը, որ ուղղուած ըլլայ բոլոր ուսումնական հաստատութիւններուն կարիքներուն եւ պատրաստէ ապագայ ուսուցիչներ. այս ապագայ ուսուցիչները պէտք է մէկ կողմէ քաջածանօթ ըլլան կրթութեան փիլիսոփայութեան հիմունքներուն եւ դասաւանդման տարար մեթոտաբանութիւններուն, միւս կողմէ պէտք է նաեւ քաջ տիրապետեն հայագիտական եւ հայերէնագիտական նիւթերուն: Որոշ շահառուներ կը մտածեն, որ ապագայ ուսանողները պէտք է Հայաստանի բարձրագոյն կրթութեան հաստատութիւններէն ներս ուսանին, ոմանք ալ խօսեցան տեղւոյն համալսարաններուն մէջ առկայ հնարաւորութիւններուն մասին, ինչպէս օրինակ Հայկազեանի կամ ՍԷՆ Ժոզէֆ համալսարանի: Այնպէս կ'երեւի, որ ՅԱ-ի պատրաստող ծրագիրները պահանջարկի կարելոր բաց մը կը լրացնեն տեղւոյն վրայ եւ տեղական ուժերով: Սակայն լաւ ուսումնասիրուած համալսարանական ուսման վրայ հիմնուած ծրագիր մը, որ կ'առաջարկէ ապագայ եւ արդէն աշխատող ուսուցիչներու կրթութիւն, պիտի ապահովէ շարունակականութեան, սերնդափոխութեան եւ կրթական տարարութեան շուրջ կեդրոնացած մանկավարժական տեսակայունութիւն: Վերոնշեալ ծրագիրը ոչ միայն Լիբանանի համար կարելոր նախաձեռնութիւն մը կ'ըլլայ, այլ նաեւ իր ազդեցութիւնը կ'ունենայ սփիւռքեան այլ համայնքներու վրայ, թէ իբրեւ օրինակ, եւ թէ որպէս աշխարհասփիւռ հայ համայնքներուն համար ապագայ ուսուցիչներ պատրաստող նախագիծ: Որպէսզի այսպիսի ծրագիր մը յաջողի, պէտք է նաեւ որ ան հրապարակի վրայ արդէն գոյութիւն ունեցող բոլոր ջանադրութիւններուն համակարգողը ըլլայ՝ համագործակցութեան ոգիով, խուսափելու համար անելորդ կրկնութիւններէ:

ԴԱՍԱԲԱՆԴՈՒՄ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ. ԱՅԺՄՈՒ ԿԱՅՈՒԹԻՒՆ

Տրուած ըլլալով որ Լիբանանի բոլոր հայկական դպրոցներուն հայերէնագիտական նիւթերու ուսուցիչներուն տարիքային միջին թիւը 40-45 տարեկանն է՝ պարզ է որ ամենէն հրատապ մարտահրաւերներէն մէկը սերնդափոխութեան խնդիրն է: «Ր՞վ պիտի ըլլայ վաղուան ուսուցիչը». ահա բազմիցս հնչած հարցումը: Նոյնքան կարելոր է սակայն, որ այդ հարցումը հռետորական չհնչէ, այլ տեղաւորուի իր շրջարկին մէջ եւ քննուի, թէ իրականութեան մէջ ուսուցիչներու ներկայ կացութիւնը ի՞նչ կը պարզէ, մանկավարժի մասնագիտութիւնը ինչպէս կ'ընկալուի հանրութեան կողմէ, ուսուցիչները զօրակցական ի՞նչ գործընթացներու կրնան ապաւինիլ եւ փոփոխութեան ի՞նչ հնարաւորութիւններ կան, որպէսզի ուսուցչութեան հաւանական թեկնածուներուն համար պարզուող հեռանկարները, կրթական համակարգէն ներս գոյութիւն ունեցող կառոյցներուն մէջ մասնագիտական աճի եւ առաջընթացի առումով, իրատեսական հայեացքով գնահատուին:

«Ուսուցչութիւնը իբրեւ մասնագիտութիւն, իբրեւ ասպարեզ պէտք եղած գնահատանքին չ'արժանանար:»

Սկսելու համար՝ Լիբանանի հայկական դպրոցներուն եզակի մէկ յատկանիշը բոլոր դասանիւթերուն համար հայ ուսուցիչ նախընտրելն է: Այս մէկը կարելոր գործօն կը սեպուի, մէկ

բաղկացուցիչը դպրոցին ջամբելիք հայեցի դաստիարակութեան ընդհանուր պատկերացումին, երբ ինքնութեան խնդիրը կը թափանցէ դպրոցի ամբողջ ներքին կառոյցին եւ անոր բոլոր քայլերուն մէջ: Տարբեր տեղեկաբերներ նաեւ ըսին, թէ ինչպէս աստիճանաբար անելի դժուար կը դառնայ ոչ հայերէնագիտական դասանիւթերու համար ապագայ ուսուցիչներ գտնելը: Պատճառը այն չէ, որ մանկավարժութեան հայ ուսանողներու պակաս կայ առհասարակ, այլ որ անոնք կը նախընտրեն շրջանաւարտ ըլլալէ ետք ուրիշ տեղ աշխատիլ, օտար դպրոցներու մէջ: Եւ իրօք, Լիբանանի առնուազն մէկ համալսարանի մանկավարժութեան հայ ուսանողներու շօշափելի թիւը յստակ հայելին է այն փաստին, որ երիտասարդ լիբանանահայերը հետաքրքրուած են մանկավարժութեամբ եւ անոր տարբեր մասնագիտացումներով: Մանրադէպային վկայութիւնները նաեւ կը հաստատեն այն իրողութիւնը, որ այս շրջանաւարտներուն համար պահանջարկ կայ, եւ որ զանոնք գործի առնելու հետամուտ են օտար ոչ պետական վարժարանները, որոնք կանուխեն կը «հաւաքագրեն» զանոնք անպաշտօն ճամբաներով: Կրթական մշակ մը նկատեց. «Շրջանաւարտները այդ դպրոցները կ'երթան, որովհետեւ անոնք զիրենք փնտռած են եւ 25-էն մինչեւ 50% անելի բարձր ամսական կը վճարեն: Ըստ շրջանաւարտներուն՝ իրենք նաեւ իրենց սորված մանկավարժական նոր մեթոտները կրնան հոն իսկապէս կիրառել, բան մը, որ նոյն տարողութեամբ պիտի չկարենային ընել հայկական դպրոցներէն ներս»:

Որպէս գլխաւոր խնդիրներ, որոնք կը նպաստեն, որ երիտասարդ հայ մանկավարժները հայ դպրոցներէն դուրս գործ փնտռեն, տեղեկաբեր մը թուեց համայնքին եւ դպրոցական համակարգին մէջ ուսուցիչի կարգավիճակի խնդիրը, ինչպէս նաեւ դասաւանդելու հանդէպ,

ուսուցիչի մասնագիտութեան հանդէպ որդեգրուած ընդհանուր կեցուածքը:

*«Մենք չենք գիտեր
երիտասարդ
մասնագետները
ինչպէս ներգրաւենք
մեր կառոյցներուն
մէջ եւ ինչպէս
ընենք, որ իրենք հոն
մասնագիտական
առումով աճ ապրին:»*

«Ուսուցչութիւնը իբրեւ մասնագիտութիւն, իբրեւ ասպարեզ պետք եղած գնահատանքին չ'արժանանար: Ուրիշ խնդիր մըն ալ. հայկական դպրոցներուն մէջ աշխատող ուսուցիչներու բաւական մեծ թիւ մը համալսարանաւարտ է, այո, բայց բաւարար չէ այդ: Դասաւանդող ուսուցիչներուն մանկավարժական բովանդակութեան գիտելիքի պակասը կայ: Խնդիրը միայն դասանիւթը լաւ գիտնալը չէ, այլ նաեւ մանկավարժական կերպը, հնարքները, թէ ինչպէս պետք է մօտենալ այդ դասանիւթի պարունակութեան: Պատմութիւնը ինքզինքը կը կրկնէ, անանդոյթը կը կրկնուի, եւ քանի որ շատոնց է որ այսպէս է, մարդիկ այս մանկավարժական գիտելիքի պակասը չեն դիտեր որպէս խնդիր, որովհետեւ ուսուցիչներու մեծամասնութիւնը միշտ ալ մանկավարժական կրթութիւն չէ

ունեցած: Չկան օրինակելի տիպարներ որպէս այդպիսին, եւ այդ պատճառով այս ընկալումը իր «դիրքը չի գիջանիր», - բացատրեց ան:

Արդ, պատճառները, թէ ինչո՞ւ լիբանանահայ կրթական հաստատութիւնները չեն յաջողիր հրապուրել եւ իրենց թով պահել որակեալ երիտասարդ ուսուցիչները, ունին նիւթական, մասնագիտական եւ բարոյական հարթութիւններ: Եւ ասոնք բոլորն ալ ցուցանիչ են այս հաստատութիւններուն կողմէ մանկավարժական տեսակայունութիւն ապահովելու ուղղուած երկարաժամկետ եւ կուռ ծրագրումի պակասի: Մէկէ անելի տեղեկաբերներ նշեցին, որ դպրոցէն ներս «մթնոլորտը բարենպաստ չէ»: Մանկավարժութիւն ուսանած երիտասարդ շրջանաւարտները մասնագիտական աճի առիթ չունին, չկայ բարոյական նեցուկ, չունին մենտորներ իրենց կողքին, առհասարակ արձագանգ չկայ, որ իրենց աշխատանքը գնահատուած է, որ նոր մտածելակերպերու առումով իրենց ներդրումը կարելոր է: Յիշեցին դէպքեր, երբ հակառակ անոր որ երիտասարդները ունեին պատշաճ որակաւորումները եւ իսկապէս հետաքրքրուած էին իրենց ասպարեզով, դպրոցը նախընտրած էր գործի առնել «անելի փորձառու աւագ» ուսուցիչներ: Այս «աշխատանքային սովորութիւնները» բոլորն ալ ի յայտ կը բերեն լուրջ անդաշնութիւններ եւ ծրագրումի բացակայութիւն սերնդափոխման ռազմավարութեան մշակման մէջ:

Մասնագիտական աճի եւ զարգացումի խնդիրը միայն դասաւանդումի, ուսուցումի խնդիր չէ. ան կը վերաբերի նաեւ կրթութեան ոլորտին մէջ առաջնորդումին եւ կրթական գործը ղեկավարելուն: «Յաջողելու համար հաստատութեանդ մէջ բանալի մարդիկ, առանցքային անձեր պետք է ըլլան: Անհատին յաջողութիւնը չէ, խումբինն է: Լաւ ղեկավար պետք է, այո, բայց իր խումբն ալ կարեւոր է», - շեշտեց գրուցակից մը: Կրթական հաստատութեան լաւ առաջնորդը գիտէ ինչպէս աշխատիլ ապակեդրոն ձեւով, ինչպէս յանձնարարութիւններ եւ լիազօրութիւններ բաշխել, ինչպէս ստեղծել կուռ խումբ եւ անոր փոխանցել աշխատանքի ամբողջ բարոյագիտութիւնը, ներառեալ վերջինիս սիրտը կազմող համագործակցելու, պատասխանատու ըլլալու, սխալներուն եւ իրագործումներուն տերը ըլլալու արժէքները, արժէքներ, որոնք իրենց կարգին կը տանին տեւակայունութեան եւ այնքան անհրաժեշտ սերնդափոխութեան: Երբ տնօրէնը միայն դպրոցի դրամական խնդիրներուն մէջ խրուած-խճճուած է, չի կրնար կողմնորոշուիլ, թէ դպրոցի կրթական եւ մանկավարժական հիմնառանցքին վրայ իր կեդրոնական դերը ինչ պետք է ըլլայ: Իսկ այս, ի վերջոյ կը դառնայ վնասաբեր եւ կը ծնի այլ փակ շրջան մը եւս:

Լիբանանի բոլոր հայկական դպրոցներէն միայն մեկուն տնօրէնը մագիստրոսական կրթութիւն ունի կրթութեան կառավարման ոլորտին մէջ: Տարբեր դպրոցներ իրենց տնօրէններուն համար կարճատեւ աշխատանոց կը կազմակերպեն, առաւելագոյնը՝ տարին քանի մը հանդիպում: Կրթութեան ոլորտին մէջ առաջնորդող ըլլալը աւելի խորքային մօտեցում եւ աւելի խորացած կրթութիւն կը պահանջէ, որ ուսումնական տարեշրջանին ընթացքին մի քանի աշխատաժողովի ճամբով կարելի չէ ապահովել: Որոշ տնօրէններ իրենք կը գիտակցին թէ որքան լուրջ է կացութիւնը, եւ բացայայտօրէն արտայայտուեցան այս ոլորտին մէջ մասնագիտական զարգացումի, մասնագիտական հմտութիւններու խորացման անհրաժեշտութեան մասին: Հետաքրքրական է նաեւ, որ գրեթէ բոլոր տնօրէնները շեշտեցին որակեալ ուսուցիչներու կարիքը եւ դպրոցէն ներս անոնց ներկայութեան անհրաժեշտութիւնը:

Այս կարեւոր, աւելի լայն ու աւելի համընդգրկուն շրջարկին մէջ է որ կը ծուարի հայերէնագիտական նիւթերու ուսուցիչներու պարագան: Եթէ երիտասարդ, որակեալ մանկավարժները դեպի հայկական կրթական համակարգը հրապուրելը հետզհետէ աւելի դժուար է, հայերէնագիտական նիւթերու ապագայ ուսուցիչները աւելի ծանր պայմաններու դէմ յանդիման կը յայտնուին: Ճիշդ է, այս մասնագիտութեան նոր շունչ հաղորդելու կարիքը բացայայտ է, սակայն, վերը թուարկուած բոլոր պատճառներուն բերումով, աւելի ու աւելի դժուար կը դառնայ երիտասարդ անձեր հայերէնագիտական նիւթերու դասաւանդման ոլորտ ներգրաւելը: Մեծ ճիգ չի պահանջուիր պատկերացնելու համար, որ հաւանական թեկնածուները հայերէնի դասաւանդումը իբրեւ ասպարեզ ընտրելը կը զուգակցեն զոհաբերումի, անօգնական վիճակի եւ ծուղակը ինկած ըլլալու զգացողութեան հետ: Ինչը պիտի մղէ երիտասարդ արհեստավարժ մանկավարժը պայքարելու այս թնճկային ու լճացած կացութեան դէմ եւ հայերէնի ուսուցիչ դառնալու «զերագոյն զոհաբերութիւնը» կատարելու: Եւ ինչո՞ւ, նախ եւ առաջ ինչո՞ւ ուսուցչութիւնը օրինաւոր, պատուաբեր մասնագիտութիւն համարուելու փոխարէն պիտի ըլլայ «զոհաբերութիւն»:

Չկայ հեզասահ սերնդափոխութիւն ապահովելու նպատակով կազմուած փոխադրուած, դասաւորուած կարգադրութիւն մը, որ դրուի գործադրութեան. ահա թէ ինչ կը մատնանշեն բոլոր ապացոյցները: Իսկ սերնդափոխութիւնը չի կրնար տեղի ունենալ երկարաշունչ ծրագրումի բացակայութեան պարագային, դատարկ միջոցին մէջ: Անհրաժեշտ է ապագայ եւ արդէն աշխատող ուսուցիչներու կրթութեան լաւ ուսումնասիրուած, լաւ կազմուած ռազմավարութիւն մը, որուն մէջ այս բոլոր բաղադրիչները բնական եւ կենդանի ձեւով հիւսուած ըլլան իրարու, զիրար լրացնելով եւ հզօրացնելով կազմած ըլլան մեկ ամբողջութիւն: Այս հաւասարապէս կը վերաբերի թէ՛ հայերէնագիտական նիւթերուն, թէ՛ միւս դասանիւթերուն: Երբ կան ուսուցչական կազմը համալրելու գործող ծրագիրներ, որոնք ռազմավարականօրէն ուղղուած են մանկավարժութեան

մտազայ շրջանաւարտներուն, երկարակեցութիւնն ու տեւակայունութիւնը կրնան դառնալ իրատեսական նպատակ: Ռազմավարութեան այսպիսի կազմումը կ'ենթադրէ յղացքային փոփոխութեան ենթարկել ուսուցման եւ ուսումնառութեան շուրջ կեդրոնացած աշխատելաճոճը:

Կրթութեան ոլորտի ամենաեական մտահոգութիւններուն մասին երբ կը խօսէր, տեղակաբեր մը շատ դիպուկ նկարագրեց, թէ որքան ճգնաժամային է կացութիւնը. «Երբ արհեստավարժ կրթական գործիչ մը մանկավարժական խնդիրի մը մասին կարծիք տայ, փոխանակ ըստ արժանւոյն գնահատուելու, այդ տեսակետը կ'երթայ կ'աւելնայ կարծիքներու կոյտին: Այսպէս է ոչ միայն ուսուցչութեան իբրեւ մասնագիտութիւն վերաբերող խնդիրներուն պարագային, այլ նաեւ այլ կարեւոր մանրամասնութիւններու. օրինակի համար, ուսումնական ծրագիր ըսելով ի՞նչ կը հասկնանք, ի՞նչ կը դասաւանդենք, ինչո՞ւ, ինչպէ՞ս: Այս կեցուածքը ամեն ինչի պարագային տիրական է: Ասոր մէջ մեծ խնդիր է նաեւ, որ մենք լաւ չենք հասկցած մեր իսկ ոչ բացայայտ ուսումնական ծրագիրները, կ'ուզեմ ըսել մեր ներակայ ուսումնական ծրագիրները: Շատ կարեւոր է որ մենք նախ ճշգրիտ, միանշանակ, բացայայտ եւ գիտակից կերպով սահմանենք մեր ներակայ ուսումնական ծրագիրը, քննարկենք զայն, որպէսզի նոյնքան ճիշդ կերպով հասկնանք թէ որեւէ ուրիշ անձէ կամ մարմինէ մենք ինչ ակնկալիքներ ունինք: Օրինակի համար «Յայտեցի դաստիարակութիւն» ի՞նչ ըսել է, ի՞նչ կը հասկնանք «հայտեցի դաստիարակութիւն» ըսելով: Ամեն մարդ տարբեր բան կը հասկնայ, եւ բնական է, որ այդպէս ըլլայ, բայց յստակ ձեւակերպում չկայ, թէ իրականութեան մէջ ինչ է»: Դպրոցի մը ներակայ ուսումնական ծրագիրին մէջ կը մտնեն այն սկզբունքները, կեցուածքները, համոզմունքներն ու արժեքները, որոնք անուղղակիօրէն կը փոխանցուին աշակերտներուն: Տեղեկաբերը հոս կ'ախտորոշէ շատ կենսական խնդիր մը. ան կը վերհանէ եւ կ'ընդգծէ այն նշանակալից դերակատարութիւնը, որ կրթական հետազոտութիւնը եւ գիտա-ուսմունքային աշխատանքը կրնան ունենալ «կրթութիւն» բնաբանը համայնքէն ներս քննարկումի առարկայ դարձնելու մէջ՝ ըլլայ ուսումնական շրջանակներու, ըլլայ առհասարակ հանրութեան: Այս մէկը եական քայլ մըն է՝ մանկավարժական նպատակները եւ թիրախները ձեւակերպելու համար, նաեւ տեսնելու, թէ ինչպէ՞ս կարելի է զանոնք իրականութիւն դարձնել՝ յատուկ սփիւռքի առանձնայատկութիւններուն համար մշակուած կրթական համակարգի մը ճամբով:

ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԵՒ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ

Կենսականօրէն կարեւոր է, որ ուսուցիչի կարգավիճակներու եւ որակաւորումներու այս անելի լայն շրջարկին մէջ ականջ դնենք ուսուցիչներուն կարծիքներուն եւ տեսակետներուն: Յայտեցիագիտական նիւթերու ուսուցիչները այս մթնոլորտին մէջ իրենք իրենց մասին ինչպիսի՞ ընկալում ունին, առանց պատշաճ վարձատրութեան, առանց ընդհանուր գնահատանքի, առանց մասնագիտական աճի այս մթնոլորտին մէջ, որ բացայայտօրէն կը յանգի լիազօրագուրկ եղած ըլլալու զգացողութեան: Ի՞նչ կարծիք ունին սերնդափոխութեան խնդիրին վերաբերեալ ծրագրումի բացին մասին: Ի՞նչ փոփոխութիւններ, ի՞նչ քայլեր, ի՞նչ նախաձեռնումներ պիտի փափաքէին որ իրականացուէին:

Ուսուցիչներէն շատերը շատ անկեղծօրէն խօսեցան իրենց կացութեան եւ տեւական մտահոգութիւններուն մասին, ախտորոշեցին առանցքային խնդիրներուն շրջանակները:

Կրկնուող նկատառում մը հնչեց, որ կը վերաբերէր ուսուցիչներէն եղած հանրային ակնկալիքներուն՝ թէ կրթական հաստատութիւններէն ներս, թէ հանրութեան մէջ առհասարակ: «Յայ ուսուցիչը գերմարդկային ոյժ պէտք է ունենայ [տոկալու համար]», - ըսաւ ուսուցիչ մը, իսկ այլ դասատու մը նկատել տուաւ. «Յայ ուսուցիչը հասարակ մահկանացու է, գերբնական էակ չէ»: Երկուքն ալ կ'ակնարկէին «հայ ուսուցիչ» յղացքին շուրջ հիւսուող յարաճուն պատասխանատուութիւններու

*Կենսականօրէն
կարեւոր է, որ ականջ
դնենք ուսուցիչներուն
կարծիքներուն եւ
տեսակետներուն:*

բարդ ամբողջութեան եւ հայ ուսուցիչի խորհրդանշական բաղադրեալ կերպարին. հայ ուսուցիչը մայրենիի պահապանն է, սերունդէ սերունդ փոխանցուած ժառանգութիւնը աւանդողը, ինքն է, որ մատաղ սերունդին մէջ կը ներարկէ ազգային ինքնութեան, ազգային պատկանելիութեան զգացումը. հայ ուսուցիչը պէտք է աշխատանքի ժամերէն ետք ալ աշխատի, պէտք է ամէն ինչ զոհաբերէ պարտականութեան կանչին. խոշոր պատառ մը, մանաւանդ երբ կը տեսնենք, թէ ինչ պայմաններու մէջ կ'աշխատի ուսուցիչներու մեծամասնութիւնը: «Որքան նուիրուիս, ինչքան ալ տաս, միշտ աւելին կ'ակնկալուի քեզմէ: Բայց ես ալ իմ անձնական կեանքս ունիմ», - սիրտը բացաւ ուսուցիչ մը: «Ոչ դադար, ոչ հանգիստ, ոչ զբօսանք, ոչ արձակուրդ», - աւելցուց ուրիշ մը: Խօսքը գերյագեցած դասացուցակին, անկէ անդին շարունակուող ծանրաբեռնուած աշխատանքի ժամերուն մասին է, որովհետեւ յաճախ հայերէնի ուսուցիչները մշտառկայ յենարանի տեղ կը դրուին, եւ կ'ակնկալուի, որ մասնակցին այլեւայլ ձեռնարկներու կազմակերպումին: Եւ երբ վարձատրութեան սանդղակին վրայ կը տեսնենք, թէ որքան ցած են ամսականները, հասկնալի է, թէ ինչէն կը ծնի ուսուցիչներուն վրդովմունքը: «Չայ ուսուցիչներով յաճախ կը խօսիմք՝ օտարը մեզմէ աւելի կը գնահատուի: Ուշ կու գայ դպրոց, կանուխ տուն կ'երթայ, ակնկալիքները բաւարարելու բեռը չունի: Իսկ մենք, կու տանք ու կու տանք, փոխարէնը՝ ոչինչ», - նեղսրտեցաւ ուսուցիչ մը՝ մատնանշելով հայ եւ օտար ուսուցիչներէն անշատ եւ անհաւասար ակնկալիքներ ունենալու տարածուած կեցուածքը:

*«Չայ ուսուցիչը
հասարակ մտկանացու
է, գերբնական էակ չէ:»*

Ակնկալիքներու բեռը, վարձատրութեան չափը, այս ընդհանուր ընկալումները իրարու կցուելով ուսուցիչի ասպարեզի անբարենպաստ պատկերում մը կը ստեղծեն: Յատկապէս հայերէնագիտական նիւթերու ուսուցիչը պայծառ գիծերով չի ներկայանար: Կրթական բոլոր մշակներն ալ կրկին ու կրկին անդրադարձան այս խնդիրին՝ մատնանշելով սերնդափոխութեան վրայ անոր ունեցած բացասական ազդեցութիւնը: Ուսուցիչները նաեւ հարցադրման շեշտը դրին այսպիսի անբարենպաստ մթնոլորտի մը մէջ փոխանցուած արժեքային համակարգին վրայ: «Այսքան բան գիտես, ինչո՞ւ հայերէնի ուսուցիչ եղար: Չայերէնը ես քեզի համար կը սորվիմ, բայց չեմ ուզեր քեզի պէս ըլլալ», - իր աշակերտին խօսքերը պատմեց ուսուցիչ մը: Յաճախակի ինչո՞ւ «հայերէնի ուսուցիչ պիտի ըլլաս»-ը համայնքի կեցուածքը արտացոլող անձկութեամբ եւ նսեմացումով ծանրաբեռն հարցում դարձած է:

Երբ այսպիսի կեցուածք կայ, զարմանալի չէ, որ սերնդափոխութիւնը կանգ առնէ, որ ուսուցչութեան թեկնածուներ չխիզախեն մտնել ասպարեզ: Ուսուցիչները պնդեցին, որ պէտք եղածը երկճիւղ ու զուգընթաց մօտեցում որդեգրելն է. մէկ կողմէ արմատախիլ ընել կարծրատիպերը, միւս կողմէ ալ երկարաշունչ ծրագիրներ կազմելով փայլայել ու մեծցնել առկայ ներուժը: «Ատաղճը կայ, ամէն դասարանի մէջ կայ: Ինչպէ՞ս կրնանք զիրենք պահել մեր մէջ: Յետեւողական աշխատանք չկայ. ի՞նչ պիտի ընենք», - պնդեց ուսուցիչ մը եւ բացատրեց, որ երկարաշունչ ծրագրումը պէտք է կանուխէն սկսի: Այսպիսի ընթացագիծ մը կազմելու պարագային պէտք է առանցքային ոլորտները եւ խումբերը զատորոշելով առանձնացնել (օրինակ՝ խմբագիրներ, լրագրողներ, ուսուցիչներ), որպէսզի նոր ուժերու հաւաքագրումը թիրախային ըլլայ եւ դպրոցական տարիներուն ընթացքին տարբեր կարգադրութիւններու ճամբով իրականանայ: «Արժանի աշակերտները քաջալերելու, արժեւորելու, մեր միջավայրին մէջ պահելու միջոցներ պէտք է գտնենք: Օրինակ՝ մտածենք գործունեայ շրջանաւարտից միութիւն ունենալու մասին, բան մը, որ սերունդներու միջեւ գործօն կամուրջ կրնայ ըլլալ», - իր պատկերացումը բացատրեց ուսուցիչը:

Ուրիշ կրթական գործիչներ ալ նման զաղափարներ ունեին, որոնք հասարակաց մտահոգութիւն մը կ'արտայայտէին: Անոնց խօսքերէն նաեւ կ'ախտորոշուէր ընդհանուր զգացողութիւն մը՝ այս մարտահրաւերները ընդունելու, այդքան անհրաժեշտ փոփոխութիւնները ծրագրելու եւ գործադրելու համար առաջնորդումի պակաս կայ համայնքին մէջ: Եւ, ի վերջոյ,

բոլոր կրթական գործիչներն ալ, որ աստիճանի հետ ալ ըլլար իրենց անջնջութիւնը՝ տարրականէն մինչեւ երկրորդական թէ յետ-երկրորդական, խօսեցան զօրակցող գործընթացներու պակասին մասին, ինչպէս նաեւ փորձի փոխանակումին եւ երկխօսութեան անհրաժեշտութեան: «Պէտք է իրարու հետ շփում հաստատենք, կարենանք այս հարցերը քննարկել միասին: Հոգևով-սրտով իրարու համող, նեցուկ կանգնող ըլլանք: Բոլորովին առանձին կը զգամ ինզինքս»,- դիտել տուաւ ուսուցիչ մը: «Համագործակցութիւնը եւ փորձի փոխանակումը պէտք է աւելի խորունկ հարթութիւններու վրայ տեղի ունենան, համայնքի տարբեր համախմբումներուն միջեւ, ոչ միայն ըստ կուսակցական շրջանակներու կամ յարանուանութիւններու»,- շեշտեց ուրիշ ուսուցիչ մը:

Որեւէ առաջընթաց նախ եւ առաջ կ'ենթադրէ որոշակի քաղաքականութիւն՝ ուսուցիչներուն կարծիքները եւ տեսակետները բարեշրջման որեւէ գործընթացի մէջ ներառելու, ուսումնական ծրագիրներուն վերաբերի ան թէ ուսուցիչներու կրթութեան: Ասոր նպատակը լիազօրութեան յստակ զգացողութեան մը կերտումն է, որպէսզի ուսուցիչները շօշափելի կերպով զգան, որ կրնայ տեղի ունենալ փոփոխութիւն՝ իրենց համար եւ իրենց ձեռքով: Լիազօրութեան այս զգացումը կը յանգի անոր, որ ուսուցիչները զգան, որ իրենք են տէրը այս գործընթացին: Եթէ ուսուցիչը կարենայ մաս կազմել բարեփոխման գործընթացին, ան կրնայ այդ մթնոլորտը վերստեղծել իր դասարանէն ներս եւ այդպիսով նպաստել ուսումնական առողջ միջավայրի մը կերտումին:

Ուսուցիչներու հանդէպ ներառական քաղաքականութիւնը նաեւ կը նշանակէ հանրութեան աչքին ուսուցիչի կարգավիճակի բարձրացում եւ անոր հանդէպ բարոյական եւ նիւթական յանձնառութիւններ: Ուսուցիչներուն ուղղուած խրախուսանքի տարբեր արտայայտութիւններ կրնան ըլլալ նաեւ ամսականներու յաւելումները կամ ուսուցիչներու կրթութեան ճամբով նիւթական այլ քաջալերանքները, ուսուցիչներու յատուկ պարգևատրումները եւ նորեկ պաշտօնակիցներու մենտորութեան ծրագիրները: Ի լրումն աս բոլորին, որեւէ երկարաշունչ ռազմավարութեան կազմութիւն պէտք է քննէ կրթական մշակներուն հասցեագրուած տարբեր ձեւի ներքին թէ արտաքին զօրակցական դրութիւններ եւ գործընթացներ հայթայթելու կարելիութիւնները՝ տարբեր նախաձեռնութիւններու եւ կարգադրութիւններու ճամբով, որոնք յառաջ կը մղեն փորձի փոխանակումը, համագործակցութիւնը եւ երկխօսութիւնը, պաշտօնական թէ անպաշտօն հանգամանքներու մէջ, ձեւական թէ ազատ դրութեամբ:

4. ԾՆՈՂ-ԴՊՐՈՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծնող-դպրոց-համայնք յարաբերութիւնները դպրոցին ղեկավարման շրջանակին ու փիլիսոփայութեան կարեւոր բաղադրիչներէն են: «Դպրոցը չի քաջալերեր որ ծնողները առաւել մասնակից դառնան դպրոցական կեանքին: Բայց պէտք է կարեւորել ծառայութեան գաղափարը. ծնողները պէտք է գիտակցին, որ իրենց զաւակներուն եւ անոնց դպրոցին հանդէպ պարտականութիւն ունին, պէտք է աւելի յանձնառու ըլլան»,- ընդգծեց

Ծնողները կրթական համակարգի դաշնակցի եւ գործընկերոջ վերածելը կրնայ տարբեր ոլորտներու վրայ իր դրական ազդեցութիւնը ունենալ:

կրթական գործիչ մը: Ուրիշ մէկը ծնող-դպրոց յարաբերութիւններու առաջնային բնոյթին մասին խօսած ատեն բացատրեց. «Պէտք է զաւակներուն ընդմէջէն ծնողները դաստիարակենք»: Ահա այս երկու պնդումները ի յայտ կը բերեն այն զոյգ ուղղութիւնները, որոնց որդեգրումը պէտք է քաջալերուի, որպէսզի թէ ծնողներուն պարագային, եւ թէ առհասարակ համայնքին մէջ ստեղծուի դպրոցին հանդէպ յանձնառութեան աւանդոյթ, որպէսզի դպրոցի համայնքային բնոյթին, դպրոցական ընտանիքի գաղափարին աւելի տեսակայուն մէկ նմոյշը յառաջ մղուի: Ծնողները կրթական համակարգի դաշնակցի եւ գործընկերոջ

վերածելը կրնայ տարբեր ոլորտներու վրայ իր դրական ազդեցութիւնը ունենալ՝ դպրոցին հանդէպ համայնքի վստահութեան վաստակում, հանրութեան հետ կապ, կրթաթոշակներ,

Նուիրատուութիւններ դպրոցին եւ հանգանակութիւն, միևնչեւ դպրոցի հետ պատկանելիութեան եւ պատասխանատուութեան հասկացութիւն:

Ըստ երեւոյթին ծնողներուն հետ դպրոցին յարաբերութիւնները տակաւին աւանդական ծնողական յանձնախումբերէն անդին չեն անցնիր: «Համալսարանական ուսում ունեցող ծնողներ պէտք է ունենանք, որոշ մասնագիտութեան տէր մարդիկ, գործածենք իրենց փորձառութիւնը եւ գիտելիքները: Փորձենք ներգրաւել զիրենք եւ համոզենք, որ կամաւոր կերպով սատար կանգնին դպրոցին», - նշեց տեղեկաբեր մը: Ծնողներուն հետ այս ձեւի կարգադրութիւն մը լայն պիտի բանայ երկարաշունչ նախաձեռնութիւններու մէջ անոնց ներգրաւման հնարաւորութիւններուն դուռը: Մենտորական ծրագիրներ ըլլան թէ փորձառական աշխատանքի կարելիութիւն, այս ձեռնարկումները կարելի է նաեւ համակարգել դպրոցներու շրջանաւարտից միութիւններուն հետ:

Պարզ է, որ տարբեր դպրոցներու ծնողները տարբեր ալ խնդիրներ ունին, եւ իւրաքանչիւր դպրոց իր ծնողներուն հետ տարատեսակ հարցերու դէմ յանդիման կը յայտնուի: Ծնողներէն ոմանք նիւթական անձուկ վիճակի մէջ են եւ միջին խաւին պատկանող ծնողներու խնդիրներէն տրամագծօրէն այլ մտահոգութիւններ ունին: Այսուհանդերձ, «ծնողները մեր դաշնակիցն են» ներառական սկզբունքը շատ արդիւնաւետ կրնայ ըլլալ դպրոցի յաջողութիւններուն մէջ ծնողներու գործօն մասնակցութիւնը ապահովելու համար: Ծնողներուն հետ աշխատելաճի նոր մշակոյթ մը ստեղծելու համար պէտք է որ բոլոր շահառուները ուսումնասիրեն, թէ դպրոցէն ներս ծնողները ի՞նչ տիպի եւ որ կիրառութեան մէջ ամբարձիչ ոյժ կրնան ըլլալ, վարժարանէն ներս ի՞նչ դերակատարութիւն կրնան ունենալ, որպէսզի դառնան ամբողջ դպրոցին լծակիցները՝ ստեղծելու համար ուսումնառութեան համայնք մը և պահպանելու համար ստեղծուած պատշաճ կրթական միջավայրը:

5. ԹԱՂԱՅԻՆ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ԴՊՐՈՑՆԵՐ

Դպրոցներու նիւթական-դրամական խնդիրներու պարզած այս խորքապատկերէն մեկնելով եւ լուծումներու որոնման ճամբին՝ լիբանանահայ համայնքին մէջ երկու տարբեր տեսակետ դրսեւորուած եւ ձեւաւորուած է: Առաջինը ջատագովն է թաղային մի քանի դպրոց միատեղելով ակելի մեծ եւ միացեալ դպրոցի մը ստեղծումին, իսկ երկրորդը՝ հաւատացողը, որ դպրոցներ միացնելը հիմնական եւ լիակատար լուծում չէ. թաղային դպրոցները կարելոր դէր ունին կատարելու եւ պէտք է կենսագործեն իրենց տեսլականը: ՀԲԸՄ դպրոցներուն պարագային, օրինակ, յետ-պատերազմեան տարիներուն սկզբնական միացում մը եղած է. անկէ ի վեր փորձեր կ'ըլլան ՀԲԸՄ տարրական, միջնակարգ եւ երկրորդական վարժարանները մէկ, մեծ, միացեալ դպրոցի մէջ համարկելու, բայց բոլոր ծրագիրներն ալ լրումի չեն հասած: Հիմա Ազգային իշխանութիւնները որոշեր են համանման նախաձեռնութեան մը մէջ նետուիլ եւ փորձել Պուրճ Համուտի իրենց թաղային դպրոցները միացնել իրարու: Կը նախատեսուի նոր շէնքի մէկ մասը յատկացնել առեւտրական գործունէութեան, որպէսզի ծառայէ որպէս դպրոցին համար եկամուտի աղբիւր: Տրուած ըլլալով որ որոշ գործող դպրոցներու նիւթա-դրամական ինքնաբաւութիւնը գրեթէ անկարելի բան կը սեպուի, այս նոր, միացեալ վարժարանը ոմանք կը համարեն հարցերու լուծման միակ տարբերակը:

Լիբանանահայ համայնքին համար դպրոցները իրարու միացնելը նորութիւն չէ: 1930-ականներու կէսերուն, երբ Պուրճ Համուտի համայնապատկերը զարդարող հայ գաղթակայանները ուռճացան եւ բարգաւաճեցան, գերխճողուածութեան եւ հակա-առողջապահական պայմաններուն բերումով թաղային պզտիկ մանկապարտէզներուն եւ տարրական դպրոցներուն մէջ շէնքի խնամքի եւ կառոյցի լուրջ խնդիրներ ծագեցան: Այդ օրերուն «Չարթօնք» եւ «Ազգակ» օրաթերթերուն

մէջ լոյս տեսած մէկէ աւելի խմբագրականները զօրավիճ են միացեալ նախակրթարանի գաղափարին: Անոնք կը գովեն առաւելութիւնները Պուրճ Համուտի դպրոցները մէկ, աւելի մեծ, նորակառոյց դպրոցի մը մէջ միատեղելու, բոլոր նախակրթարանները իրարու միացնելու բայց գործող մանկապարտէզները պահելու, որպէսզի թաղը շարունակէ եռուն կեանք ապրիլ: Բացի պիւտճէի տեսակէտէն իր բերելիք բացայայտ լուծումներուն, կեդրոնացած դպրոցը նաեւ, այդ օրերուն, նպատակ ունէր ստեղծելու «ազգին» զաւակը ըլլալու զգացում եւ ամրապնդելու հաւաքական ինքնութիւնը, ընդդէմ գաղթականացման թաղերուն մէջ բացայայտօրէն արտայայտուող տեղայնական պատկանելիութեան: Շէննալու, աւելնալու, մեծնալու հիմքի վրայ 1930-ականներու այս տեսլականին մէջ նշուած մօտաւորապէս նախակրթարանի հազար աշակերտներու թիւին համեմատած՝ այս օրերուն նոյն թաղերուն պարզած պատկերը շատ տարբեր է թէ՛ աշակերտութեան թիւի առումով, եւ թէ՛ դպրոցները իրարու միացնելու պատճառներուն մէջ:

Բոլորը համաձայն չեն, որ դպրոցները աւելի մեծ, միացեալ կառոյցի մը մէջ միատեղելը անոնց դիմագրաւած աշակերտութեան թիւի թէ՛ նիւթականի խնդիրներուն լաւագոյն լուծումն է: Կարգ մը տեղեկաբերներ պնդեցին, որ թաղային դպրոցները կարելոր դերակատարութիւն ունին. դպրոցներու այս իւրայատուկ տեսակը պահելը Էական նշանակութիւն ունի՝ այս դպրոցները մասնայատուկ աշակերտութիւն ունին, որ միայն հոն կը յաճախէ: Միացեալ «դպրոցական համալիրի» ամենէն արմատական ընդդիմադիրները կ'առարկեն, որ շէնքեր շինելու համար հաւաքուած նիւթական լուրջ ներդրումները պէտք է որ անոր փոխարէն ուղղուին տեւակայուն մարդուժ ստեղծելուն՝ նախ եւ առաջ մանկավարժական տեւակայունութեան մէջ ներդրում ընելով: Երբ չկայ կրթական երկարաշունչ ծրագրում, ինչո՞ւ մեծ գումարներ շինութիւններու յատկացնել: Դպրոցներու միատեղումը հիմնաւորող պատշաճ ուսումնասիրութիւններ չկան, հետեւաբար ինչը որ մեծ եւ յաջողած դպրոցներու համար լաւ լուծում է, կրնայ յարմար չըլլալ թաղային պզտիկ դպրոցներուն: Նոյնիսկ անգէն աչքով յստակ է, որ բոլոր խնդիրները մէջտեղէն հանող մէկ եւ միակ կախարդական լուծում մը գոյութիւն չունի: Այլազան մօտեցումներ ունենալը կարելոր է, որովհետեւ, նայած թէ իւրաքանչիւրը ընդհանուր ի՞նչ իրավիճակի մէջ է, տարբեր դպրոցներ տարբեր ձեւի լուծումներու կը կարօտին:

Օրինակի համար՝ թաղային յաջողած դպրոցի լաւ օրինակ է Հայ կաթողիկէ Մեսրոպեան վարժարանը: Աշակերտութեան թիւը մեծ է եւ կայուն (Տէն Յաւելուած Գ): Դասական մանկապարտէզ եւ 12-ամեայ դպրոցէն կը ճիւղաւորուի արհեստից վարժարանը: Դպրոցը ունի պիւտճէի բաց, բայց Մեսրոպեան վարժարանը նաեւ արհեստից հոսք ունեցող միակ հայկական վարժարանն է Լիբանանի մէջ, ունի եկամտաբեր նախագիծեր պարունակող եւ նիւթական ինքնաբաւութեան ձգտող բարգաւաճման գործուն ծրագիրներ: Աւետարանական դպրոցները նոյնպէս լաւ օրինակ են: Այս ենթահամայնքը Պուրճ Համուտի եւ Լիբանանի այլ թաղամասերու մէջ, ներառեալ արեւմտեան Պէյրութի, մի քանի դպրոց կը պահէ: Հակառակ իրենց դիմագրաւած նիւթականի դժուարութիւններուն, հայ աւետարանական դպրոցները հաւատարիմ մնացած են թաղային դպրոցներու իրենց ցանցը պահելու յանձնառութեան՝ խորապէս հաւատացած ըլլալով, որ անոնք կարելոր դեր ունին համայնքակերտման մէջ:

«Կան ընդհանրական լուծումներ, որոնք կրնան բոլորին պարագային յարմար ըլլալ: Բայց անոնց մեկնաբանութիւնը եւ կիրարկումը պէտք է որ տարբեր կերպ ըլլան: Կը հաւատամ, որ հայկական թաղային որոշ դպրոցներ տակաւին տեղ ունին մեր դպրոցական համընդհանուր իրականութեան մէջ: Առաջուան պէս չէ, բայց լրիւ չէ կորսուած այդ տեղը», - բացատրեց տեղեկաբեր մը: Բնակչութեան տեղաշարժեր եղած են, հայերը մայրաքաղաքի կեդրոնի թաղամասէն, որ ժամանակին հայկական ժիր ենթահամայնքներու մեղուաբոյն մըն էր, փոխադրուած են արեւելեան Պէյրութի արուարձաններ: Սակայն որոշ թաղային դպրոցներ, ի հեճուկս նոր աշխարհատեղագրական իրականութեան, ունին «հոսանքին հակառակ ընթացող»

ասներ՝ համեմատաբար նոր եւ բարեկեցիկ արուարձաններու բնակիչ աշակերտներ, որոնք այս դպրոցները կը յաճախեն: Այս երեւոյթը մէջտեղ կը բերէ դպրոցի հանդէպ հաւատարմութեան եւ դպրոց-ծնողք-համայնք եռանկիւնի կարեւորութեան խնդիրները: Չայն արտացոլող լաւագոյն օրինակները հայ աւետարանական երկու տարբեր դպրոցներ են (Էշրէֆիէի Յայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարանը եւ արեւմտեան Պէյրութի Յայ աւետարանական գոլէճը), որոնց աշակերտութեան մեծամասնութիւնը դպրոցի շրջակայ թաղերու բնակիչ չէ: Այսպիսի պարագաներու դպրոցը կը վերածուի խորհրդանշանի, շէնքի իրեղէն գոյութեան մէջ իսկ խտացած որոշ յիշողութիւն եւ պատմութիւն կրող արմատաւորումի: Իրենց շէնքերուն եւ տեղադրութիւններուն հետ կապակցուած դպրոցներու պատմութիւնը եւ աւանդոյթը հաւաքական ժամանակութեան նշանակալից շերտեր են, եւ պէտք է գանոնք խորութեամբ նկատի ունենալ:

«Ոչ մէկ տուեալ, ոչ մէկ ապացոյց կայ, որ դպրոցները միացնելը նիւթականի հարցերը պիտի լուծէ, եւ կայուն վիճակ պիտի ստեղծուի», - առարկեց տեղեկաբեր մը եւ թուեց յստակ օրինակներ պարագաներու, երբ ընկերային-տնտեսական դժուար կացութեան մէջ գտնուող թաղային դպրոցներու փակումէն ետք ծնողները իրենց զաւակները միւս հայկական դպրոցներէն մէկը չէին դրկած, այլ պետական կամ ոչ պետական օտար վարժարան՝ տարբեր պատճառներով: «Այս դպրոցները, ամէն մէկը իր թաղին մէջ, այդ թաղին սիրտն են», - պնդեց ան: ԶԲԸՄ-ի դպրոցները, օրինակ, նոյնիսկ միատեղումէն ետք աշակերտութեան թիւի կանոնաւոր նուազում կ'ապրին եւ տակաւին ունին պիւտճէի բաց: Իսկ աւելի պզտիկ դպրոցներու պարագային, որոնք աւելի համեստ եկամուտ ունեցողներու թաղերէ աշակերտներ ունին, ոչ մէկ երաշխիք կայ, որ ծնողները պիտի որոշեն իրենց զաւակները նոր, միացեալ վարժարաններէն մէկը դրկել: Ըստ մանրադէպային տուեալներու՝ ոչ բարեկեցիկ թաղերու ծնողներէն նկատառելի թիւ մը նմանօրինակ պարագաներուն իր նախընտրութիւնը կու տայ պետական դպրոցներուն եւ ո՛չ հայկական վարժարանին: Միով բանիւ՝ պէտք է թաղային դպրոցներու աշակերտութեան թիւերու վերիվայրումները (եթէ կան) մասնագիտական եւ հետեւողական ուսումնասիրութեան առարկայ դարձնել, մանաւանդ եթէ այս կրթօճախները փակուելու կամ ուրիշ դպրոցի մը միացուելու վտանգին տակ են, որպէսզի աշակերտութեան թիւի փոփոխութիւններու ուղղութիւնները ուրուագծուին, եւ կարելի ըլլայ համապատասխանաբար ծրագիրներ կազմել:

Տրուած ըլլալով որ միացեալ դպրոցները ծրագիրէն իրականութիւն դարձնելու համար լուրջ նիւթական կարողութիւն եւ ներդրումներ կը պահանջուին, պէտք է սկիզբէն արդէն երկու էական գործօն անպայման նկատի ունենալ, որպէսզի «նոր դպրոցներու» գաղափարը ընդունուի եւ նպաստէ որեւէ շօշափելի փոփոխութեան: Առաջին՝ ապագայ «նոր» դպրոցին համար առաջարկուող շէնքին կառոյցը պէտք է նախագծուած ըլլայ ըստ մանկավարժական յառաջդիմական մօտեցումներու, եւ ոչ թէ հին դպրոցներու հինգած յատակագիծներուն մեծցուած տարբերակը ըլլայ: Երկրորդ՝ սկիզբէն իսկ մանկավարժական տեսակայունութիւնը այս միացեալ դպրոցի ծրագիրին ներգոյ մասը պէտք է ըլլայ՝ ապահովելով, որ մարդուժի առումով ներդրումը եւ կառոյցին շինարարական ծախսերը իրարահամեմատ ըլլան: Շէնքերը, որքան ալ մեծ եւ արդիական ըլլան, շէն կ'ըլլան միայն եթէ կեանք կայ իրենց մէջ, իսկ կեանք չի կրնար ըլլալ, եթէ կրթական համակարգը արդիւնաւետ չըլլայ:

Իսկ վերջաւորութեան տեղեկաբերները թուեցին մասնաւորապէս Պուրճ Յամուտի թաղային դպրոցներուն վերաբերող երկու նշանակալից խնդիր: Միացեալ դպրոցի ոչ մէկ ծրագիր պիտի լուծէ գանոնք. անոնք կարօտ են յատուկ ուշադրութեան, իսկ անոնց լուծումը՝ յաւելեալ ուսումնասիրութեան.

- Այնպէս կ'երեւի, որ 8-րդ դասարանին դպրոցը եւ ուսումը լքող մանչերու կայուն թիւ մը կայ: Յատուկ ուսումնասիրութիւններ չկան այս խնդիրին շուրջ. կան միայն նախնական տուեալներ, համաձայն որոնց ժամանակի ընթացքին մանչ աշակերտներու թիւերը կը

Նուագին: Այս երեւոյթին հնարաւոր պատճառ կրնայ ըլլալ այն, որ մարդ չի քաջալերեր աշակերտները դէպի արհեստագիտութեան պաթալորեայի (ԱՊ) պատրաստող արհեստից կամ արհեստագիտութեան կրթութիւն, որովհետեւ ծնողները պէտք եղած չափով տեղեակ չեն այս տարբերակին մասին: Չկայ արհեստից եւ արհեստագիտական կրթութեան գաղափարը համայնքին փոխանցելու, այդ մասին զայն իրազեկ ընելու լուրջ տեղեկարշաւ: Արհեստից եւ արհեստագիտական կրթութիւնը պարզապէս մաս չեն կազմեր կրթական տարածուած մշակոյթին: Այս ծանրակշիռ խնդիրը հասկնալու եւ դարմանելու համար անհրաժեշտ է ապացուցայէն հետազոտութիւն:

- Գրեթէ ամէն մարդ խօսեցաւ աշակերտներուն զուգահեռ անոնց ծնողները «դաստիարակելու» կենսական անհրաժեշտութեան մասին՝ յանուն տեւակայուն ամբողջութեան մը ստեղծումին՝ շէշտելով, թէ ծնողները կրթական գործընթացին մէջ ընդգրկելը որքան կարևոր է, բան մը, որ լուրջ դժուարութիւն մըն է թաղային դպրոցներուն պարագային: «Տնտեսական դժուարութիւնները իրենց սեւ գործը ըրած են, ազդած են ծնողներուն վրայ, որոնք զաւակ մեծցնելու խնդիր ունին եւ անոնց կեանքին մէջ առաջնային տեղը անպայման կրթութեան չեն յատկացներ: Այս ընտանիքներուն ընկերային խնդիրներն ալ շատ-շատ են», - բացատրեց տեղեկաբեր մը: «Պէտք է ծնողներուն հետ կանոնաւոր հանդիպումներ ունենանք, ամիսը անգամ մը, որպէսզի մեր ժողովները արդիւնք տան եւ կարենանք տեղ մը հասնիլ, ծնողներուն հետ անմիջական կապ ստեղծուի», - յաւելեց ուսուցիչ մը: Ամէն մարդ հակած էր մտածելու, որ այս հարցին լուծումը ծնողներուն ուղղուած անպաշտօն աշխատանոցներ ու լսարաններ կազմակերպելն է, ընտրելով նիւթեր, որոնք կարելի է ծնողներուն համար՝ դրամական, ընտանիքի պիտոճէն ճիշդ վարելու վերաբերեալ խնդիրներէն մինչեւ չափահասներու կրթական ծրագիրները:

Առաջին ակնարկով անյաղթահարելի կը թուին լիբանանահայ դպրոցներուն առջեւ ծառացող դժուարութիւնները: Ինչպէս տեսանք, դպրոցներուն դիմագրաւած դրամական եւ մանկավարժական խնդիրներուն ամենէն առանցքայինները բազմաշերտ են ու շղթայուած իրարու: Եկամտաստեղծ ուղիներ ծրագրելը, ծախսերը պակսեցնելը, ուսուցիչներու կրթութեան եւ ուսումնական ծրագիրներու բարեփոխումին նպատակաւորաւորուած ռազմավարութիւններու մշակումը, այլազան լուծումներու սկզբունքը որդեգրելը եւ քարացած մտածելակերպերը թօթափելը պիտի ըլլան ծառացող մարտահրաւերները դիմագրաւելու եւ առաջ երթալու ճանապարհը: Առաջարկ-յանձնարարականներու յաջորդ այս հատուածը կ'առաջարկէ փոփոխութիւններ մուծելու հնարաւոր ընթացագիծ մը, որ շէշտը կը դնէ փոքր, բայց հետեւողական, դանդաղ, բայց աճող քայլերու վրայ:

Առաջարկ-յան ձևարարականներ

Ի պատասխան այն հարցումին, թե ինչպե՞ս կը պատկերացնեն երկարատեւ եւ հիմնաւոր կերպով վերակերտիչ ազդեցութիւն ունեցող փոփոխութիւնը, շահառուներու մեծամասնութեան «ցանկութիւններու մատեանի» առաջին տեղերը գրաւեցին կիզակետային մի քանի հիմնական ոլորտներ: Այս ցանկութիւններուն շարքին են մարդու ժի մէջ ներդրումը՝ ուսուցիչներու կրթութենէն մինչեւ սերնդափոխութեան լուրջ ծրագրումը, կրթութեան մէջ նորարարութիւնը՝ ներառեալ ուսումնական ծրագիրներու բարեփոխումը եւ արդիականացումը, կրթական կազմակերպական կառոյցներու մէջ փոփոխութիւններ ընելու յանձնառութիւնը, միջոցներու, աղբիւրներու, այլ կարելիութիւններու կառավարումը եւ տեսակայնութիւնը, հայագիտական հիմնարկի մը, կեդրոնի մը կամ ծրագրի մը ստեղծումը եւ, վերջապէս, թիրախային ռազմավարութեան հանգող ապացուցայէն ուսումնասիրութիւնները: Յաճախ յիշատակուած հանգամանք մըն էր նաեւ «ճիշդ անձը, ճիշդ տեղը, ճիշդ պաշտօնին վրայ» տեսնելու փափաքը՝ ուսուցչութենէն սկսած մինչեւ առաջնորդող դերերու պարագային եւ կրթութեան կառավարման հետ կապուած վճռական որոշումներ կայացնող տարբեր շրջանակներէ ներս: Այս ցանկութիւնը մեզ կը վերադարձնէ արհեստավարժներու եւ մասնագետներու ներկայութեան անհրաժեշտութեան, անհրաժեշտ ներկայութիւն մը, որ իր բարենպաստ ներգործութիւնը պիտի ունենայ բոլոր լուրջ բարեփոխումներուն իրագործումին մէջ: Այս հատուածին առաջարկ-յան ձևարարականները, հակառակ անոր որ ծնած են նախորդ էջերուն մէջ արծարծուած առանցքային խնդիրներէն, նաեւ վերոյիշեալ մտահոգութիւնները կ'արտացոլեն:

Սկիզբէն իսկ պարզ է, որ Լիբանանի հայկական դպրոցներուն եւ լիբանանահայ համայնքի կրթական համակարգին հետ կապուած որեւէ բան ծրագրելու պարագային պէտք է միշտ նկատի ունենալ քաղաքական կացութիւնը: Ամբողջ տարածաշրջանը քաղաքական փոթորիկներու դեմ յանդիման կը գտնուի, փոթորիկը նախորդող ամերեւոյթ անդորրը դիւրաբեկ է, եւ կացութիւնը երբեմն անկանխատեսելի է: Սուրիահայ դրացի համայնքը հոն ընթացող քաղաքացիական պատերազմին մէջ կործանման եւ զրկանքներու ենթակայ է, իսկ լիբանանահայ համայնքը տակաւին կը տուայտի իր քաղաքիական պատերազմի յետ-պատերազմեան դժուարութիւններուն մէջ: Պէտք է ընդունիլ սակայն, որ կացութեան ըմբռնումին մէջ գոյատեւման խնդիրը առանցքային է: Հակառակ այն բոլոր անորոշութիւններուն, որոնց դեմ յանդիման են ամէն վայրկեան, այս համայնքներուն անընկճելիութիւնը, անկոտորում հոգեվիճակը կասկածէ վեր կը մնան: Յուլիսի կէսերուն, իմ կարճ այցելութեանս ընթացքին, երբ լիբանանահայ դպրոցներու աւարտական հանդէսները տեղի կ'ունենային, կիսատ-պռատ լուրեր սկսան հասնիլ Հալէպէն, որ հայկական դպրոց մը Հալէպի մէջ աւարտական հանդէս կ'ընէր 900 շրջանաւարտի հունձք մը հասցնելով: Այս քայլը հաւանաբար լաւագոյնս կարելի է նկարագրել որպէս «սփիւռքեան խրոխտանք» համայնքի դիմագրաւած աւերումին դեմ: «Այնքան ատեն որ հայ ժողովուրդը կառչած է իր արմատներուն, մշակոյթին եւ լեզուին սփիւռքը պիտի գոյատեւէ: Ձեւերը պիտի փոխուին, բայց սփիւռքը պիտի գոյատեւէ: Մինչեւ այն ատեն որ համախումբ կեանք մը կայ, անկախ թիւերէն, որ նահանջի մէջ են, սփիւռքը պիտի գոյատեւէ», - մատնանշեց տեղեկաբեր մը՝ շեշտելով, որ առաւելագոյն արդիւնաւետութեան համար արտաքին սիւթական օգնութեան առումով պէտք եղածը *Նպատակային, թիրախուղող* օժանդակութեան ծրագիրներ են, ոչ թէ արտաքին օժանդակութեան սահմանափակումը:

*Լիբանանահայ
համայնքը տակաւին
առաջատար եւ
առաջնային դեր ունի
սփիւռքի տարածքին:*

Լիբանանահայ համայնքը տակաւին առաջատար եւ առաջնային դեր ունի սփիւռքի

տարածքին. ան մայրենի լեզուի եւ հայեցի մշակոյթի «դրամագլուխ» հայթայթող համահայկական գլխաւոր հանգոյցներէն մէկն է: Այս համայնքին կենսունակութեան ի խնդիր կատարուած հոգեւոր թե նիւթական ներդրումը ալետարած ներգործութիւն եւ համազգային ազդեցութիւն կ'ունենայ արեւմտահայերէնը կենսաբաբախ լեզու պահելուն վրայ: Արեւմտահայերէնը մեր ոչ նիւթական ժառանգութեան առանցքային երեսակներէն մէկն է: Ընդունելով հանդերձ որ աշխարհաբաղաբական կացութիւնը կրնայ յղի ըլլալ հաւանական վտանգներով, այս վտանգները նուազագոյնի հասցնելու եւ անոնց ազդեցութիւնը մեղմացնելու նպատակով կարելի է ռազմավարական ծրագիրներ կազմել, որպէսզի լիբանանահայ համայնքին համար մտայղացուած ու մշակուած նախաձեռնութիւնները իրենց մէջ կրեն համազգային երեսակներ, եւ կարելի ըլլայ համապատասխան փոփոխութիւններ մտցնելով զանոնք պատշաճեցնել սփիւռքեան այլ իրավիճակներու եւս:

Լիբանանահայ համայնքի կրթութեան ոլորտին մէջ, ինչպէս ապացուցուեցաւ «Առանցքային խնդիրներ» բաժինին մէջ, կայ անհամատեղելի երկու կեցուածք. մէկը փոփոխութիւնները մերժող եւ անոնց ընդդիմացող աւանդապաշտ կեցուածքներն ու մօտեցումներն են, մինչ միւս կողմէ գօտեպնդող ներկայութիւնը կայ երիտասարդ մանկավարժներու եւ երիտասարդութեան մէջ մանկավարժութիւն ուսանելու առհասարակ առողջ հետաքրքրութիւն մը: Ըստ էութեան՝ մարդուժի առումով կայ ներուժ: Չայն փայփայելը, մեծցնելը, առաջնորդելը, ինչպէս նաեւ նորարար, չկաղապարուած մտածողութիւն ունենալը պէտք է ըլլան լուծումներ պատկերացնելու ճամբին յաջորդ քայլերը:

Իւնտեքստ (Միացեալ ազգերու կազմակերպութեան կրթական, գիտական եւ մշակութային կազմակերպութիւնը) արեւմտահայերէնը դասած է անհետացման վտանգին տակ գտնուող լեզու՝ «հաստատապէս վտանգուած» լեզուներու շարքին: Սերունդէ սերունդ աւանդումի հիմքին վրայ վտանգուած լեզուներու քառաստիճան սանդղակին երկրորդ աստիճանն է «հաստատապէս վտանգուած»-ը: Չորս աստիճաններն են՝ խոցելի, հաստատապէս վտանգուած, խստօրէն վտանգուած եւ օրհասական վտանգի տակ: Արեւմտահայերէնի աստիճանական հիւծումը մեր օրերու տազնապայարոյց, ահազանգային իրողութիւններէն է: Կարելի է տակաւին առաջքը առնել այս ազատ անկումին, կասեցնել զայն, եւ, յուսանք, նոյնիսկ շրջել այս ընթացքը՝ շնորհիւ ուսուցիչներու կրթութեան եւ կրթարարական նորարարութեան մէջ երկարաշունչ եւ թիրախային ներդրումներու: Վերջիններս ուսումնական ծրագիրներու եւ դասագիրքերու բարեփոխումներուն մէջ պէտք է ընդգրկեն ստեղծարար արհեստագիտութեան նորութիւնները, ինչպէս նաեւ գիտական հետազոտութիւններ եւ զարգացման ծրագիրներ պարունակող նախաձեռնութիւններ:

*Արեւմտահայերէնի
աստիճանական
հիւծումը մեր օրերու
տազնապայարոյց,
ահազանգային
իրողութիւններէն է:
Կարելի է տակաւին
առաջքը առնել այս
ազատ անկումին,
կասեցնել զայն, եւ,
յուսանք, նոյնիսկ
շրջել այս ընթացքը:*

Այս ուղղութեամբ կարելոր քայլ մը պիտի ըլլար գնահատում մը կատարել, թէ լեզուի անհետացման ընթացքը շրջելու նպատակ ունեցող եւ լեզուի վերակենդանացման յաջողած նախագիծներու ինչ օրինակներ կան աշխարհով մէկ: Ընկերալեզուաբաններուն կողմէ համաշխարհայնօրէն ընդունուած փաստ է, որ լեզուի անհետացման ընթացքը շրջելու վճռական փուլը անոր սերունդէ սերունդ փոխանցումը ապահովելն է: Այսինքն, երբ լեզուն կը փոխանցուի ընտանեկան յարկին տակ, օճախին մէջ, ծնողէն զաւակին, երբ համայնքին

մէջ կը ինչէ եւ կը գործածուի ամէն տեղ, ամէն մակարդակի վրայ: Երբ այս փուլը ամուր եւ բնական փաստ է, արդէն հետագայ փուլերը կ'ամրապնդեն լեզուի իւրացումը՝ գրագիտութեան նպատակ ունեցող աշխատանքներով, որոնք կրնան ըլլալ կրթական դասական կամ անպաշտօն դրուածքով, համայնքային եւ աւելի լայն լսարանի ուղղուած մամուլով եւ, ի վերջոյ, օրէնսդիր, օրինաստեղծ որոշումներով ու նախագիծներով:

Լեզուներու վերագարթօսքի նախադէպեր կան: Եւ յաջողած օրինակներու նախադէպեր են, բնիկներու լեզուներու եւ/կամ փոքրամասնութիւններու լեզուներու պարագաներ: Ամենէն ցայտուն, վառ օրինակները թուենք. ուելտերէնը Կալէսի մէջ (Ուելլզ), քաթալոներէն լեզուն Քաթալոնիայի մէջ, Մաօրի լեզուն Նոր Չելանտիայի մէջ, բնիկներու լեզուներու բոլլ մը Գանատայի մէջ, եբրայերէնը Իսրայէլի մէջ, ֆրանսերէնը Քէպէքի մէջ, եւ այլն, որոնք յաջողութեան տարբեր աստիճաններու հասած են: Անշուշտ, այսպիսի նախագիծներու մեծ մասը վայելած է շատ կենսական պետական աջակցութիւն, զօրավիճ կանգնող օրէնքներ, նպատակամետ հովանաւորում (նիւթականի տրամադրում) եւ այլն: Արեւմտահայերէնը որպէս գրական լեզու սփիւռքեան լեզու է, չունի իր թիկունքին պետական գործընթացներ կամ պետութեան հովանին, եւ այս առումով չի կրնար համեմատուիլ այլ փոքրամասնական լեզուներուն հետ: Բայց եւ այնպէս կայ հայկական դպրոցներու համասփիւռքեան ցանցը, կան սփիւռքի ամբողջ տարածքին գործող համայնքային միութիւնները եւ կազմակերպութիւնները, եւ ասոնք բոլորը կրնան գործել որպէս իսկապէս համագային ցանց եւ որեւէ լուծումամետ ռազմավարութեան մշակումի ընթացքին դիտուիլ որպէս հսկայական առաւելութիւն: Աւելին. որեւէ նախագիծ, տակաւին մշակման փուլին մէջ ըլլայ ան թէ իրագործուելու շեմին, վերջին հաշուով պէտք է ուղղուած ըլլայ ապագայ սերունդին, որովհետեւ երիտասարդներն են լեզուի ժառանգորդներն ու կրողները, զայն գործածողները, շրջանառութեան մէջ պահողները, նորացնողներն ու փոխանցողները:

«Սկսինք պզտիկ, բայց ամուր քայլերով, եւ անոնք մեզ կը տանին մեծ հեռանկարին:»

Ինչպէս կ'արտայայտուի կամ կ'իրագործուի վերոյիշեալը: Կիրառելով մօտեցումներ, որոնք գրագիտութեան վերաբերեալ աշխատելաոճերուն մէջ կը կարելորեն լեզուի բաբախուն, կենսաթրթիռ բնոյթը երաշխաւորող երեք հիմնասիւնները՝ լեզուի գործնական բնոյթը, առօրեայ կեանքին հետ առնչութիւնը եւ ստեղծագործական ներուժը: Այս նախատիպը կ'ենթադրէ պատանիներուն եւ երիտասարդներուն մատչելու, անոնց լեզուով խօսելու, եւ զանոնք արեւմտահայերէնի կրող ու փոխանցող դարձնելու նպատակով խիզախել թուային աշխարհ, արեւմտահայերէնով ունենալ բազմամիջոց եւ բազմամիջավայր թուային թէ համացանցային ներկայութիւն տարբեր, արուեստի վրայ հիմնուած թուային հարթակներու վրայ: Լեզուի վերակենդանացումը կ'ենթադրէ կենսանորոգ մօտեցում, նոր, թարմ շունչ եւ հայեացք: Լիբանանի հայկական դպրոցները կրնան այս մօտեցումը արտացոլող կենսական կապ մը ըլլալ:

«Պայման չէ որ մեծ ախորժակներ ունենանք, մեծ հեռանկարներ գծենք եւ չկարենանք հասնիլ անոնց: Իրատես ըլլանք եւ իրատեսական ծրագիրներ կազմենք: Սկսինք պզտիկ, բայց ամուր քայլերով, եւ անոնք մեզ կը տանին մեծ հեռանկարին: Մեզի պէտք են փոքր քայլերով բայց երկարաշունչ ծրագրումով նախագիծներ», - բացատրեց կրթական մշակ մը: Ընդունելով հանդերձ, որ նիւթականի խնդիրը դժուարութիւններու մեծ մասին աղբիւրն է՝ ան իրաւացիօրէն առարկեց, որ ուրիշ գործօններ ալ պէտք է նկատի առնել: Ան ներկայիս տիրող տեսլականի բացակայութիւնը համարեց Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանք: «Վերջին 10-15 տարին գոյապահպանումի վիճակի մէջ ենք, տակաւին պատերազմի մղձաւանջին մէջ ենք: Մեր ղեկավարութիւնը կը մտածէ, որ եղածը պահպանելը բաւարար է: Թերեւս իրենց ակնոցով դիտուած ճիշդ է, որովհետեւ որոշ պարագաներու կտրուկ փոփոխութիւնները լաւ արդիւնք չտուին: Բայց 20 տարի անցած է, կարելի էր բան մը ընել: Միայն մենք չէ որ պատերազմող երկիրի մէջ կ'ապրեինք: Մեր շուրջը այլ համայնքներ հսկայ կառոյցներ ունեցան, մենք տեղբայրի մէջ ենք: Ամեն բանէ առաջ համարձակ քայլեր պէտք են մեզի: Պայման չէ կտրուկ քայլեր ըլլան, բայց պայման է որ խիզախ ըլլան: Մինչեւ հիմա հակառակ տեսանք»:

Առանց վտանգի քայլառաջ չկայ: Որեւէ յառաջխաղացք բնականաբար կը պարունակէ նաեւ վտանգի, սխալներու, հնարաւոր ձախողութիւններու հաւանականութիւն: Այս բոլորը նաեւ կրնան ծնիլ «հազիւ աս եղածը» կորսնցնելու վախ: Այս հանգրուանին սակայն փոփոխութիւնը

անշրջանցելի հրամայական է: Հոլովոյթի այս գործընթացին մաս կը կազմէ խիզախելը, վտանգներէն չերկիւղիլը: Լաւ ուսումնասիրուած, ապացուցայէն, ճկուն մօտեցումները կ'օժանդակեն նաւարկելու եւ, երկարաժամկետ կտրուածքով նայած, հնարաւոր վտանգներու ազդեցութիւնը թէթեւցնելու, մանաւանդ եթէ բազմուղեգիծ լուծումներ որոնուին: Եկած է պահը, որ թէ կրթական համակարգին, եւ թէ արեւմտահայերէնի վերակենդանացումին համար այժմ կիրարկուող բայց արդէն ժամանակավրէպ «պահպանում»-ին փոխարէն յառաջամետ մօտեցումով գիտելիքի «ստեղծումը» եւ «կառուցումը» ընտրենք իբրեւ յղացքակիր շրջանակ:

Շատ կարելոր է նաեւ, որ ինչ նախաձեռնութիւն ալ որդեգրուի, անպայման ըլլայ ներառական՝ իր մօտեցումով, եւ համագործակցական՝ իր բնոյթով, ընդգրկէ գործող բոլոր կազմակերպութիւններուն եւ հաստատութիւններուն ջանքերն ու ճիգերը՝ լաւագոյն աշխատելաոճերու փոխանցումը եւ գիտելիքի անհոգումը ի մտի ունենալով: Միաժամանակ այս նախաձեռնութիւնը պետք է որ իրատես եւ գործնական կերպով օրինակ ծառայէ երկխօսութեան եւ առաջնորդումի մէջ համախումբ համագործակցութեան, այս էական արժէքներուն:

Երկու կարեւորագոյն, հենքային առաջարկ-յանձնարարական նախաբանն են միւսներուն.

Ա) *Պայմանականութեան դրոյթ դրամաշնորհներու պարագային - ԳԿՀ-ՀՀԲ-ն պետք է որբուէ օժանդակութիւն կամ դրամաշնորհ տրամադրելու պահին պայման դնէ, որ ստացողը իր մասնակցութիւնը բերէ հաւանութեան արժանացած նախաձեռնութիւններուն*

Լուծումները տեղւոյն վրայ պիտի որոնուին եւ գործադրուին՝ ի տարբերութիւն գանտնք պարտադրելու ուղղահայեաց ստորակարգային կերպին:

Եւ/կամ առաջարկ-յանձնարարականներուն իրագործումին: Կրթական նախաձեռնութիւններու պարագային ինքզինքը գործին տերը զգալը շատ կարելոր է: Աշխատելաոճի նոր մշակոյթի մը ստեղծումին նպաստելով՝ պայմանականութեան դրոյթը կրնայ նաեւ նպաստել այդ զգացումին առաջացումին եւ խորացումին, որովհետեւ այդ պայմանականութեան ընդմէջէն ան պատասխանատուութեան եւ հաշուետու ըլլալու անելի խորունկ աստիճան մը կը սնուցանէ: Հետեւաբար, երբ յարգեն այդ տրամադրումին պայմանները, շահառուները կը վերածուին գործընկերներու՝ շօշափելի կերպով մասնակցելով երկարաշունչ ներգործութեան նպատակին, հասնելով անոր եւ իրագործելով զայն: Ինչպէս նկատեց տեղեկաբեր մը. «Այսպիսի համահայկական կազմակերպութիւն մը, որ ունի անհրաժեշտ հեղինակութիւնը եւ կրնայ պարտադրել իր կամքը, առարկայական մօտեցում ունի եւ բոլորին հանդէպ համահաւասարութեան սկզբունքով կը գործէ, կրնայ ստեղծել պատասխանատու եւ հաշուետու ըլլալու, գործին տերը ըլլալու այս մշակոյթը: ԳԿՀ-ն այս տեսակի կազմակերպութիւն է, եւ ունի այս մշակոյթը ստեղծելու անհրաժեշտ ազդեցութիւնը»:

Յառաջիկայ ցանկին մէջ [այ]-ով նշուած առաջարկ-յանձնարարականները պետք է պայմանականութեան դրոյթի առումով սեպել գերագոյն կիզակետ (օրինակ՝ արդէն աշխատող ուսուցիչներու կրթութիւն, տնօրէններուն համար կրթական ոլորտի մէջ առաջնորդութեան եւ կառավարման դասընթացներ, կրթական մշակներուն համար համացանցի եւ առհասարակ արհեստագիտական աշխարհի հետ «մշակութային մերձեցում», ելեւմտային-պիտոճեական տեւակայունութեան թիրախներու նուաճում, եւ այլն): Վերոնշեալէն բացի յատկացուող կրթաթոշակներու տրամադրման պայմաններուն մէջ կարելի է ներմուծել «ծառայութիւն համայնքին» բաղադրիչ մը՝ այսպէսով ստեղծելով սերնդափոխութեան օրինակ եւ միաժամանակ շեշտելով ու ամրապնդելով ծառայելու գաղափարին կարեւորութիւնը:

Բ) *ԳԿՀ-ՀՀԲ կրթութեան ծրագիրներու պատասխանատու - Բազում տեղեկաբերներ մէկէ անելի անգամ նշեցին, թէ իրագործուող բոլոր ծրագիրներուն եւ նախաձեռնութիւններուն ԳԿՀ Հայկական համայնքներու բաժանմունքին անմիջական հետեւումը որքան անհրաժեշտ է:* Այս հետեւումը զարկ կու տայ պատասխանատու ըլլալու հանգամանքին՝ անելի ժամանակահունչ եւ իրատեսական ձեւով: Եթէ Լիբանանի մէջ մնայուն ներկայացուցիչ ունենալը գործնական

առումներով դժուար է, կարելի է այլընտրանքներու մասին մտածել: ԳԿՅ-ՅՅԲ կրթութեան ծրագիրներու պատասխանատուն կրնայ պարբերաբար այցելել, հետեւիլ գործերու յառաջխաղացքին, օժանդակել ծրագիրները մեկնարկելուն, կապի դեր կատարել տեղւոյն յատուկ նշանակութեան յանձնախումբերուն եւ կրթական հաստատութիւններուն հետ՝ կանոնաւոր եւ հետեւողական կերպով: Այս պարտականութիւններով անձի մը ներկայութիւնը նաեւ կենսական է շահառուներուն հետ կենսունակ եւ մշտատեւ յարաբերութիւններ ունենալու համար:

Առաջարկ-յանձնարարականները լուսարձակի տակ կ'առնեն հինգ առանցքային ոլորտ, իրենց այլեայլ ելթակարգերով. Յատուկ նշանակութեան յանձնախումբի ստեղծում, Նիւթականի տեւակայունութիւն, մանկավարժական տեւակայունութիւն, երկխօսութիւն եւ փորձի փոխանակում, հետազոտութիւն եւ զարգացում (բոլոր առաջարկ-յանձնարարականները ամփոփող մանրամասն աղիւսակը տես Յաւելուած Ա-ին մէջ):

1. ՅԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Տեղւոյն վրայ գործող Յատուկ նշանակութեան յանձնախումբ մը պիտի ապահովէ, որ ԳԿՅ-ՅՅԲ-ի հովանաւորած նախաձեռնութիւններուն հետ կապուած անցումներն ու փոխանցումները, ինչպէս նաեւ անոնց իրագործումը հեզասահ ընթանան: Ան նաեւ շօշափելի կերպով պիտի ամրապնդէ գործին տէրը ըլլալու գաղափարը՝ տրուած ըլլալով, որ այս պարագային լուծումները տեղւոյն վրայ պիտի որոնուին եւ գործադրուին՝ ի տարբերութիւն զանոնք պարտադրելու ուղղահայեաց ստորակարգային կերպին: Կրթութեան ծրագիրներու պատասխանատուն կապը պիտի ըլլայ Յատուկ նշանակութեան յանձնախումբին եւ ԳԿՅ-ՅՅԲ-ին միջեւ, որոնք իրարու հետ պիտի աշխատին սերտօրէն եւ համ-ագործակցութեան սկզբունքով: Այս յանձնախումբը պիտի ըլլայ համագաղութային, սերունդներու ներկայութեան առումով ալ ներկայացուցչական մարմին մը, կազմուած ուսուցիչներէ, կրթական գործիչներէ, գիտնականներէ, մտաւորականներէ եւ առնչակից ոլորտներէ այլ մասնագետներէ: Այս յանձնախումբը կրնայ ըլլալ պզտիկ, բայց ամուր կորիզ մը, հազիւ 5-7 անդամ հաշուող, որոնք պիտի որոշուին ԳԿՅ-ին կողմէ: Երբ անհրաժեշտ ըլլայ, սակայն, ան կրնայ, տարբեր ոլորտներու մասնագետներու խորհուրդին դիմելու նպատակով, ստեղծել ժամանակաւոր խորհրդատու մարմիններ (կազմուած, օրինակ, կրթական գործիչներէ, ընկերային ծառայողներէ, մանկավարժ հոգեբաններէ, ուսումնական խորհուրդի կամ ծնողական յանձնախումբի ներկայացուցիչներէ, ելեմուտքի կամ շուկայավարութեան մասնագետներէ, եւ այլն): Յանձնախումբի առաջին գործը կ'ըլլայ առաջարկուող կեդրոնին/ծրագրին համար անցման ընթացագիծ մշակել, եւ վարել մի քանի փոքր ուսումնասիրութիւն: Այս մէկը կենսական է՝ տուեալներու վստահելի շտամարան մը ստեղծելու եւ լիբանանահայ համայնքին եւ դպրոցներուն ճշգրիտ պատկերը ունենալու համար (վեր հանելով տարբեր օրինաչափութիւններ, ուղղութիւններ, ժողովրդագրական ըլլան, աշակերտութեան թիւին վերաբերող տուեալներու մասին, թէ յատուկ հարցումներու պատասխանող՝ ըստ կարիքի): Այսպէսով նաեւ յետագայ ձեռնարկումներու թիրախները կրնան յստակ եւ որոշակի կերպով ընտրուիլ:

Պէտք է անյապաղ մշակել կարիքներուն ուղղուած երկարաշունչ լուծումներ:

2. ՆԻԹԱԿԱՆԻ ՏԵՒԱԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆ [Պ]

«Նիւթականի առումով տեւակայունութիւնը երկար ժամանակի վրայ կարելի՞ բան է», - հռետորական հարց տուաւ տեղեկաբեր մը: Ան յղում ըրաւ մանրադէպային տուեալներու, որոնք ցոյց կու տան, թէ անցեալին ոչ մէկ դպրոց կրցած է պիւտճէի բացը հաւասարակշռել առանց նուիրատուութեան՝ եկեղեցիին կողմէ ըլլայ ան թէ այլ կազմակերպութիւններու: Թաղային

պզտիկ դպրոցներու դժուարին կացութեան մասին խօսելով՝ տեղեկաբերը յաւելեց. «Այսպիսի պարագաներու արեւմտեան կազմակերպութիւնները կը թելադրեն դպրոցները միատեղել, միացնելով տնտեսական ամրութիւն ստեղծել: Թերեւս դրամատնային սկզբունքներով ճիշդ քայլ է, բայց հայկական դպրոցը առեւտրական կազմակերպութիւն չէ»: Միացնելու փոխարէն պէտք է, առարկեց ան, անյապաղ մշակել կարիքներուն ուղղուած երկարաշունչ լուծումներ, ինչպէս օրինակ եկամտաբեր նախագիծեր կամ նպատակային, անձեռնմխելի, տոկոսէն եկամուտ հայթայթող դրամագլուխներ: Հորիզոնին ուրուագծուող ամսականներու յաւելումի խնդիրը եւ այդ յաւելումի չափին վերաբերեալ երբեմն հակասական գուշակութիւնները արդէն վերահաս փորձանք մը կը նշանակեն, որուն բնաւ պատրաստ չեն դպրոցները:

Դպրոցներուն այժմ դիմագրաւած տնտեսական տագնապը յստակ ցուցանիչ է, որ այն ոլորտն է որ մասնագիտական եւ փորձագիտական լուրջ աջակցութեան կը կարօտի, որպէսզի կարելի ըլլայ, իրատեսական կանխատեսումներու հիման վրայ, գնահատել առաջընթացի ճիշդ ուղին: Թաղային դպրոցներու եւ միացեալ աւելի մեծ դպրոցներու տարբերութիւններուն նայելով պարզ

*Պէտք է ստեղծել
Նիւթականի յատուկ
նշանակութեան
յանձնախումբ մը:*

է նաեւ, որ տարբեր դպրոցներու համար տարբեր լուծումներ պէտք է որոնել: Տնտեսական պատկերը մռայլ է այս պահին, այո, բայց ռազմավարութեան լուրջ մշակումը կրնայ ի վերջոյ լուծումներու հասցնել: Ինչպէս հաստատեց տեղեկաբեր մը. «Կը ձգտիմ դպրոցը ինքնաբաւ դարձնել իրատես տնտեսական եւ նիւթական ծրագրերու հիման վրայ. բայց յուսահատիլը անընդունելի է»: ԳԿՀ-ն անկասկած պէտք է շարունակէ յանձնառու ըլլալ լիբանանահայ դպրոցներուն հանդէպ:

Այնուհանդերձ, նիւթականի տեսակայունութիւնը քաջալերելու նպատակով կարելոր է ընդգծել, որ շարունակական աջակցութիւն ստանալու համար պէտք է յարգել այդ աջակցութեան դրոյթները, բարեյաջող կերպով եւ ժամկետի մէջ բաւարարել ԳԿՀ-ի եւ Նիւթականի յատուկ նշանակութեան յանձնախումբի միասնաբար ճշդած պայմանները (Նիւթականի յատուկ նշանակութեան յանձնախումբին մասին տես ստորեւ): Աւելին. ԳԿՀ-ն պէտք է վերանայի աջակցման իր քաղաքականութիւնը, անցնի աւելի ռազմավարական բաշխումի. բոլոր դպրոցներուն պզտիկ գումարներ տրամադրելու փոխարէն մտածէ մեծ գումարներ ըստ նախագիծի յատկացնելու մասին՝ ըստ նախագիծերու նպատակին, հերթագայութեան սկզբունքով: Այս վերջին տարբերակը բոլոր դպրոցներուն, կրթական խորհուրդներուն եւ ղեկավար մարմիններուն համար առիթ կը ստեղծէ կրթական հաստատութիւններէն ներս աւելի խորունկ, աւելի հիմնաւոր փոփոխութեան եւ կառուցուածքային լուծումներու ձգտելու: Միաժամանակ անոնց մէջ կը խթանէ առաջնորդումը եւ գործին տերը ըլլալու մեկնակետը:

ՆԻԹԱԿԱՆԻ ՅԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Տնտեսական եւ նիւթական կացութեան բարձր ծալքերով զբաղելու համար պէտք է ստեղծել միայն այդ խնդիրը լուծելու լծուած Նիւթականի յատուկ նշանակութեան յանձնախումբ մը: Այս յանձնախումբը պիտի ունենայ 10-ամեայ ռազմավարական ծրագիր մշակելու առաքելութիւն. ծրագիրին նպատակը օգնել է կրթական հաստատութիւններուն՝ իրատեսական նպատակներ ճշդելու եւ նիւթականի տեսակետէ տեսակայուն վիճակ ունենալու: Վերոյիշեալ Յատուկ նշանակութեան յանձնախումբէն անկախ գործող այս խմբակը կանոնաւոր կապի մէջ պիտի ըլլայ անոր հետ: Յանձնախումբը պէտք է իր առաքելութեան ծիրէն ներս ուսումնասիրէ որոշ առանցքային ոլորտներ եւ մշտադիտարկէ զանոնք.

- *Կարողութիւններու զարգացում/հզօրացում՝ դպրոցներու եւ կրթական խորհուրդներու համար* - Այս մէկը պէտք է ըլլայ առաջնային թիրախ, որուն ուղղուած պէտք է ըլլան յանձնախումբին ջանքերը՝ տրուած ըլլալով որ ան դպրոցներուն եւ կրթական խորհուրդներուն կողմէ կատարուելիք բոլոր ապագայ նախաձեռնութիւններուն հիմքը կազմող անհրաժեշտ

հենքը պիտի հայթայթէ, թէ՛ գիտելիքի, թէ՛ հմտութիւններու, թէ՛ կարողութեան առումով: Պէտք է ընդգրկէ հետեւեալը. ա) Դրամաշնորհի յայտի կազմում (օգնելու համար դպրոցներու ղեկավար մարմիններուն լուծումներ փնտռելու, առաջարկի նախագիծեր պատրաստելու՝ զանոնք արտաքին նուիրատու կազմակերպութիւններու ներկայացնելու համար կամ համահովանաւորումով գոյացնելու գումարներ, որոնց դիմաց նուիրատուները յանձնառու կ'ըլլան հաւասար չափով իրենք ալ նուիրաբերել): Բ) Հանգանակութեան հմտութիւններ (սերտելու հանգանակութեան, դրամահաւաքի «աշխարհը»՝ արդէն աւանդական ձեւերէն միւսին հնարաւոր պէտք ստեղծագործ լուծումները. օրինակ՝ «քիչ, բայց շատով» սկզբունքը, երբ համացանցի միջոցով մեծաթիւ լսարանի իւրաքանչիւր անդամ պզտիկ գումար կը նուիրէ): Գ) Հանրութեան հետ կապի հմտութիւններ (դպրոցները աւելի հանրածանօթ դարձնելու, անոնց ներկայութիւնը աւելի շօշափելի, աւելի տեսանելի դարձնելու եւ դրամահաւաքի ջանքերը աւելի լայն լսարանի հասցեագրելու նպատակով):

- *Օժանդակութիւն դպրոցներուն՝ իրատեսական կանխատեսումները ընելու եւ ըստ այդմ պիտոճէ կազմելու* - Մեկնելով այժմու իրավիճակէն, երբ ծնողներու երկու երրորդը կամ չի կրնար ուսումնաւճար տալ, կամ, որոշ պարագաներու, պարզապէս չ'ուզեր վճարել՝ առաջին քայլը պիտի ըլլայ դպրոցներուն համար պատրաստել նիւթականի-ելեմուտքի ապացուցայէն կանխատեսումներ եւ վերլուծութիւններ, որոնք պիտի վեր հանեն անմիջական հոգածութեան կարիք ունեցող ուլորտները, ճշդէն երկարաժամկետ եւ կարճաժամկետ գործնական նպատակներ եւ տարբերակներ նշեն, թէ տուեալ ժամանակահատուածներուն ինչ կարելի է ակնկալել: Ուսումնասիրման ենթակայ այլ երեսակ մը ծնողներուն հետ աշխատանքի կերպն է՝ տարբեր դպրոցներու եւ տարբեր կացութիւններու պարագային. պէտք է ուսումնաւճարներէն գոյացած գումարներու նուազումի փաստացի դեպքերը աւելի մանրակրկիտ քննութեան ենթարկել եւ դարմանելու ձեւեր գտնել (այս ձեւերը որոշ դպրոցներու պարագային կրնան ըլլալ ընտանեկան պիտոճէն վարելու վերաբերեալ ծնողներուն համար տարբեր ուսուցողական հանդիպումներ կազմակերպելու օժանդակութիւն, կրնան ըլլալ ճշդելը, թէ որ պարագաներուն եւ ինչ չափով կարելի է ապահովել ծնողներու մասնակցութիւնը ուսումնաւճարի մասնավճարները դպրոցին տալուն, պատասխանատու ըլլալու մշակոյթ ստեղծելը արդիւնաւետ կերպով, եւ այլն. դաշտը լայն է):

Պէտք է ծախսերը քննական հայեացքով ուսումնասիրել:

- **[Ա]** *Նիւթականի տեւակայունութեան թիրախներու ճշդում* - Անհրաժեշտ է 10-ամեայ ծրագրի ծիրէն ներս ճշդել իրատեսական թիրախներ, եւ զանոնք պարբերաբար (ամենամեայ կամ երկամեայ դրութեամբ) վերատեսութեան ենթարկել, ըստ այդմ համապատասխանեցումներ ընել: Կրթական հաստատութիւններու պարագային այս վերանայումները պէտք է համապատասխանեն իւրաքանչիւր հաստատութեան ամենամեայ հաշուետուութեան, որ պէտք է յստակ կերպով նշէ դեպի տեւակայունութեան թիրախները տանող գործընթացը եւ տեղի ունեցած առաջընթացը:
- *Ծախսերու նուազեցում* - Իրատեսական նպատակներ ճշդելուն զուգընթաց պէտք է ծախսերը քննական հայեացքով ուսումնասիրել՝ տեսնելու համար, թէ որ պարագային անհրաժեշտ է կրճատել զանոնք: Անշուշտ, պիտոճէի բացերը լրացնելու համար իտեալական տարբերակը եկամուտը աւելցնելն է, սակայն հաւանաբար կան տեղեր, ուր կարելի է ծախսերը պակսեցնել առանց վնաս հասցնելու կրթութեան որակին:
- *Շրջանաւարտից միութիւններու եւ ծնողական յանձնախումբերու դերի վերանայում* - Կարելի է շրջանաւարտից միութիւններուն եւ ծնողական յանձնախումբերուն աւելի երեւելի դեր վստահիլ եւ զանոնք ընդգրկել հանրութեան իրազեկման եւ դրամահաւաքի տարբեր ծրագիրներու մէջ, ուր իրենք կ'ըլլան աւելին, քան աւանդական անհատական

Նուիրատուութիւններու եւ հանգանակութեան աղբիւրները: «Ծնող-դպրոց-համայնք» միասնութեան վրայ հիմնուած նոր, համալիր մօտեցումով մը կարելի է աւելի լաւ շեշտել յանձնառու ըլլալու, պատասխանատու ըլլալու, վստահելու եւ վստահութիւն վայելելու, գործին տերը ըլլալու գաղափարները՝ միաժամանակ ի նպաստ ընդհանուր գործին ի սպաս դնելով որոշ ծնողներու եւ/կամ նախկին շրջանաւարտներու դպրոցական կառավարման եւ ղեկավարման մէջ ունեցած ներուժը: Ինչպէս իրաւացիօրէն շեշտեց տեղեկաբեր մը՝ «դպրոցին տերը ծնողներն են»:

- *Աջակցութիւն՝ հաւատարմագրային տնօրինումով դրամագլուխներու եւ նպատակային, անձեռնմխելի տոկոսաբեր դրամագլուխներու ստեղծումին* - Այս տիպի նախաձեռնութիւնները կրնան նաեւ օգտակար ըլլալ նուիրաբերելու մշակոյթը խելահաս կերպով արմատաւորելու եւ զարգացնելու թէ համայնքէն ներս, եւ թէ անոր սահմաններէն դուրս՝ հանրութեան հետ կապի նպատակաւողողուած արշաւներու ճամբով, դիմելով թէ շրջանաւարտներուն եւ թէ առհասարակ աւելի ընդարձակ լսարանի մը: Ինչպէս միւս նախաձեռնութիւններուն պարագային, հոս ալ պէտք է փոքր, բայց ամուր քայլերով առաջ երթալ. պայման չէ որ սկզբնական գումարները հսկայական թիւեր կազմեն: Ժամանակի ընթացքին կը մեծնան անոնք: Անհրաժեշտ է համակարգուած ջանադրութիւն ի գործ դնել, որպէսզի ի վերջոյ բոլոր դպրոցները ստեղծեն այսպիսի դրամագլուխներ:
- *Համահովանաւորումով դրամագլուխներու կարելիութեան ուսումնասիրութիւն* - Վերոնշեալ՝ հաւատարմագրային տնօրինումով դրամագլուխներու եւ նպատակային, անձեռնմխելի տոկոսաբեր դրամագլուխներու ստեղծումին զուգահեռ կարելոր է նաեւ ուսումնասիրել համահովանաւորումով դրամագլուխներու հնարաւոր տարբերակները. փոխադարձ ըլլալու, երկուստեքի գաղափարն ալ կրնայ քաջալերել դպրոցին հետ կապ չունեցող նուիրատուները, ստեղծել վստահութեան, պատասխանատուութեան եւ հաշուետուութեան մթնոլորտ:
- *Աջակցութիւն եկամտաստեղծ իրատեսական նախագիծներու կազմումին* - Այս քայլը նոյնպէս կրնայ զուգահեռ ընթանալ դրամահաւաքի եւ հաւատարմագրային տնօրինումով դրամագլուխի ստեղծումի ջանադրութեան: Այս պարագային եւս կացութիւնը դպրոցէ դպրոց կրնայ տարբել ըլլալ: Աջակցութիւնը պէտք է աներկբայօրէն հիմնուի կարիքներու գնահատման վերլուծութիւններու վրայ:
- *Աւելի մեծ ջանք՝ համոզելու ծնողները, որ դպրոցին վճարեն իրենց զաւակներուն ուսումին համար* - Անշուշտ կարելոր է, որ հայ դպրոցին դռները բաց ըլլան միշտ բոլոր այն աշակերտներուն համար, որոնց ծնողները կը փափաքին հոն դրկել իրենց զաւակները: Սակայն դպրոցի պատասխանատուները պէտք է յաւելեալ ճիգ թափեն ծնողներու՝ իրենց զաւակներուն ուսումնավճարը տալու նիւթական պարտաւորութիւնը շեշտելու եւ այդ գաղափարը անոնց մէջ արմատաւորելու համար:
- *Այլ ինքնատիպ, նորարար, անսխալ ընթաց ուղիներու կարելիութիւն* - Փոքր բայց ամուր քայլերուն կողքին աւելի մեծ եւ յանդուգն գաղափարներն ալ կրնան նոր ուղիներ լուսաւորել: Այսպիսի գաղափար մըն է Հայաստան համահայկական հիմնադրամի նախատիպով համասփիւռքեան հիմնադրամ մը ստեղծելու առաջարկը, որ եկաւ կրթական մշակի մը կողմէ: Այս նախաձեռնութեան նպատակը պիտի ըլլայ յատկապէս եւ հետեւողական կերպով սփիւռքի տարբեր համայնքներու դպրոցներուն աջակցիլը: Այս աջակցութիւնն ալ պիտի տրամադրուի ըստ կարիքի հրատապութեան աստիճանին, ըլլայ շէնքի նորոգութիւն, խնամք, շէնքային պայմաններու բարելաւում թէ բախումներու թատերաբեմ դարձած շրջաններու մէջ ծագած արտակարգ ճգնաժամային կացութիւններ: Այսպիսի նախաձեռնութիւն մը, անշուշտ, կ'ենթադրէ լուրջ ուսումնասիրութիւն եւ ծրագրում. Յատուկ նշանակութեան նիւթականի յանձնախումբը կրնայ այդ աշխատանքը ուղղորդողը ըլլալ:

3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԻՎԱԿՅՈՒՄՈՒԹԻՒՆ [7]

«Դպրոց ունենալը եւ դպրոցը պահելը մասնագիտական լուրջ մօտեցում կ'ենթադրէ», - բացատրեց տեղեկաբեր մը՝ խօսելով ներկայ դրութեան մէջ կառուցային փոփոխութեան անհրաժեշտութեան մասին: Նոյնքան կենսական, որքան նիւթականի տեւակայունութիւնը, փոփոխութեան յանգող հակազդեցութիւններու շղթային կարեւոր օղակներէն մէկը կապուած է մանկավարժական տեւակայունութեան հետ: Մանկավարժական տեւակայունութիւնը, մարդուժի մէջ եղած հետեւողական ներդրումներու ճամբով, պիտի ապահովէ կորիզային անձնակազմի հզօրացումը եւ հեզասահ սերնդափոխութիւնը կրթական հաստատութենէն ներս: Մանկավարժական տեւակայունութեան վերաբերեալ որեւէ քննարկում անպայմանօրէն պէտք է ուսուցիչներու կարծիքները ներառէ: Ուսուցիչները պէտք է որ ջատագովեալ փոփոխութիւններուն մէջ իրենց ըսելիքը եւ դերը ունենան: Ի վերջոյ, «թիւերէն անդին, գումարներէն անդին կայ անհատը, մարդը: Ուսուցիչն է, որ ամէն օր աշակերտներուն դէմ յանդիման է դասարանին մէջ: Ուսուցիչն է որ գրատախտակին վրայ կալիճով կամ թաղիքով պիտի գրէ, սովորական գրատախտակ կամ խելատախտակ պիտի գործածէ, դասագիրքը կամ այլ աղբիւրները եւ միջոցները պիտի գործածէ»:

Յոս ալ, սակայն, ուսուցիչներուն եւ ուսուցչական ասպարեզին մասին կարծիքներուն մէջ կան հակադիր հոսանքներ: Մէկ կողմէ այնպէս կը թուի, որ ինչ չափանիշով ալ նայինք, ուսուցչութիւնը որպէս լուրջ մասնագիտութիւն պէտք եղածին պէս ընդունուած չէ (մանաւանդ հայերէնագիտական նիւթերու դասաւանդումը), եւ յաճախ վարձատրութիւնն ալ արդարացի չէ: Միւս կողմէ, սակայն, այս նոյն ուսուցիչները ջահակիրները կը նկատուին հայ դպրութեան, մայրենի լեզուն, ազգային ինքնութիւնը եւ ժառանգութիւնը նոր սերունդներուն աւանդողները, այդ փոխանցումին պատասխանատուները: Պատասխանատուութեան այս «բեռը» իր ներքին բարդ ծալքերն ու շերտերը ունի. այնպէս կը թուի, որ երբեմն հաստատուած անշարժ վիճակ մը ստեղծուած է ուսուցիչներուն իսկ կողմէ: Անոնք կասկածամտութեամբ կը նային փոփոխութիւններուն եւ դասաւանդման աւանդական եղանակներէն ձեռքազատուելու վերապահ են: Զետեւանքը ան կ'ըլլայ, որ ուսուցումի՝ եւ աշակերտին եւ ուսուցիչին համար ուսումնառական փորձառութիւն ըլլալու գաղափարը կ'անեանայ: Ուսուցումը եւ ուսումնառութիւնը, դաս-աւանդելը եւ դաս-առնելը, սորվիլը եւ սորվեցնելը նոյն մէկ ամբողջութեան ներգոյ մասերն են: Զետեւաբար, որպէսզի կարենան, իրենց հերթին, աշակերտակեդրոն ուսումնական միջավայրեր ստեղծել, ուսուցիչները պէտք է մասնագիտական աճի առողջ մթնոլորտի մէջ աշխատին:

«Մտածելու եւ գործելու ամբողջ մշակոյթ մը կայ, որ պէտք է փոխուի», - պնդեց կրթական գործիչ մը: Այսօր հրամայականը նոր աշխատելաճ ստեղծելն է: Այսինքն՝ կրթական գործընթացներու եւ աշխատելաճերու մէջ ձգտիլ նորին ու նորարարութեան, բարենպաստ մթնոլորտ ստեղծել արեւմտահայերէնի վերագարթօնքին եւ վերակենդանացումին համար, փոփոխութիւն ծնիլ, ողջունել եւ գրկաբաց որդեգրել զայն:

Բնականաբար, սակայն, ուսումնառութեան եւ ուսուցումի նոր մշակոյթը արմատաւորուելու համար ժամանակի կը կարօտի. պէտք է աստիճանաբար ներմուծել զայն: Զայերէնագիտական նիւթերու ուսուցիչներու միջին տարիքը այսօր 40-45-ի շուրջ է. ակնկալելը, որ մէկ օրէն միւսը

«Դպրոցին, կրթական հիմնարկներուն հանդէպ մեր կեցուածքը պէտք է փոխենք: Եթէ կ'ուզենք ժամանակին հետ քայլ պահել, այս հաստատութիւնները նոր մտածելակերպի, աշխատանքի նոր ոճի, նոր եղանակներու, նոր մեթոտաբանութիւններու, նոր մարդոց պէտք ունին: Եթէ կրթական գործիչ ես, պիտի գիտնաս քու մասնագիտութեանդ մէջ եւ կրթութեան ոլորտին մէջ ինչ կ'անցնի-կը դառնայ աշխարհին մէջ, եւ պէտք է կարենաս քայլ պահել ատոնց հետ:»

ուսուցանելու փոխտնօրինություններն ու մեթոտաբանությունները կրկան փոխուհի, իրատեսական չէ: Որեւէ հրահանգուած, ղեկավար մարմիններուն կողմէ վերէն վար պարտադրուած փոփոխութիւն պիտի անդրադարձ մղումով մերժուի, զօրաւոր դիմադրութեան բախի: Հետեւաբար, գերադասելի է գործել երկու զուգահեռ ուղղութիւններով. մէկ կողմէ լրջօրէն գրաւ դնել ապագայ ուսուցիչներու երկարաշունչ կրթութեան վրայ եւ ներդրում ընել անոր մէջ՝ նկատառելի ջանքեր կեդրոնացնելով յետ-բարձրագոյն մակարդակի մանկավարժական կրթութեան մէջ, եւ այս երկու ճանապարհներուն շնորհիւ ստեղծել ապագայ 10-15 տարիներու կրթական գործիչներու «բեկումնային զանգուածը»: Միւս կողմէ այս ջանադրութեան յաւելեալ թափ փոխանցել լաւ մշակուած արդէն աշխատող ուսուցիչներու կրթութեան ծրագիրով մը. այս բաղադրիչը աշխատելաճի մշակոյթին մէջ իրադրութեան՝ դէպի փափաքուած փոփոխութիւնը փոքր հրում մը տալու նոր այլընտրանք մը պիտի ստեղծէ: Այսպիսի մօտեցումը ուսուցիչներու տեսակէտներուն ներառումը պիտի ապահովէ: Իսկ համոզումը, որ իրենց կարծիքները նկատի առնուած են, ուսուցիչներուն պիտի տայ լիազօրութեան զգացում՝ փոփոխութեան գործընթացի տերը ըլլալու զգացումը ստեղծելով անոնց մէջ:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ/ԾՐԱԳԻՐ ՀԻՄՆԵԼՈՒ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Բացայայտ բան է, որ ձեռնարկուած առաջադրանքը չի կրնար դատարկ միջոցին մէջ իրականութեան վերածուիլ: Որպէսզի մանկավարժական տեսակայունութեան ռազմավարական որեւէ լուրջ ծրագրում «ոտքին տակ հող ունենայ», անհրաժեշտ է հիմնել ուսուցիչներու կրթութեան (հայերէնագիտական նիւթերու առնչութեամբ) կեդրոն մը կամ ծրագիր մը: Այս կեդրոն/ծրագիրը կրնայ սփիւռքեան համապատասխան հաստատութեան մը մէջ «բնաւորուիլ» եւ փոխադարձ կապ ունենալ տարբեր համայնքներու հայկական կրթական համակարգերուն հետ: Այս կեդրոն/ծրագիրը պէտք է ապագայ եւ արդէն աշխատող ուսուցիչներու կրթութեան մէջ առաջատարի դեր կատարէ, պէտք է ըլլայ հայեցի կրթութեան եւ մանկավարժութեան տարբեր երեսակներու վերաբերեալ հետազօտութեան բաբախուն կեդրոն: Ան պէտք է նաեւ ամբողջ համայնքին տարածքին կրթութեան բոլոր շահառուներուն համար ըլլայ երկխօսութեան եւ փորձի փոխանակման չեզոք տարածք մը:

Անհրաժեշտ է հիմնել ուսուցիչներու կրթութեան կեդրոն մը կամ ծրագիր մը:

Կեդրոն/ծրագիրը բարձրագոյն կրթութեան հաստատութեան մը ներս տեղակայելը երեք կարեւոր առաւելութիւն կը պարզէ: Նախ յետ-բարձրագոյն մակարդակով մանկավարժական կրթութեան կարելիութիւն կը ստեղծէ: Եթէ մենք կ'ուզենք հայկական կրթութեան մտաւորական հիմքը ամրացնելով անոր մէջ ներդրում կատարել, յետ-բարձրագոյն կրթութիւնը քաջալերելը շատ կարեւոր է: Երկրորդ՝ կրթութեան եւ մանկավարժական գիտութիւններու մէջ գիտահետազօտական աշխատանքը եւ ուսումնագիտութիւնը, դպրութիւնը գնահատելը, քաջալերելը, ամուր հիմքերու վրայ դնելը, նաեւ կը նշանակէ սփիւռքի մէջ մանկավարժական մտքի լուրջ բացակայութեան հարցին անդրադառնալ, անով զբաղիլ: Անկասկած այս խնդիրը համազգային, անդրազգային կարեւորութիւն ունի եւ միայն լիբանանահայ համայնքին չի վերաբերիր: Ինչպէս կրնանք ակնկալել, որ ուսուցչութեան գործին նուիրեալներու կորիզի սերնդափոխութիւն տեղի ունենայ, երբ չկայ մանկավարժութեան եւ կրթութեան մասնագետ գիտահետազօտողներու «բեկումնային զանգուածը», եւ պակաս կայ մենտորներու եւ օրինակելի տիպարներու: Երրորդ՝ հաւատարմագրուած համալսարանի մը վկայականը ձեռքին՝ աւելի դիւրին է սփիւռքեան այլ համայնքներու մէջ դասաւանդելը: Այսպիսի պարագաներու ուսուցչութեան հաւանական թեկնածուները կրնան պարզապէս իրենց նոր բնակավայրի ուսուցչական արտօնութեան պահանջները ամբողջացնել: Ասոնք երկիրէ երկիր տարբեր են, բայց միշտ աւելի կարճատեւ են, քան համալսարանական նոր վկայական մը ձեռք ձգելը:

Եւ վերջապէս, այս կեդրոն/ծրագիրը պէտք է պատկերացնել իբրեւ տեսականը եւ փորձնականը քով-քովի բերող վայր մը: Ան պէտք է ըլլայ ուսուցիչներու կրթութեան համապարփակ ծրագիր առաջարկող կեդրոն մը եւ միաժամանակ նորարար գաղափարներու ստեղծման ինքնատիպ գիտաշխատանոց մը: Ան ի մի պիտի բերէ ուսուցիչները, տնօրէնները, կրթական գործիչները, մտաւորականները եւ գիտաշխատողները, հանրային քննարկումներու առջեւ դնելու կիզակետը ըլլայ եւ զարկ տայ գիտելիքի ստեղծումին: Կեդրոն/ծրագիրը նաեւ սերտ կապեր պիտի ունենայ բազմաթիւ բարձրագոյն կրթութեան հաստատութիւններու, ամբողջ աշխարհի հայագիտութեան եւ հայերէնագիտութեան ամբիոններուն եւ Հայաստանի թէ սփիւռքի յառաջդիմական առաջատար կրթական հաստատութիւններու հետ: Կարճ խօսքով՝ կեդրոն/ծրագիրը նախատիպը պիտի ըլլայ աշխատելաճի այն նոր մշակոյթին, որ ԳԿՀ-ն կը յուսայ խրախուսել:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ընդհանուր առմամբ ուսուցիչներու կրթութեան ծրագիրը պէտք է ոչ միայն Լիբանանի հայկական դպրոցներուն կարիքներուն արձագանգէ եւ ուսուցիչներու յաջորդ սերունդը կազմաւորէ, այլ պէտք է բաւարար չափով ճկուն ըլլայ, որպէսզի սփիւռքեան տարբեր համայնքներու կարիքներուն ալ կարելի ըլլայ զայն պատշաճեցնել: Պէտք է կազմել տասնամեայ ծրագիր մը, որուն նպատակը պէտք է ըլլայ առնուազն 5-10 նոր ուսուցիչ պատրաստելը, որոնք նաեւ աւարտելէ ետք առանցքային դպրոցներու մէջ աշխատանքի երաշխիք պիտի ունենան: Այս ծրագիրը ուսուցիչներու կրթութեան զլխաւոր խնդիրներուն երկարատեւ լուծումներ բերելով ներազդիչ խթան պիտի դառնայ թէ կրթական գործիչներուն լիազօրութեան զգացում հաղորդելու, եւ թէ հանրութեան աչքին անոնց կարգավիճակը բարձրացնելու: Իսկ այս ալ իր հերթին դրական նպաստ պիտի բերէ առհասարակ մանկավարժական տեսակայունութեան՝ մանկավարժութեան ուսանողներուն մէջ հայերէնագիտական նիւթերու հանդէպ զգալի հետաքրքրութեան եւ այդ խումբի ուսանողներուն թիւի աճով:

Ստորեւ ուսուցիչներու կրթութիւնը աւելի հանրածանօթ եւ հանրակարեւոր դարձնելու, ինչպէս նաեւ համազգային ու անդրազգային առումով մանկավարժութեան եւ կրթութեան մասնագետ գիտահետազօտողներու, մտաւորականներու հունձք մը գոյացնելուն ուղղուած առանցքային փոխկապակցուած նախաձեռնութիւններու շարք մը.

- Ամբողջ համայնքի տարբեր դպրոցներէն ճշդէլ «վարպետ ուսուցիչներ», որոնք կրնան գիտելիքի փոխանցումի մէջ բանալի դերակատարութիւն ունենալ: Անոնք կրնան Յատուկ նշանակութեան յանձնախումբին առընթեր խորհրդատու մարմինի մը մաս կազմել, ինչպէս նաեւ կեդրոն/ծրագրին կազմակերպած աշխատանքային նիստեր, աշխատանոցներ, աշխատաժողովներ եւ «վարպետութեան դասեր» վարել:
- Տարբեր մրցակարգերու մէջ ստեղծել «տարուան լաւագոյն ուսուցիչ» մրցանակներ: Խօսքը ոչ միայն յատուկ դասանիւթերու դասաւանդումին կը վերաբերի, այլ նաեւ ուսումնական ծրագիրներու կապուած նորարարութիւններու, դասաւանդման գործընթացին մէջ թուային հաղորդամիջոցներ եւ հարթակներ կիրարկելուն, աշակերտակեդրոն ստեղծագործ նախագիծերուն, եւ այլն: Իւրաքանչիւր մրցանակ պէտք է ունենայ թէ մասնակցութեան, եւ թէ յատկացման յստակ չափանիշներ:
- Հայ մանկավարժներու եւ կրթական մշակներու համար ստեղծել յատուկ կրթաթոշակային հիմնադրամներ (թէ ուսման, եւ թէ հետազօտական աշխատանքի համար) ապագայ ուսուցիչներու կրթութեան, արդէն աշխատող ուսուցիչներու կրթութեան, մանկավարժութեան եւ կրթութեան մէջ յետ-բարձրագոյն կրթութեան համար (Մագիստրոս արուեստից, Մագիստրոս կրթութեան, դոկտորական աստիճան, եւ այլն):
- Ստեղծել այցելու դասախօսի դրութիւն: Կրթութեան եւ մանկավարժութեան հայ

գիտնականներու, գիտաշխատողներու, մտաւորականներու եւ/կամ համաշխարհային կրթական նորարարներու հետ դասախօսական համագործակցութիւն հաստատել, զանոնք հրաւիրել երկարատեւ կամ կարճատեւ տարաբնոյթ աշխատանքային այցելու՝ երկօրեայ աշխատանոցային եւ հանրային դասախօսութիւններէ մինչեւ մէկ կամ երկու եռամսեակ դասաւանդում:

- Հաստատել մրցոյթի հիման վրայ շնորհուող փորձառական աշխատանքի եւ դասաւանդման փորձնական աշխատանքի պարգէներ: Այս մրցանակները պետք է յատուկ մշակուիին ապագայ ուսուցիչներու կրթութեան ծրագրին համար, որ պետք է տեղւոյն հայկական դպրոցներուն մէջ փորձնական դասաւանդման կանոնաւոր հանդիպումներ նախատեսէ: Փորձառական աշխատանքի մրցանակը ապագայ ուսուցիչներուն առիթ պիտի ընձեռէ կարճատեւ (լրացուցիչ կամ յաւելեալ) փորձնական աշխատանք կատարելու ամբողջ աշխարհի հայկական առաջատար դպրոցներէն կամ կրթական միջավայրերէն մէկուն մէջ: Ճամբորդական ծախսերը, կեցութեան ու ապրուստի ծախսերը եւ համեստ օրապահիկը մաս կը կազմեն մրցանակին:
- **[պ]** Արդէն աշխատող ուսուցիչներու կրթութիւնը վերածել համակարգային կանոնաւոր պայմանի՝ յստակ ժամանակահատուածով (օրինակ՝ չորս տարին մէկ): Արդէն աշխատող ուսուցիչներու կրթութիւնը նաեւ պետք է յստակ խթաններուն ներայ, ինչպէս օրինակ դրամական պարգէներ, ամսականի յաւելում կամ պարգէնավճար, դասապահերու նուազեցում (առանց ամսականի նուազեցումի) եւ այլն: Երբ ուսուցիչը արդէն ամբողջացուցած ըլլայ վկայագիրով կամ վկայականով աւարտող ծրագիր մը, հաստատութեան մասնագիտական աճի քաղաքականութեան որպէս անշրջելի պայման կարելի է դնել աշխատանոցներուն կանոնաւոր մասնակցութիւնը:
- «Մանկավարժական կազմաւորումի օրերու» թիւը աւելցնել եւ ապահովել, որ այս օրերուն մեծամասնութիւնը յատկացուած ըլլայ մասնագիտական աճի յանգող գործունեութեան: Աշխատանքը կարելի է համակարգել ուսուցիչներու կրթութեան կեդրոն/ծրագրին հետ համաձայնաբար:
- **[պ]** Արդէն աշխատող ուսուցիչներու կրթութեան ծրագիրին ծիրէն ներս տնօրէններու համար կրթութեան ոլորտին մէջ առաջնորդութեան եւ կրթութեան կառավարման հոսք մը ստեղծել: Մինչ անընդհատ կը խօսուի հայկական կրթական համակարգէն ներս, Լիբանան եւ աշխարհով մէկ, որակեալ ուսուցիչներ ունենալու անհրաժեշտութեան մասին, միշտ կը մոռցուի կարեւոր գործօն մը՝ տնօրէններու կենսական դերակատարութիւնը: Բոլոր գործող տնօրէնները պետք է որոշակի եւ իրատեսական ժամանակահատուածի մը մէջ (օրինակ՝ երեք տարի) աւարտեն կրթական առաջնորդումի ծրագիրը: Իսկ նորեկ տնօրէնները այդ ոլորտէն վկայեալ մասնագետներ պետք է որ ըլլան: Հաստատութեան մասնագիտական աճի քաղաքականութեան որպէս անշրջելի պայման վկայեալ տնօրէններուն համար, կարելի է դնել աշխատանոցներուն կանոնաւոր մասնակցութիւնը:
- Եւ վերջապէս, աշխատելաճի նոր մշակոյթի մը որդեգրումը նաեւ կը պահանջէ մօտէն քննել ըստ սեռի կողմնակալ մօտեցումները եւ կարծրատիպերը թէ՛ ուսուցչութեան ասպարեզէն ներս, եւ թէ դասագրքային գրականութեան եւ ուսումնական ծրագիրներու մշակման հետ կապուած նիւթերու մէջ: Մանրադէպային լուրջ ապացոյցներ կան, որ սեռային կողմնակալ մօտեցումներու բազմաթիւ կարծրատիպեր տակաւին ուղղակի կամ անուղղակի կերպով կը պահպանուին ու կ'աւանդուին դպրոցներէն եւ դասարաններէն ներս: Այս խնդիրին մասին իրազգած ընելը եւ քննադատական մօտացումները քաջալերելը պետք է շարունակական ջանադրութիւն ըլլան ուսուցիչներու կրթութեան բոլոր մակարդակներուն վրայ: Նոյն ձեւով ալ դասագիրքերու բարեփոխման որեւէ

Նախաձեռնութիւն պէտք է ուշադրութիւն դարձնէ այս խնդիրին: Ուսուցչական ասպարէզը, մանաւանդ նախակրթարանի տարիներուն, տակաւին կ'ընկալուի իբրեւ կիներու տիրոյթ: Պէտք է յատուկ ուշադրութիւն սեւեռել այս խնդիրին վրայ եւ լուրջ քայլեր ձեռնարկել սեռային այս անդունդը վերացնելու համար, սկսած ուսուցիչներու հաւաքագրումէն, անցնելով կրթական բարեփոխումներէն մինչեւ ամբողջ կրթական կեանքին մէջ ստեղծագործ միտքով ռազմավարութիւններու մշակումը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԲԱՐԵՓՈՒՏՈՒՄ, ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՏԵՂԾԱՐԱՐ ԱՐՅԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Առանց ուսումնական ծրագիրներու սպառիչ վերանայումին եւ անոնց բարեփոխումներուն կիրարկումին որեւէ կրթական բարեփոխում կիսատ եւ թերի կը մնայ: Գործող ուսումնական ծրագիրները վերատեսութեան ենթարկելու անհրաժեշտութեան մասին կրթական մշակ մը հետեւեալը առաջարկեց. «Բոլորս գլուխ-գլուխի հաւաքուիսք, ուսուցիչներով, կրթական խորհուրդներով, ղեկավար մարմիններով, որոշենք, թէ Լիբանանի մէջ հայկական դպրոց աւարտող միջին աշակերտը ինչ գիտելիք պէտք է ունենայ. գրականութիւն ինչ պէտք է գիտնայ, լեզու, քերականութիւն, ուղղագրութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն... ինչ պէտք է գիտնայ: Այս մեկնակետէն սկսիսք եւ յետոյ որոշենք մեր թիրախը՝ ինչի կ'ուզենք հասնիլ. ատկէ մեկնելով կազմենք ուսումնական ծրագիրը՝ աւարտական դասարանէն սկսելով եւ հասնելով առաջին դասարան. ճշդենք թիրախները՝ ամէն կարգի ինչի պէտք է հասնիսք, ինչ պէտք է ամբողջացնենք, ինչ պէտք է իրականացնենք՝ միշտ մտապահելով մեր վերջնական պատակը եւ վերջնական արդիւնքը, որուն կ'ուզենք հասնիլ: Դասաբաշխումի խնդիրը պիտի չլուծուի, որովհետեւ կրթական փիլիսոփայութեան խնդիր է: Դպրոց մը կ'ընտրէ աւարտական դասարանին 2 դասապահ հայերէն ընել, ուրիշ դպրոց մը՝ 5: Մօտեցումի հիմնաւոր, խորքային տարբերութիւն մը կայ այս պարագային, որ պիտի չփոխուի: Բայց կարելի է որոշել միջինը ինչ պէտք է ըլլայ եւ ատոր հիման վրայ սահմանել թիրախային նպատակները»:

Ուսումնական ծրագրի բարեփոխումը ի վերջոյն անբաժանելիորէն կապուած է դասագիրքերու բարեփոխումին հետ, ծրագրի բարեփոխումը կը տանի դասագիրքերու բարեփոխումին, բայց ոչ՝ հակառակը: Շատ մը տեղեկաբերներ շեշտեցին երկուքին ալ կարելորութիւնը եւ խօսեցան այս զուգահեռ գործընթացներուն շուրջ արդէն մեկնարկած համազարգացման քննարկումներու մասին: ԳԿՅ-ի հովանիին տակ գործող ուսուցիչներու կրթութեան կեդրոն/ծրագիրը կրնայ հունաւորել այս թափը եւ առաջնորդել ուսումնական ծրագիրները բարեփոխելու ջանքերը, մանաւանդ եթէ նկատի ունենանք որ ուսումնական ծրագիրներու բոլոր բարեփոխումները պէտք է նաեւ սերտօրէն առնչուին արեւմտահայերէնի վերակենդանացման գործընթացներուն հետ եւ կրթական նորարարութեան տարրեր պարունակեն:

Ուսումնական ծրագիրներու բարեփոխումի գործընթացին եւ այդ բարեփոխումի ետեւեւն ու բովանդակութեան անբաժանելի մասը պէտք է կազմեն հետեւեալ առանցքային ոլորտները.

- Ուսումնական ծրագիրներու բարեփոխումները պէտք է իսկապէս ըլլան զգուշութեամբ կազմուիս եւ նախատեսուիս՝ ուշադիր ըլլալով, որ դասագիրքերու վրայ կեդրոնացած եւ/կամ անոնց ուղղուած չըլլան: Դասագիրքերը ուսումնական գործընթացին համար օժանդակ աղբիւրներ եւ միջոց են, ոչ նպատակ: Այս կետը կրթութեան փիլիսոփայութեան կարեւոր հիմք մըն է, եւ պէտք է զայն լրջօրէն նկատի առնել: Բովանդակութենէն անդին՝ ուսումնական ծրագրի բարեփոխումը պէտք է շեշտը դնէ աշակերտակեդրոն մօտեցումներուն վրայ, յատուկ կերպով կարեւորէ դասաւանդման նորարար մեթոտաբանութիւնները, ներառեալ արուեստի տարրեր ճիւղեր ընդգրկող մօտեցումները, եւ ուսուցման գործընթացին մէջ թուային եւ ստեղծարար արհեստագիտութեան ներմուծումը:

Յնացք՝ միջսերնդային պատմասութեան Նախագիծի մը համար (մանկավարժական տեսակայունութեան էական սկզբունքները արտացոլող) - Կարելի է, լեզուաբանական եւ մշակութային վերածնունդի Նախատիպի մը վրայ հիմնուելով եւ բանաւոր պատմութիւն ու թուային պատմասութիւնը գործածելով, ըստ բնաբանի ընդհանուր Նախագիծ մը ստեղծել (օրինակ՝ լիբանանահայ համայնքի պատմութիւնը վաւերագրել) բազմամեայ ծրագրումով (2-5 տարի): Նախագիծի գլխաւոր բաղադրիչը ուղղուած է դպրոցներուն՝ որպէս «ապրող պատմութեան» ծրագիր եւ խարսխուած է աշակերտակեդրոն եւ Նախագիծակեդրոն համագործակցային ուսումնառութեան պատկերացումին վրայ: Նախագիծի այլազան բաղադրիչները կրնան տարբեր մակարդակներու վրայ իրագործուիլ՝ Նախակրթարանէն մինչեւ երկրորդականի: Նախագիծը կրնայ Նաեւ ունենալ յետ-երկրորդականի եւ լայն համայնքին հասցեագրուած բաժիններ:

Նախագիծի տեւողութեան ամբողջ ընթացքին տեղի կ'ունենան Նաեւ աշխատանոցներ՝ կրթական գործիչներուն առջանց ուսումնական ծրագիրներու կամ թուային այլեւայլ հարթակներու հետ կապուած աշակցութիւն տրամադրելու համար: Նախագիծը կրնայ Նաեւ պատշաճեցուիլ ապագայ եւ արդէն աշխատող ուսուցիչներու կրթութեան բաժինին:

Նախագիծի կենսական շեշտադրումներէն մեկը երիտասարդները, կրթական մշակները, հետազօտողները, գիտաշխատողները, արուեստագէտները, համայնքի անդամները, բոլորը իրարու կապել, իրարու հաղորդակից դարձնելն է: Նախագիծին բարձրակետային աւարտը կրնայ պսակուիլ ձեռնարկներու շարքով մը՝ յուշապատկերներ, հնչյուրտներ, հնչերթեր, բազմամիջավայր ցուցադրումներ, վաւերագրական ֆիլմ, կատարումներ, կլոր սեղաններ եւ միջազգային գիտաժողով:

- **[ա]** Կրթութեան մէջ արհեստագիտութեան ներմուծումը կը կարօտի աշակցութեան լաւ կազմակերպուած ձեւերու: Բոլոր կրթական մշակները պէտք է արհեստագիտութեան նորագոյն զարգացումներուն, գործածութեան եւ կրթութեան մէջ ներմուծման մասին հետեւողական աշակցութիւն վայելեն եւ այս ոլորտներուն մէջ իրենց գիտելիքներու թարմացումին ու նորոգումին ուղղուած վերապատրաստողական նախագիծերու մասնակցին: Խօսքը հաւասարապէս կը վերաբերի թէ՛ թուային տարբեր հարթակներու գործածութեան մասին (ելեկտրոնային նամակներէն մինչեւ համացանցային որոնում եւ տուեալներու հանում, ընկերային հաղորդամիջոցներ, համակարգչային հմտութիւններ, դասարանին մէջ համացանցային գործիքներու գործածութիւն) վերապատրաստումի հանդիպումներու, եւ թէ՛ նման հարթակները ուսումնական գործընթացներուն մէջ կիրարկելու շուրջ խորքային քննարկումներուն: Ըստ էութեան՝ կարելոր է ցուցափեղկի մէջ ներկայացող արտաքին երեսէն անդին նայիլ եւ խելահաս կերպով գործածել թուային հարթակները որպէս աշակերտներու ապրած իրականութեան ամօձակից միջավայրի մէջ ուսումնառութիւնը դիւրացնող գործիքներ, միջոցներ եւ աղբիւրներ:
- Մայրենի լեզուն եւ հայերէնագիտական բոլոր նիւթերը, բոլոր դպրոցներէն ներս, նախակրթարանի մէջ ըլլայ թէ երկրորդականի, պէտք է աշակերտին համար ըլլան հրապուրիչ, այժմեականութեան բոյր եւ կնիք ունեցող, հետաքրքրական եւ կենսաթրթիռ: Պատմութեան ընթացքին հայերէնը փաստած է հոլովոյթ ապրելու իր ճկունութիւնը: Որպէսզի արեւմտահայերէնը վերակենդանութիւն ապրի այսօր, զայն աւանդելու աւանդական ձեւերը պէտք է զիջին աւելի դիւթիչ եւ, ինչ որ աւելի կարելոր է, այսօր այդ լեզուն խօսող եւ այդ լեզունով ապրող սերունդին հետ սերտօրէն ամօձուող եղանակներու: Այս իրողութիւնն ալ իր կարգին կը նշանակէ ապահովել, որ ուսումնական ծրագիրին թէ՛ ձեւը, եւ թէ բովանդակութիւնը բնական եւ կենդանի ձեւով միաձուլուած ըլլան իրարու եւ աւանդուելիք դաս-ա-նիւթին պարունակութիւնը միշտ կապ ունենայ ներկային հետ, ամօրեային հետ:
- Ճշդել «ուսումնական փոխադարձ ունակութիւնները» (երբ աշակերտը դասանիւթի մը ծիրէն ներս ձեռք կը ձգէ ունակութիւն մը, զոր կրնայ կիրարկել ուրիշ դասանիւթի մը շրջանակին մէջ, եւ փոխադարձաբար): Այս ունակութիւնները ճշդել ոչ միայն հայերէնագիտական դասանիւթերու պարագային, այլ նաեւ անոնց եւ դպրոցի ուսումնական ծրագրի միւս բաղադրիչներուն միջեւ: Այս ունակութիւնները ներառելը մեծապէս արդիւնաւետ կ'ըլլայ երաշխիք ունենալու, որ հայոց լեզուն, գրականութիւնը եւ պատմութիւնը մեկուսացած, աշխարհէն կտրուած միաւորներ պիտի չըլլան, այլ աշակերտներուն միջավայրին մէջ արձագանգ ունեցող թրթռուն նիւթեր: Այս ունակութիւններէն պէտք է յատկապէս եւ յատուկ կարեւորութեամբ քաջալերել հայերէնագիտական դասանիւթերու մէջ հաղորդամիջոցի գրագիտութեան ներմուծումը: Պատճառը այն է, որ այս ներմուծումը այլազան թուային հարթակներու աւելի խորունկ հասկացողութիւնը եւ անոնց գործածութիւնը հեզասահ կերպով կը ձուլէ դասարանային նիւթին հետ՝ միաժամանակ ընդգծելով քննադատական մտածելակերպի կարեւորութիւնը: Ի դէպ, տրուած ըլլալով որ հաղորդամիջոցի գրագիտութիւնը նոյնքան կարելոր ունակութիւն է թէ՛ աշակերտներուն, եւ թէ ուսուցիչներուն համար, ան պէտք է մաս կազմէ ապագայ եւ արդէն աշխատող ուսուցիչներու կրթութեան ծրագիրներուն:
- Այս շրջանակին մէջ այլ կենսական երեսակ մը համացանցի հանրամատչելիութիւնն է: Աստիճանաբար պէտք է այս քայլը իրականացնել, որպէսզի իրատեսական ժամանակահատուածի մը մէջ բոլոր դասարաններն ալ համացանցին կապուած ըլլան: Ուսուցիչներու համար օժանդակ նիւթերու, աղբիւրներու, միջոցներու բացակայութեան եւ դասաւանդման տակաւին յամեցող աւանդական ձեւերու մասին խօսելով ուսուցիչ մը

*Շեշտը պետք է
դնել լեզուական
եւ թուային
գրագիտութիւնը
իրարահիւս կերպով
առաջ տանելու վրայ:*

Նկատեց. «Կարծես կռուի պատրաստ զինուոր մըն եմ, բայց իմ զէնքս նետ-աղեղն է, իսկ ուրիշներ լազերային զէնք ունին»: Կրթութեան մէջ արհեստագիտութիւն ներմուծելուն վրայ գրաւ դնելը ի վերջոյ մանկավարժական եւթականոյցի առումով դպրոցներուն նշածողը աւելի բարձր դիրքի վրայ կը գետեղէ՝ բնականաբար ծնողներու աչքին զանոնք աւելի գրաւիչ դարձնելով: Նոյնպէս աւելի կարեւոր դարձած է ոչ միայն ուսումնական ծրագիրներու հետ կապուած այլազան դասանիւթերու վերաբերեալ առցանց առկայ օժանդակ նիւթերու

տուեալներու պահոց մը ստեղծելը, այլեւ թուային աղբիւրներու եւ պաշարներու ստեղծումը: Այս առումով համացանցային ներկայութիւնը էական է: Պետք է ուսումնասիրել, իր առթած կարելիութիւններուն համար, մասնայատուկ համացանցային «դարպաս» մը ունենալու տարբերակը՝ ուսումնական ծրագրի այլեւայլ երեսակներուն մասին տարբեր յղումներով, աղբիւրներով, ուղեցոյցներով:

- **[պ]** Հայերէնի իմացութիւնը յառաջ մղելու այլընտրանքային եւ ստեղծագործ ուղիներ առաջարկելու առումով շեշտը պետք է դնել լեզուական եւ թուային գրագիտութիւնը իրարահիւս կերպով առաջ տանելու վրայ: Այս երեւոյթը յատկապէս էական կը դառնայ ի տես պատանիներու եւ երիտասարդներու ընկերային հաղորդամիջոցներու յաճախակի գործածութեան որպէս հետեւանք մետրոպէան այբուբենի «լատինատառաճումին» պատճառած համատարած մտահոգութեան: Հայերէն այբուբենի փոխարէն լատին տառերը գործածելը կամ «տառանցումները» որքան որ տագնապածին ըլլան, նաեւ բացայայտօրէն ցոյց կու տան, որ այսօրուան երիտասարդներուն կողմէ արեւմտահայերէնը ընկալուած չէ որպէս գործնական եւ գործածական, որպէս իրենց առօրեայ լեզու: Այս կացութեան կենսունակ այլընտրանք մը կարելի է ձեռնարկ միմիայն եթէ ստեղծագործ միտքը, գործնականութիւնը եւ առօրեայ կեանքին հետ առնչութիւնը ուսումնառութեան գործընթացին եւ գրագիտութեան կիրարկումին մէջ իրենց արժանի եւ սնուցիչ դերը ունենան: Երբ համացանցը, առցանց գործիքները, թուային հարթակները, ստեղծարար արհեստագիտութիւնը դառնան ուսումնական ծրագրի եւ դասաւանդման մեթոտաբանութիւններու մաս եւ մասնիկ, փոփոխութիւնը կը դառնայ շօշափելի եւ ընթացքը՝ շրջելի: Հայերէնագիտական դասանիւթերու բարեփոխուած ուսումնական ծրագիրը պետք է «իր դմները լայն բանայ» ի դէմ համագործակցութեան ոգիով իրարու հետ աշխատող խումբերու բաժնուած աշակերտներուն ստեղծած տեսախաղերուն, շարժերեւակներուն, տեսահոլովակներուն ու ձայնահոլովակներուն, հնչոլորտներուն, յուշապատկերներուն, տարիրական շրջայցերուն, կայքէջերուն, եւ այլն: Ուսուցիչները կ'ըլլան աշակերտներուն աշխատանքը հունաւորողները, անոնց հետ հաւասար համահետազօտողները՝ նախակրթարանէն մինչեւ երկրորդականի կարգերուն մէջ: Արհեստագիտութիւնը դասարան բերելը կը նպաստէ աշակերտներուն միջեւ եւ նաեւ ուսուցիչ-աշակերտ աւելի հաւասար-հաւասար եւ հորիզոնական յարաբերութիւններ ստեղծելուն: Օրինակ՝ «համակարգչի խենթ» աշակերտները ստանձնեն առաջնորդումը, իսկ ուսուցիչները «ուսուցչութենէն» պահ մը ետ կենան եւ իրենք ալ մասնակցին ուսումնառութեան գործընթացին: Նման շրջարկներու մէջ մենտորութիւնն ու հաւասարակիցներով ուսուցումը (երբ աշակերտները իրարու կը սորվեցնեն եւ իրարմէ կը սորվին) կը վերածուին ուսումնառական էական յղացքներու եւ պետք է քաջալերուին անվարան:
- Պետք է ուսումնասիրել յաջողած կրթական նախագիծերու եւ ուսումնական ծրագիրներու նախատիպերը եւ կրթութեան փորձագետներ իրաւիրել մասնակցելու ուսումնական ծրագիրներու բարեփոխումին: Ի լրումն՝ կենսականօրէն կարեւոր պիտի ըլլայ Հայաստանի եւ սփիւռքի յառաջդիմական կրթական հարթակներուն եւ հաստատութիւններուն հետ

յարաբերութիւններ հաստատելը՝ ի խնդիր ուսումնական ծրագիրներու պատրաստութեան եւ ստեղծարար արհեստագիտութեան վրայ հիմնուած կրթական ծրագիրներու ստեղծման շուրջ երկխօսութեան եւ փորձի փոխանակման:

- Խիստ ցանկալի պիտի ըլլար, որ դասագիրքերու բարեփոխման նախաձեռնութիւնն ալ ընթանար վերոնկարագրեալ ուղիին նման ուղիով: Դասագիրքերուն համար ալ պէտք է ուսումնասիրել արհեստագիտական հարթակները՝ եթէ ոչ մեկնարկի պահէն, գոնէ իրատեսական ժամանահատուածի մը ընթացքին: Փոխազդական դասագիրքերը, ձայնային գիրքերը, iOS գործավար համակարգի կամ այլ հարթակի մէջ աշխատող ծրագիրները պէտք է բարեփոխու մի մշակոյթին մաս կազմեն, որպէսզի դասագիրքերը կարճ ժամանակ ետք չվերածուին ժամանակավրէպ հնածոյի: Բարեփոխուած ուսումնական ծրագիրը պիտի յուշէ դասագրքային բարեփոխումի ուղին:

4. ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՒ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ

Ներկայիս լիբանանահայ համայնքէն ներս կրթութեան վերաբերեալ խնդիրներու շուրջ հանրային քննարկումներուն մէջ նկատելի է փոփոխութիւն. անհրաժեշտութիւն կայ, որ կրթութեան վերաբերեալ որոշումներու ընդունումը առաւել համազարգացային ըլլայ:

Աշխատելաոճի համագործակցային մշակոյթի օրինակ ծառայելով՝ ուսուցիչներու կրթութեան կեդրոն/ծրագիրը այս ջանադրութիւնները առաջնորդողի դեր կրնայ ստանձնել: Իբրեւ Էական ռազմավարութիւն՝ կեդրոն/ծրագիրը պէտք է որդեգրէ փորձի փոխանակումը եւ երկխօսութիւնը կարելորելն ու կենսագործելը: Երկխօսութիւնը եւ փորձի փոխանակումը պէտք է ըլլան հիմքը գիտելիքի փոխանցումին, գործընթացներու շուրջ միտքերու փոխանակումին եւ լաւագոյն աշխատելաոճերու շուրջ քննարկումներուն՝ թէ՛ համայնքի տարբեր ոլորտներուն միջեւ, եւ թէ՛ լիբանանահայ համայնքին եւ սփիւռքեան այլ կեդրոններու միջեւ: Տարբեր դպրոցներու յաջողած գործելաոճերուն, յառաջդիմական մանկավարժական նախատիպերուն, այլազան մօտեցումներուն, տեղեկութիւններու «առ ու տուրին»՝ պաշտօնական թէ՛ անպաշտօն դրուածքով, իրագել ու բաժնեկից պէտք է ըլլան մտաւորականները, գիտաշխատողները, կրթական մշակները, ուսուցիչները եւ մանկավարժները: Անոնք պէտք է իրարու հետ խօսին, քննարկեն, թէ՛ դէմ առ դէմ հանդիպումներու ընթացքին, թէ՛ անպաշտօն աշխատահաւաքներու, մանկավարժական երկխօսութիւններու, տարիական առցանց դարպասներու, տեսահամաժողովներու, տարիական գրոյցասենեակներուն՝ այսպիսով փորձարկելով համընթաց թէ՛ ազատընթաց հաղորդակցման եղանակներ:

Ուսուցիչները կ'ըլլան աշակերտներուն աշխատանքը հունաւորողները, անոնց հետ հաւասար համահետազօտողները:

Այլազան նախաձեռնութիւններ կրնան թափ հաղորդել երկխօսութեան այս գործընթացին եւ յառաջ մղել զայն.

- Ստեղծել հայ կրթութեան ոլորտի գիտաշխատողներու համագային եւ անդրազգային ցանց: Այս մէկը կենսական առաջադրանք մըն է, որովհետեւ հիմք պիտի ծառայէ բոլր մը տարբեր նախաձեռնութիւններուն՝ գիտաժողովներու, դասախօսներու եւ գիտաշխատողներու այցերու, միջազգային աշխատանոցներու, տարբեր իրատարակութիւններու կազմակերպումին (օրինակ՝ գիտաժողովներու նիւթեր, տպագիր կամ թուային պարբերաթերթ, նախապատրաստուող գիտական գեկուցումներ): Ան նաեւ կրտսեր եւ աւագ գիտաշխատողներու համար հաւասարակցային եւ միջսերնդային մենտորութեան հնարաւորութիւններ պիտի ստեղծէ եւ յետ-բարձրագոյն մակարդակի կրթութեան ուսանողներուն աջակցութիւն պիտի տրամադրէ: Մէկ խօսքով՝ այս ցանցը կրնայ կրթութեան վերագարթօնքի համագային եւ անդրազգային շարժումի մը մտաւորական հենքը ըլլալ եւ այդ շարժումին շուրջ եռանդուն քննարկում ծնիլ:

- Ստեղծել տնօրէններու, ուսուցիչներու, կրթական մշակներու ցանց՝ բնոյթով նման վերոնշեալ ցանցին: Թէեւ երկու ցանցերը իրարմէ կը տարբերին, բայց բնականաբար իրարու կապուած են, եւ այս կապերը պէտք է քաջալերուին գործօն երկխօսութեան միջոցով՝ աշխատանքային հաւաքներու, թիրախամետ աշխատանոցներու, հանրային զեկուցումներու, համատեղ հրատարակութիւններու եւ/կամ նախագիծերու, եւ այլն: Երկխօսութեան եւ փորձի փոխանակման պաշտօնական «խողովակներուն» կողքին այս յատուկ ցանցէն ներս անպաշտօն հաղորդակցութիւնները պէտք է տեսարար քաջալերուին: Տեղւոյն վրայ կազմակերպուող անպաշտօն դրուածքով հաւաքոյթները կրնան երբեմն անակնկալ եւ արդիւնաւետ երկխօսութեան բերել, ինչը որ կրնայ ի վերջոյ հասցնել լաւագոյն աշխատելաոճերու մասին ակտիւ խորքային խորհրդածութեան: Այս բոլորէն բացի, կանոնաւոր հանդիպումներու շնորհիւ իրարու ծանօթ եւ հարազատ ըլլալը կրնայ փշրել մեկուսացնող աներեւոյթ պատերը, ստեղծել համագործակցութեան առիթներ եւ ուսուցչական ասպարեզի թէ կրթական առաջնորդումի մասնագիտութիւններէն ներս բերել աջակցելու ձեւեր: Նման ցանց մը կրնայ նաեւ շօշափելիօրէն նպաստել կրտսեր եւ ակազ ուսուցիչներուն միջեւ միջսերնդային երկխօսութիւն սկսելուն:

«Մեր դպրոցներուն պատմութիւնը չենք գիտեր, մեր գաղութի կրթական մշակներուն, անցեալ թէ ներկայ, ծանօթ չենք: Պէտք է գիտնանք: Այդ ալ տարբերութիւն կ'ընէ: Ոչ գիտենք ո՛րք ենք հիմա, ոչ ալ գիտենք դէպի ո՛րք կ'երթանք: Լրիւ անդէկ վիճակի մէջ ենք:»

- Քաջալերել փորձի փոխանակումը տեղական տարբեր կրթական խորհուրդներու միջեւ: Ըստ երեւոյթին տարբեր կրթական մարմիններու անդամներու անձնական նախաձեռնութեամբ արդէն այս ուղղութեամբ անպաշտօն քայլեր եղած են, բայց տարբեր կրթական խորհուրդներու միջեւ պաշտօնական երկխօսութեան ուղիներ ստեղծելը շատ կարեւոր է: Այս պարագային կեդրոն/ծրագիրը կրնայ չէզոք վայր մը ըլլալ, ուրկէ սկիզբ առնեն կրթութեան տարբեր, հասարակաց մտահոգութիւն եղող ինտիմները, սկսած ուսումնական ծրագիրներու բարեփոխումներէն մինչեւ համատեղ նախաձեռնութիւններ եւ մասնայատուկ հարցերու պարագային ինտրալուծում:
- Կրթութեան նուիրուած համասփիւռքեան գիտաժողով կազմակերպել (երկու տարին անգամ մը): Այս գիտաժողովը պէտք է թէ՛ մասնակցութեան առումով, թէ՛ մատուցման կերպով ըլլայ մատչելի, տեսականը եւ գործնականը իրարու կամրջէ, որպէսզի ուսուցիչները անոր մասնակցելու հնարաւորութիւն ունենան: Ընդհանուր գաղափարը, գիտաժողովի հասարակ յայտարարը ուսուցչութեան արհեստին, ուսուցումի արուեստին եւ դասաւանդելու աշխատելաոճերուն մասին ուսուցիչներու գաղափարները, մտաւոր ներդրումը եւ խորհածին մտածողութիւնը քաջալերելն է: Գիտաժողովներուն նիւթերը, հոն ներկայացուած գիտական զեկուցումները, անոնց որպէս արդիւնք ծնած յօդուածները կրնան լոյս տեսնել՝ տպագիր եւ/կամ առցանց տարբերակով:
- Հաստատել այցելու դասախօսներու եւ գիտաշխատողներու դրութիւն աշխարհի բոլոր ծագերէն կրթութեան ոլորտի հայ մտաւորականներու, գիտաշխատողներու, կրթական մշակներու հետ գործակցելով (տես **Ուսուցիչներու կրթութիւն** հատուածը):
- Գաղափարներու տարածում: ուսուցումը մտաւորականի մասնագիտութիւն եւ աշխատանք է: Որպէս այդպիսին գաղափարներու տարածումը եւ հանրային քննարկման աղբիւրներ, միջոցներ եւ յղումներ ստեղծելը ուսուցանելու ասպարեզին/դասաւանդումի ուսմունքին կարեւոր մաս է: Վերոնշեալ բոլոր նախաձեռնութիւններու հանրագումար արդիւնքը կրնայ ի վերջոյ գոյացնել կեդրոնացեալ համացանցային «դարպաս»-ի մը հիմնարար հենքը: «Դարպասը» կրնայ «բացուիլ» ազատ կամ սահմանափակ մուտքով այլազան «տարածքներու» վրայ, ուր պիտի մատուցանուին կրթութեան առնչուող յղումներ, ձեռնարկներ, աղբիւրներ, կարելիութիւններ, մանկավարժներու/կրթական գործիչներու առցանց ֆորում մը, անպաշտօն տարիական «զրուցասենեակներ»՝ սահմանափակուած

անդամներուն, եւ այլն: Ի լրումն՝ «դարպասը» կրնայ նաեւ «տուն տալ» բազմատարբերակ (առցանց եւ արտացանց) հրատարակութիւններու.

1. Ուսուցիչներու ցանցային օրագիր կամ էլեկտրոնային պարբերաթերթ, ուր կը մատուցանուին դասարանային գործածութեան հասցեագրուած նիւթեր, օրինակ՝ յղումներ, աղբիւրներ, դասերու ընթացագիծեր, բազմամիջավայր եւ բազմամիջոց գործիքներ, կրթութեան ոլորտին մէջ նոր ձեռքբերումներ եւ զարգացումներ:
2. Մանկավարժութեան նուիրուած անէլի մասնագիտական եւ գիտահետազոտական բնոյթի բայց մատչելի բազմալեզու համահայկական հանդէս մը, որ իր լուսարձակին տակ պիտի պահէ կրթութիւնը՝ իր տարբեր բնագաւառներով եւ երեսակներով, ինչպէս նաեւ բովանդակէ աշխարհասփիւռ հայ գաղութներուն մէջ հայկական դպրոցներուն դիմագրաւած մարտահրաւերներուն շուրջ քննարկումներ: Պետք է քննել հրատարակութեան այլեւայլ կարելիութիւնները, ինչպէս օրինակ առցանց ազատ կամ սահմանափակ մատչելիութիւնը:
3. «Կրթութիւն» բնաբանով մատենաշար. այս մատենաշարը պիտի բացայայտէ հայ դպրոցի պատմութիւնը եւ պատմագրութիւնը, երեւելի հայ մանկավարժներու կեանքը եւ գործունեութիւնը, հայ մտքի ծննդոցէն մինչեւ մեր օրերը:

5. ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Դպրոցներու մասնայատուկ երեսակներու եւ դրսեւորումներու ճիշդ պատկերը կազմելու նպատակով Յատուկ նշանակութեան յանձնախումբը պիտի նախաձեռնէ հարցախոյզներու եւ ուսումնասիրութիւններու առաջին շարքին: Հետազոտութիւնն ու զարգացումը ուսուցիչներու կրթութեան կեդրոն/ծրագրի առաքելութեան կարելոր բաղադրիչները պետք է ըլլան: Գրեթէ բոլոր տեղեկաբերները խօսեցան ապացուցայն ուսումնասիրութիւններու բացակայութեան մասին ո՛ր միայն կրթութեան ոլորտին մէջ, այլ ամէն տեղ: Եւ այս ցաւոտ խնդիրը Լիբանանի հայ համայնքինը չէ միայն: Հետազոտութեան այս նշանակալի բացակայութեան հարցով պետք է ամենայն լրջախոհութեամբ զբաղիլ՝ տեղեկացուած որոշումներ ընդունելու եւ փաստացի տուեալներու հիման վրայ ռազմավարական երկարաշունչ ծրագիրներ կազմելու համար: Ստորեւ բերուածները կրնան առաջին քայլերը ըլլալ «հետազոտութիւն եւ զարգացում» գործունեութեան ծրագիրին.

Տակաւին կարելի է շրջել տեղատուութեան ընթացքը՝ պայմանով, որ որոշունենք փոփոխութիւնը, խիզախենք՝ չերկիրդելով վտանգներէն, մարդուժի մէջ ներդրում ընենք, զօրավիզ կանգնինք ստեղծարար, բազմաուղղութիւն լուծումներու:

- Ծշդել հարցումները եւ կատարել տալ հետազոտական ուսումնասիրութիւններու շարք մը: Կարելի է Յատուկ նշանակութեան յանձնախումբին առաջնորդումով իրագործող մանրածաւալ հետազոտութիւններու շարք մը կազմակերպել՝ նպատակ ունենալով վիճակագրական յստակ տուեալներ հայթայթել համայնքին ժողովրդագրական վիճակին եւ անոր այլեւայլ՝ ընկերային, տնտեսական, կրթական երեսակներուն մասին (օրինակ՝ կազմել սփիւռքահայ ուսուցիչին «դիմանկարը»՝ տարիքը, ունեցած կրթութիւնը, վկայականները, մասնագիտութիւնը, որակաւորումները, ամսականը, եւ այլն): Հրամայական է սակայն, որ այս ձեռնարկումը վիճակագրական տուեալներու շտեմարաններ պատրաստելէն անդին անցնի, եւ գոյանան տարբեր երեսակներով, տարբեր ձեւաչափերով, խորութեամբ կատարուած որակական հետազոտութիւններ (ի տարբերութիւն քանակականին): Առհասարակ, կարելոր է ունենալ հետազոտութեան եւ զարգացումի երկարաշունչ եւ կարճաժամկետ ընթացագիծեր:
- Զաջալերել հայկական դպրոցներու վերաբերեալ այլեւայլ նիւթերու մասին հետազոտութիւնը՝ անուղղակի կերպով գործին լծելով թէ՛ ապագայ ուսուցիչներ, եւ թէ՛ Լիբանանի տարբեր համալսարաններէն ներս յետ-բարձրագոյն մակարդակով մանկավարժութիւն ուսանող հայեր: Նախաձեռնութիւնը երկնպաստ կրնայ ըլլալ՝ մէկ կողմէ հետազոտութեան պակասը

լրացնել, իսկ միւս կողմէ հող պատրաստել կրթութեան ոլորտի ապագայ մասնագետներուն համար: Այսպիսով կը ստեղծուի տեւակայուն նախատիպ մը, որուն սիրտը համայնքային ծառայութիւնն է:

- Ստեղծել կրթութեան վերաբերեալ այլեայլ նիւթեր ունեցող «նախապատրաստուող գիտական զեկուցումներ» խորագրով մատենաշար (ուսումնական ծրագիրներու եւ դասագիրքերու բարեփոխում, կրթութեան ոլորտին մէջ առաջնորդում եւ կառավարում, դասաւանդման մեթոտաբանութիւններ, կրթական հետազոտութիւններ, հարցումի եւ հետազոտութեան տարբեր ձեւեր, մանկավարժական հոգեբանութիւն եւ հոգեբանական խորհրդատուութիւն, միջուսմունքային մօտեցումներ, եւ այլն): Չեկուցումները առցանց ազատօրէն մատչելի կրնան ըլլան, կրնան ըլլալ բազմալեզու, եւ կը մատուցանուին համացանցային «դարպասէն» ներս հասանելի աղբիւրներու առցանց շտեմարանի մը ընդմէջէն:

Եզրակացություն

Ինչպես պերճախօս կերպով հաստատեց տեղեկաբեր մը՝ «Եթե մենք կարենանք ստեղծել համակարգ մը այն ներյատուկ համոզումով, որ դպրոցը մանկավարժության կեդրոն է, ան կրնայ վերածուիլ յետագայ ամեն ինչի շարժամղիչի: Այո, մեզի պետք են ուսուցիչներ, որոնք լաւ գիտեն իրենց դասանիւթը, բայց անոնք պետք է նաեւ մանկավարժ ըլլան, կրթական մշակ ըլլան: Մէյ մը որ աշակերտակեդրոն մօտեցումով աշխատինք, ամրապնդենք այս տեսլականը, եւ այս ըլլայ կեդրոնը դպրոցի պատկերացումին մասին մեր բոլոր ճիգերուն, միւս բոլոր խնդիրները աստիճանաբար կը լուծուին: Մարդուժն է գերական, եւ անոր վրայ գրաւը դնելը: Փոփոխութիւն յառաջացնելու մղումը այս առանցքին շուրջ պետք է ըլլայ, եւ նիւթականի խնդիրները, «հետեւելով», նոյնպէս լուծումի կը յանգին»:

Ի հեճուկս լիբանանահայ կրթական համայնքի դիմագրաւած բազում մարտահրաւերներուն՝ տակաւին կարելի է շրջել տեղատուութեան ընթացքը՝ պայմանով, որ ողջունենք փոփոխութիւնը, խիզախենք՝ չերկիւղելով վտանգներէն, մարդուժի մէջ ներդրում ընենք, զօրավիգ կանգնինք ստեղծարար, բազմաուղղութիւն լուծումներու, որոնք խարսխուած են ապացուցային հետազօտութեան և առողջ ռազմավարութեան կազմումին մէջ: Համակարգի կառուցային վերակառուցման փուլերը իրականութիւն պիտի դառնան, երբ ընտրուի աստիճանական փոփոխութեամբ դէպի աշակերտակեդրոն եւ մանկավարժական ամուր հենք ունեցող կրթական համակարգի այժմեականացումը տանող ուղին:

Կրթական նշանակալից նախաձեռնութիւններուն զօրավիգ կանգնելու իր վաղեմի համբաւով՝ ԳԿՀ Հայկական համայնքներու բաժանմունքը սփիւռքեան բոլոր նախադրեալները ունի առաջնորդողը դառնալու աշխատելաճի նոր մշակոյթի մը որդեգրումին: Ուսուցման և ուսումնառութեան մշակոյթ մը, ուր համագործակցութեան, երկխօսութեան, գործին տէրը ըլլալու, պատասխանատու և հաշուետու ըլլալու առանցքային յղացքները կը հունաւորուին՝ կը դառնան մէկ հուն՝ յանուն արեւմտահայերէնի վերագարթօնքին եւ ի խնդիր այդ լեզուով մեծցող երիտասարդ սերունդի ներուժի փայփայումին:

Աղբիւրներու ցանկ

Գազանճեան, Զ. Վ., (խմբագիր), «Յայ մանկավարժ», թիւ 1(1), Պէյրուս, 2010

Դանիէլեան Ժ., «Լիբանանահայ դպրոցը. թիւեր եւ մտորումներ», Պէյրուս, 2002

«Խաչեր Գալուստեան մանկավարժական կազմաւորումի կեդրոն. Քսանամեակ», Անթիլիաս, 2007

Կրթական եւ հայագիտական ծրագիրներու գրասենեակ (անթուակիր). ըստ՝ <http://www.armenian-orthodoxchurch.org/en/educational-armenological>

«Մեր դպրոցները», խմբագրական «Չարթօնք» օրաթերթի, Պէյրուս, 31 օգոստոս 1938, էջ 2

Նաճարեան, Մ. , «Անդր-Նահր», «Ազգակ օրաթերթ», Պէյրուս, 6 փետրուար 1937, էջ 2

Քասունի, Ե., «Յայ դպրոցը. գիտական-քննադատական միտքի վրայ վերակառուցանելու հրամայականը», «Ազգակ» օրաթերթ, 5 օգոստոս 2013, Պէյրուս

ՅԱԲԵԼՈՒԿՆԵՐ

Յաւելուած Ա - Յանձնարարականներու եւ պատասխանատուութիւններու աղիւսակ

ԳԿՅ ԶՅԲ = Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունք

ՈԿԿ = Ուսուցիչներու կրթութեան կէդրոն

ՅՆՅ = Յատուկ նշանակութեան յանձնախումբ

ՆՅՆՅ = Նիւթականի յատուկ նշանակութեան յանձնախումբ

[պ] = պայմանականութեան դրոյթ՝ ԳԿՅ-ԶՅԲ-էն աջակցութիւն ստանալու պարագային

| Յանձնարարականներ | ԳԿՅ ԶՅԲ | ՈԿԿ | ՅՆՅ | ՆՅՆՅ | Կրթական մարմին | Դպրոց | Տնօրէն | Ուսուցիչ |
|---|------------|-----|-----|------|-------------------|-------|--------|----------|
| Պայմանականութեան դրոյթ | x | | | | | | | |
| ԳԿՅ ԶՅԲ կրթութեան ծրագիրներու պատասխանատու | x | | | | | | | |
| (Կրթութեան) Յատուկ նշանակութեան յանձնախումբի ստեղծում Լիբանանի մէջ | x | | | | | | | |
| Նիւթականի տեւակայունութիւն | [պ] | | | | x | x | | |
| Շարունակական յանձնառութիւն Լիբանանի հայկական դպրոցներուն հանդէպ | x | | | | | | | |
| Ճշդել հանգրուանները եւ պայմանները | x | | | x | | | | |
| Բարեյաջող կերպով եւ ժամկէտի մէջ բաւարարել պայմանները | [պ] | | | | x | x | | |
| Գումարներու ռազմավարական յատկացում (ըստ Նախագիծի մեծ գումարներ յատկացնել հերթագայութեան սկզբունքով) | x | | | | | | | |
| Նիւթականի յատուկ նշանակութեան յանձնախումբ Լիբանանի մէջ | x | | | | | | | |
| Կարողութիւններու զարգացում/հզօրացում դպրոցներու եւ կրթական խորհուրդներու համար | | | | x | x | x | | |
| Օժանդակութիւն դպրոցներուն՝ պիւտճէի իրատեսական կանխատեսումներ ընելու | | | | x | | | | |
| | | | | | | | | |

| Յանձնարարականներ | ԳԿՅ ՀՀԲ | ՈԿԿ | ՅՆՅ | ՆՅՆՅ | Կրթական մարմին | Դպրոց | Տնօրէն | Ուսուցիչ |
|--|------------|-----|-----|------|-------------------|-------|--------|----------|
| Նիւթականի տեւակայունութեան թիրախներու ճշդում | [ա] | | | x | x | x | | |
| Ծախսերու նուազեցում | | | | x | x | x | | |
| Շրջանաւարտից միութիւններու եւ ծնողական յանձնախումբերու դերի վերանայում | | | | x | x | x | | |
| Աջակցութիւն՝ հաւատարմագրային տնօրինումով եւ անձեռնմխելի տոկոսաբեր դրամազուկներու ստեղծումին | | | | x | x | x | | |
| Համահովանաւորումով դրամազուկներու կարելիութեան ուսումնասիրութիւն | | | | x | x | x | | |
| Աջակցութիւն՝ եկամտաստեղծ իրատեսական նախագիծներու կազմումին | | | | x | x | x | | |
| Ջանք՝ համոզելու ծնողները, որ դպրոցին վճարեն իրենց զաւակներուն ուսումին համար | | | | x | x | x | | |
| Այլ ինքնատիպ, աննախընթաց ուղիներու կարելիութիւն | | | | x | x | x | | |
| Մանկավարժական տեւակայունութիւն | [ա] | | | | | | | |
| Ուսուցիչներու կրթութեան կեդրոն | x | | x | | | | | |
| Ուսուցիչներու կրթութիւն | | x | x | | x | x | x | x |
| Ճշդել «վարպետ ուսուցիչներ» | | x | x | | | | | |
| Ստեղծել «տարուան լաւագոյն ուսուցիչ» մրցանակներ | | x | x | | x | x | | |
| Հայ կրթական մշակներու համար ստեղծել յատուկ կրթաթոշակային հիմնադրամներ | | x | x | | x | x | | |

| Յանձնարարականներ | ԳԿԳ ՀՀԲ | ՈԿԿ | ՅՆՅ | ՆՅՆՅ | Կրթական մարմին | Դպրոց | Տնօրեն | Ուսուցիչ |
|---|------------|-----|-----|------|-------------------|-------|--------|----------|
| Ստեղծել այցելու դասախօսի դրույթներ | | x | x | | | | | |
| Հաստատել մրցույթի հիման վրայ շնորհուող փորձառական աշխատանքի եւ դասաւանդման փորձական աշխատանքի պարգէներ | | x | x | | | | | |
| Արդէն աշխատող ուսուցիչներու կրթութիւնը վերածել համակարգային կանոնաւոր պայմանի | [պ] | x | x | | x | x | | x |
| «Մանկավարժական կազմաւորումի օրերու» թիւը աւելցնել | | | | | x | x | | |
| Արդէն աշխատող ուսուցիչներու կրթութեան ծրագիրին ծիրէն ներս տնօրէններու համար կրթութեան ոլորտին մէջ առաջնորդութեան եւ կրթութեան կառավարման հոսք մը ստեղծել | [պ] | x | x | | | | x | |
| Քննել ըստ սեռի կողմնակալ մօտեցումները եւ կարծրատիպերը | | x | x | x | x | x | | |
| Ուսումնական ծրագիրներու բարեփոխում, կրթական նորարարութիւն եւ ստեղծարար արհեստագիտութիւն | | x | x | | x | x | | |
| Ուսումնական ծրագիրներու բարեփոխումները չկեղրոնացնել դասագիրքերուն վրայ | | x | x | | x | x | x | x |
| | | | | | | | | |
| Կրթութեան մէջ արհեստագիտութեան ներմուծման համար ստեղծել աջակցութեան լաւ կազմակերպուած ծներ | [պ] | x | x | | x | x | x | |

| Յանձնարարականներ | ԳԿՅ ՀՀԲ | ՈԿԿ | ՅՆՅ | ՆՅՆՅ | Կրթական մարմին | Դպրոց | Տնօրէն | Ուսուցիչ |
|--|------------|-----|-----|------|-------------------|-------|--------|----------|
| Մայրենի լեզուն եւ հայերէնագիտական բոլոր նիւթերը դարձնել հրապուրիչ, այժմեական | | x | x | | x | x | x | x |
| Ճշդել եւ ներառնել «ուսումնական փոխադարձ ունակութիւնները» | | x | x | | x | x | x | x |
| Համացանցի հանրամատչելիութիւն | x | x | | | x | x | | |
| Լեզուական եւ թուային գրագիտութիւնը իրարահիւս կերպով առաջ տանիլ | [ւ] | x | x | | x | | x | x |
| Ուսումնասիրել յաջողած կրթական նախագիծերու եւ ուսումնական ծրագիրներու նախատիպեր | | x | x | | x | | | |
| Դասագիրքերու բարեփոխումը կազմակերպել ուսումնական ծրագիրներու բարեփոխման ուղիով | | x | x | | x | x | | |
| Փորձի փոխանակում եւ երկխօսութիւն | | x | x | | x | x | x | x |
| Ստեղծել հայ կրթութեան ոլորտի գիտաշխատողներու համազգային եւ անդրազգային ցանց | x | x | x | | | | | |
| Ստեղծել տնօրէններու, ուսուցիչներու, կրթական մշակներու ցանց | | x | x | | x | x | x | x |
| Քաջալերել փորձի փոխանակումը տեղական տարբեր կրթական խորհուրդներու միջեւ | | x | x | | x | | | |
| | | | | | | | | |
| Կրթութեան նուիրուած համասփիւռքեան գիտաժողով կազմակերպել (երկու տարին անգամ մը) | | x | x | | | | | |

| Յանձնարարականներ | ԳԿԳ ՀՀԲ | ՈԿԿ | ՅՆՅ | ՆՅՆՅ | Կրթական մարմին | Դպրոց | Տնօրեն | Ուսուցիչ |
|---|------------|-----|-----|------|-------------------|-------|--------|----------|
| Հաստատել այցելու դասախօսներու եւ գիտաշխատողներու դրութիւն | | x | x | | | | | |
| Գաղափարներու տարածում | | x | x | | | | | |
| 1. Ուսուցիչներու ցանցային օրագիր կամ էլեկտրոնային պարբերաթերթ | | x | | | | | | x |
| 2. Մանկավարժութեան նուիրուած աւելի մասնագիտական եւ գիտահետազոտական բնոյթի բազմալեզու մատչելի համահայկական հանդէս | | x | x | | | | | |
| 3. Կրթութիւն բնաբանով մատենաշար | | x | x | | | | | |
| Հետազոտութիւն եւ զարգացում | | x | x | | | | | |
| Ճշդել հարցումները եւ կատարել տալ հետազոտական ուսումնասիրութիւններու շարք մը | x | x | x | | | | | |
| Քաջալերել հայկական դպրոցներու վերաբերեալ այլեւայլ նիւթերու մասին հետազոտութիւնը | | x | x | | | | | |
| Ստեղծել կրթութեան վերաբերեալ այլեւայլ նիւթեր ունեցող «Նախապատրաստուող գիտական զեկուցումներ» խորագրով մատենաշար | | x | x | | | | | |

Յաւելուած Բ - Չրուցակիցներու ցանկ

| | |
|----|---|
| | Անուն |
| 1 | Կարօ Աբրահամեան |
| 2 | Մարալ Անթոյեան |
| 3 | Կարօ Առաքելեան |
| 4 | Մարալ Ասլանեան-Պալիոզեան |
| 5 | Վիգէն Աւագեան |
| 6 | Կրէկուար Գալուստ |
| 7 | Սեդա Գարակէօզեան |
| 8 | Ժիրայր Դանիէլեան |
| 9 | Սեւան Դանիէլեան |
| 10 | Յակոբ Եագուպեան |
| 11 | Աստղիկ Չաքարեան-Ճերահեան |
| 12 | Գեղանի Էթեմեզեան |
| 13 | Անի Թորանեան |
| 14 | Ծովիկ Թորիկեան |
| 15 | Արմէն Իւրնէշլեան |
| 16 | Անիթա Լիպիար |
| 17 | Գեղամ Արք. Խաչերեան |
| 18 | Անդրանիկ Ծ. վրդ. Կռանեան |
| 19 | Վեր. Փօլ Յայտոսթեան |
| 20 | Յակոբ Յաւաթեան |
| 21 | Չոհրապ Ղազարեան |
| 22 | Սրբուհի Ճենանեան |
| 23 | Տիգրան Ճինպաշեան |
| 24 | Չաւէն Սաղրլեան |
| 25 | Րաֆֆի Յովսէփեան |
| 26 | Նորայր Նաճարեան |
| 27 | Արաքսի Շահինեան |
| 28 | Վերժին Չերչեան |
| 29 | Վիգէն Չերչեան |
| 30 | Վարդուկ Պալըքճեան |
| 31 | Յովիկ Պերթիզլեան |
| 32 | Մարալ Պոյաճեան |
| 33 | Արա Վասիլեան |
| 34 | Մատլէն Վարդանեան |
| 35 | Սահակ Տետեան |
| 36 | Անահիտ Տոնապետեան |
| 37 | Երուանդ Քասունի |
| 38 | Ազգային Իշխանութեանց Ուսումնական Խորհուրդ |
| 39 | Համազգայինի Կեդրոնական Վարչութիւն |

Յաւելլուած Գ - Աշակերտութեան թիւ

| Դպրոց | 2001-2002 տարեշրջան | 2011-2012 տարեշրջան | Տասնամեայ հմմտթ. (2001/02-2011/12) | 2012-2013 տարեշրջան | Միամեայ հմմտթ. (2011/12-2012/13) | Սուրիահայ աշակերտներու թիւ 2012/13-ին |
|--------------------------------|---------------------|---------------------|------------------------------------|---------------------|----------------------------------|---------------------------------------|
| Ազգային դպրոցներ | | | | | | |
| Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճ | 295 | 195 | -100 | 249 | 54 | 50 |
| Եղիշէ Մանուկեան | 566 | 515 | -51 | 604 | 89 | 82 |
| Յառաջ Գ. Կիւլպէնկեան | 219 | 219 | 0 | 241 | 22 | 14 |
| Սուրէն Խանամիրեան Գոլէճ | 314 | 146 | -168 | 162 | 16 | 17 |
| Սրբոց Քառասուն Մանկանց | 260 | 177 | -83 | 185 | 8 | 46 |
| Աքսոր Գասարճեան | 236 | 126 | -110 | 158 | 32 | 35 |
| Արգարեան | 152 | 99 | -53 | 106 | 7 | 13 |
| Ռուբինեան | 183 | 75 | -108 | 111 | 36 | 10 |
| Նուպարեան - Խրիմեան | 62 | 105 | 43 | 123 | 18 | 1 |
| Չարթալպաշեան | 56 | 0 | -56 | 0 | 0 | 0 |
| Ընդհ. | 2343 | 1657 | -686 | 1939 | 282 | 268 |
| Թռչնոց Բոյս | 160 | 43 | -117 | | | |
| Աւետարանական դպրոցներ | | | | | | |
| Շամլեան - Թաթիկեան | 265 | 322 | 57 | 334 | 12 | 20 |
| Այնճարի Աւետարանական Վարժարան | 311 | 247 | -64 | 253 | 6 | 8 |
| Հայ Աւետարանական Գոլէճ | 106 | 133 | 27 | 152 | 19 | 4 |
| Կեդրոնական Բարձրագոյն Վարժարան | 281 | 295 | 14 | 316 | 21 | 10 |
| Թրատի Աւետարանական Վարժարան | 102 | 0 | -102 | 0 | 0 | 0 |
| Թորոսեան | 213 | 212 | -1 | 188 | -24 | 7 |
| Կերթմենեան | 212 | 98 | -114 | 113 | 15 | 15 |
| Ընդհ. | 1490 | 1307 | -183 | 1356 | 49 | 64 |

| Դպրոց | 2001-2002 տարեշրջան | 2011-2012 տարեշրջան | Տասնամյայ համաթ. (2001/02- 2011/12) | 2012-2013 տարեշրջան | Միամյայ համաթ. (2011/12- 2012/13) | Սուրիահայ աշակերտներու թիւ 2012/13-ին |
|------------------------------|------------------------|------------------------|--|------------------------|--|---|
| Կաթողիկէ դպրոցներ | | | | | | |
| Մերոպեան | 791 | 823 | 32 | 821 | -2 | 6 |
| Ս. Զնիփսիմեանց | 677 | 486 | -191 | 478 | -8 | 4 |
| Մխիթարեան | 309 | 222 | -87 | 222 | 0 | 0 |
| Ս. Ազնէս | 393 | 315 | -78 | 305 | -10 | 12 |
| Հարպոյեան - Ս. Խաչ | 278 | 415 | 137 | 440 | 25 | 28 |
| Կաթողիկէ Քոյրեր | 95 | 70 | -25 | 73 | 3 | 7 |
| Ընդհ. | 2543 | 2331 | -212 | 2339 | 8 | 57 |
| ՀԲԸՄ դպրոցներ | | | | | | |
| Դարուհի - Յովակիմեան | 251 | 168 | -83 | 194 | 26 | |
| Կարմիրեան | 271 | 105 | -166 | 162 | 57 | |
| Նազարեան | 260 | 145 | -115 | 166 | 21 | |
| Ընդհ. | 782 | 418 | -364 | 522 | 104 | 111 |
| Այլ | | | | | | |
| Մ. Եւ Զ. Ասլանեան Ճեմարան | 785 | 670 | -115 | 672 | 2 | |
| Թէթեան | 188 | 140 | -48 | 123 | -17 | 6 |
| Սահակեան - Մկրտիչեան | 36 | 52 | 16 | | | |
| Ընդհ. գումար | 8327 | 6618 | -1709 | 6951 | 428 | 500 |

Յաւելուած Դ - Սուրիահայ աշակերտներու բաշխում 2012-13 տարեշրջանին

Բոլոր դպրոցներուն մէջ

| Դպրոց | դպրոցներու թիւ | Սուրիահայ աշակերտներու թիւ |
|--------------|----------------|----------------------------|
| Կաթողիկէ | 6 | 57 |
| ՀԲԸՄ | 3 | 111 |
| Աւետարանական | 6 | 64 |
| Ազգային | 9 | 268 |
| Այլ | 1 | 6 |
| Ընդհ. | 25 | 506 |

ՀԲԸՄ դպրոցներ

| Դպրոց | Սուրիահայ աշակերտներու թիւ |
|--------------------|----------------------------|
| Դարուհի-Յովակիմեան | |
| Կարմիրեան | |
| Նազարեան | |
| Ընդհ. | 111 |

Աւետարանական դպրոցներ

| Դպրոց | Սուրիահայ աշակերտներու թիւ |
|------------------|----------------------------|
| Շամլեան-Թաթիկեան | 20 |
| Այնճար | 8 |
| ՀԱԳ | 4 |
| ԿԲՎ | 10 |
| Թորոսեան | 7 |
| Կերթմենեան | 15 |
| Ընդհ. | 64 |

Կաթողիկէ դպրոցներ

| Դպրոց | Սուրիահայ աշակերտներու թիւ |
|-----------------|----------------------------|
| Մեսրոպեան | 6 |
| Ս. Հռիփսիմեանց | 4 |
| Մխիթարեան | 0 |
| Ս. Ազնես | 12 |
| Հ-Ս. Խաչ | 28 |
| Կաթողիկէ Զոյրեր | 7 |
| Ընդհ. | 57 |

Ազգային դպրոցներ

| Դպրոց | Սուրիահայ աշակերտներու թիւ |
|-------------------|----------------------------|
| Լ. Եւ Ս. Յակոբեան | 50 |
| Ե. Մանուկեան | 82 |
| Յ. Կիւլպենկեան | 14 |
| Խանամիրեան | 17 |
| Ս. Զ. Մանկանց | 46 |
| Ա. Գասարճեան | 35 |
| Աբգարեան | 13 |
| Ռուբինեան | 10 |
| Ն-Խրիմեան | 1 |
| Ընդհ. | 268 |

Այլ

| Դպրոց | Սուրիահայ աշակերտներու թիւ |
|--------|----------------------------|
| Թէքեան | 6 |

Յաւելուած Ե - Հայերէնագիտական դասապահերու բաշխում այլազան դպրոցներու մէջ
(շաբաթական ընդհանուր 40 դասապահի համեմատ)

ՀԲԸՄ Կարմիրեան միջնակարգ վարժարան

| Կարգ | Լեզու/ Գրականութիւն | Հայոց պատմութիւն | Կրօն |
|--------|---------------------|------------------|------|
| Ա կարգ | 7 | 2 | 1 |
| Բ կարգ | 6 | 2 | 1 |
| Գ կարգ | 6 | 2 | 1 |
| Դ կարգ | 6 | 2 | 1 |
| Ե կարգ | 6 | 2 | 1 |
| Զ կարգ | 5 | 1 | 1 |
| Է կարգ | 5 | 1 | 1 |

ՀԲԸՄ Դարուհի-Յովակիմեան երկրորդական վարժարան

| Կարգ | Լեզու/ Գրականութիւն | Հայոց պատմութիւն |
|---------|---------------------|------------------|
| Է կարգ | 5 | 2 |
| Ը կարգ | 5 | 2 |
| Թ կարգ | 4 | 2 |
| Ժ կարգ | 4 | 1 |
| ժԱ կարգ | 4 | 1 |
| ժԲ կարգ | 0 | 0 |

ԹԷՔԷԿԵԱՆ միջնակարգ վարժարան

| Կարգ | Լեզու | Գրականութիւն | Հայոց պատմութիւն | Կրօն |
|--------|-------|--------------|------------------|------|
| Ա կարգ | 6 | | 1 | 1 |
| Բ կարգ | 6 | | 1 | 1 |
| Գ կարգ | 5 | | 1 | 1 |
| Դ կարգ | 7 | | 1 | 1 |
| Ե կարգ | 5 | | 2 | |
| Զ կարգ | 5 | | 2 | |
| Է կարգ | 5 | | 2 | |
| Ը կարգ | 3 | | 1 | |
| Թ կարգ | 1 | 1 | 1 | |

ՄԵՍՐՈՊԵԱՆ կաթողիկէ վարժարան

| Կարգ | Միացեալ (Լեզու, Հայոց պատմութիւն, Կրօն) |
|--------|---|
| Ա կարգ | 7 |
| Բ կարգ | 6 |
| Գ կարգ | 7 |
| Դ կարգ | 7 |

Շար.

| Կարգ | Միացեալ (Լեզու, Հայոց պատմութիւն, Կրօն) |
|---------|---|
| Ե կարգ | 5 |
| Չ կարգ | 5 |
| Է կարգ | 5 |
| Ը կարգ | 4 |
| Թ կարգ | 2 |
| Ժ կարգ | 3 |
| ԺԱ կարգ | 3 |
| ԺԲ կարգ | 1 |

Հայ աւետարանական գլխեր

| Կարգ | Լեզու/ Գրականութիւն | Հայոց պատմութիւն | Կրօն | Աշխարհագրութիւն |
|---------|------------------------|---------------------|------|-----------------|
| Ա կարգ | 6 | 2 | 2 | |
| Բ կարգ | 6 | 2 | 2 | |
| Գ կարգ | 6 | 2 | 2 | 1 |
| Դ կարգ | 6 | 2 | 2 | |
| Ե կարգ | 5 | 2 | 2 | |
| Չ կարգ | 5 | 2 | 2 | |
| Է կարգ | 5 | 2 | 1 | |
| Ը կարգ | 5 | 2 | 1 | |
| Թ կարգ | 5 | | 1 | |
| Ժ կարգ | 4 | | 1 | |
| ԺԱ կարգ | 4 | 1 | 1 | |
| ԺԲ կարգ | 1 | | | |

Ազգային դպրոցներ

| Կարգ | Լեզու/ Գրականութիւն | Հայոց պատմութիւն | Կրօն/Հայ եկեղեցւոյ պատմութիւն | Աշխարհագրութիւն | Մատենագրութիւն |
|---------|------------------------|---------------------|-------------------------------------|-----------------|----------------|
| Ա կարգ | 8 | 2 | 1 | | |
| Բ կարգ | 8 | 2 | 1 | | |
| Գ կարգ | 8 | 2 | 2 | 1 | |
| Դ կարգ | 7 | 2 | 1 | | 1 |
| Ե կարգ | 7 | 2 | 1 | | 1 |
| Չ կարգ | 7 | 2 | 1 | | 1 |
| Է կարգ | 6 | 2 | 1 | | |
| Ը կարգ | 6 | 2 | 1 | | |
| Թ կարգ | 6 | 2 | 1 | | |
| Ժ կարգ | 4 | 2 | | 1 | |
| ԺԱ կարգ | 4 | 2 | | 1 | |
| ԺԲ կարգ | 3 | 2 | | | 1 |

Ճեմարան

Գտ = գիտական հոսք

Գր = գրական հոսք

| Կարգ | Լեզու/ Գրականություն | Հայոց պատմություն | Հայ եկեղեցւոյ պատմություն | Գրաբար | Մատենա- գրություն | Հայ քաղաքացիական կրթություն |
|------------|-------------------------|----------------------|------------------------------|--------|----------------------|-----------------------------------|
| Ա կարգ | 9 | 2 | | | | |
| Բ կարգ | 7 | 2 | | | | |
| Գ կարգ | 7 | 2 | | | | |
| Դ կարգ | 7 | 2 | | | | |
| Ե կարգ | 7 | 2 | | | | |
| Ղ կարգ | 6 | 2 | | | | |
| Է կարգ | 6 | 2 | | | | |
| Ը կարգ | 6 | 2 | | | | |
| Թ կարգ | 5 | 2 | | | | |
| Ժ կարգ | 4 | 2 | | | | |
| ԺԱ կարգ/Գտ | 3 | 2 | | | | 1 |
| ԺԱ կարգ/Գր | 3 | 2 | 1 | 1 | 2 | 1 |
| ԺԲ կարգ/Գտ | 1 | | | | | |
| ԺԲ կարգ/Գր | 1 | | | | | |

Համեմատական ակնարկ՝ այլազան դպրոցներու մէջ հայերէնագիտական դասապահերու

| Կարգ | Ճեմարան | Ազգային | ՀԲԸՄ | Աւետարանական (ՀԱԳ) | Կաթողիկէ (Մեսրոպեան) | Թէքեան |
|---------|---------|---------|------|-----------------------|-------------------------|--------|
| Ա կարգ | 11 | 11 | 10 | 10 | 7 | 8 |
| Բ կարգ | 9 | 11 | 9 | 10 | 6 | 8 |
| Գ կարգ | 9 | 13 | 9 | 11 | 7 | 7 |
| Դ կարգ | 9 | 11 | 9 | 10 | 7 | 9 |
| Ե կարգ | 9 | 11 | 9 | 9 | 5 | 7 |
| Ղ կարգ | 8 | 11 | 7 | 9 | 5 | 7 |
| Է կարգ | 8 | 9 | 7 | 8 | 5 | 7 |
| Ը կարգ | 8 | 9 | 7 | 8 | 4 | 4 |
| Թ կարգ | 7 | 9 | 6 | 6 | 2 | 3 |
| Ժ կարգ | 6 | 7 | 5 | 5 | 3 | |
| ԺԱ կարգ | 6-10 | 7 | 5 | 6 | 3 | |
| ԺԲ կարգ | 2 | 6 | 0 | 1 | 1 | |

Յաւելուած 2 - Ոսումնավճարներու եւ այլ վճարներու սանդղակներ

Ճեմարան

(Ամերիկեան Տոլար)

| | Արձանագրութիւն | Ոսումնավճար | | Ընդհ. ծախսեր |
|-------------|----------------|-------------|-----------|--------------|
| | | 2012-2013 | 2013-2014 | |
| Մանկապարտէզ | 200 | 1650 | 1900 | 500 |
| Տարրական | 200 | 2100 | 2400 | 500 |
| Նախակրթարան | 200 | 2200 | 2500 | 500 |
| Միջնակարգ | 200 | 2500 | 2900 | 500 |
| Երկրորդական | 200 | 3000 | 3450 | 500 |

Եղիշէ Մանուկեան

(Ամերիկեան Տոլար)

| | Արձանագրութիւն | Ոսումնավճար | Չանագանք | Գրեւական |
|-----------------------|----------------|-------------|----------|----------|
| Մանկամուր | 250 | 1350 | 250 | |
| Մանկապարտէզ | 250 | 1200 | 250 | 150 |
| Նախակրթարան (Ա, Բ, Գ) | 250 | 1450 | 250 | |
| Նախակրթարան (Դ, Ե, Չ) | 250 | 1550 | 250 | 150 |
| Միջնակարգ | 250 | 1900 | 250 | 150 |
| Երկրորդական (Ժ, ԺԱ) | 250 | 2100 | 250 | 150 |
| Երկրորդական (ԺԲ) | 250 | 2400 | 250 | 150 |

Սոֆիա Յակոբեան

(Ամերիկեան Տոլար)

| | Արձանագրութիւն | Ոսումնավճար | Չանագանք |
|---------------------|----------------|-------------|----------|
| Միջնակարգ (Ե) | 175 | 1400 | 325 |
| Միջնակարգ (Ը, Թ) | 175 | 1450 | 325 |
| Երկրորդական (Ժ, ԺԱ) | 175 | 1700 | 325 |
| Երկրորդական (ԺԲ) | 175 | 1800 | 325 |
| Արհեստից Պաթալորէա | 175 | 1200 | 325 |

Նուպարեան-Խրիմեան

ԱՏ = Ամերիկեան Տոլար

ԼՈ = Լիբանանեան Ոսկի (փոխարժէք՝ 1ԱՏ =1500ԼՈ)

| | Արձանագրութիւն | | Ոսումնավճար | | Չանագանք | |
|-------------|----------------|-----|-------------|------|----------|-----|
| | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ |
| Մանկապարտէզ | 150 000 | 100 | 1 500 000 | 1000 | 250 000 | 167 |
| Նախակրթարան | 150 000 | 100 | 1 710 000 | 1140 | 250 000 | 167 |
| Միջնակարգ | 150 000 | 100 | 2 010 000 | 1340 | 250 000 | 167 |

Խանամիրեան

(Ամերիկեան Տոլար)

| | Արձանագրութիւն | Ուսումնավճար | Չանագանք |
|-----------------------|----------------|--------------|----------|
| Մանկապարտէզ | 225 | 600 | 175 |
| Նախակրթարան (Ա, Բ, Գ) | 225 | 900 | 175 |
| Նախակրթարան (Դ, Ե, Չ) | 225 | 1100 | 175 |
| Միջնակարգ | 275 | 1200 | 175 |

Ռուբինեան

ԱՏ = Ամերիկեան Տոլար

ԼՈ = Լիբանանեան Ռսկի (փոխարժէք՝ 1ԱՏ =1500ԼՈ)

| | Արձանագրութիւն | | Ուսումնավճար | | Չանագանք | |
|-------------|----------------|-----|--------------|-----|----------|-----|
| | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ |
| Մանկապարտէզ | 225 000 | 150 | 750 000 | 500 | 150 000 | 100 |
| Նախակրթարան | 225 000 | 150 | 1 000 000 | 667 | 150 000 | 100 |

Արգարեան

(Ամերիկեան Տոլար)

| | Արձանագրութիւն | Ուսումնավճար | Չանագանք |
|-------------|----------------|--------------|----------|
| Մանկապարտէզ | 100 | 500 | 100 |
| Նախակրթարան | 100 | 600 | 100 |

Աքսոր Գասարճեան

ԱՏ = Ամերիկեան Տոլար

ԼՈ = Լիբանանեան Ռսկի (փոխարժէք՝ 1ԱՏ =1500ԼՈ)

| | Արձանագրութիւն | | Ուսումնավճար | | Չանագանք | |
|-------------|----------------|-----|--------------|-----|----------|----|
| | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ |
| Մանկապարտէզ | 150 000 | 100 | 600 000 | 400 | 50 000 | 34 |
| Նախակրթարան | 150 000 | 100 | 700 000 | 467 | 50 000 | 34 |

Ս. Զառասուն Մանկանց

ԱՏ = Ամերիկեան Տոլար

ԼՈ = Լիբանանեան Ռսկի (փոխարժէք՝ 1ԱՏ =1500ԼՈ)

| | Արձանագրութիւն | | Ուսումնավճար | | Չանագանք | |
|-------------|----------------|-----|--------------|-----|----------|-----|
| | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ |
| Մանկապարտէզ | 150 000 | 100 | 500 000 | 334 | 150 000 | 100 |
| Նախակրթարան | 150 000 | 100 | 700 000 | 467 | 150 000 | 100 |

Յառաջ-Կիւլպէնկեան

ԱՏ = Ամերիկեան Տոլար

ԼՈ = Լիբանանեան Ոսկի (փոխարժէք՝ 1ԱՏ =1500ԼՈ)

| | Արձանագրութիւն | | Ուսումնական | | Չանագանք | |
|--------------------|----------------|-----|-------------|------|----------|-----|
| | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ |
| Մանկապարտէզ | 200 000 | 134 | 800 000 | 534 | 250 000 | 167 |
| Նախակրթարան | 250 000 | 167 | 1 000 000 | 667 | 250 000 | 167 |
| Միջնակարգ | 250 000 | 167 | 1 250 000 | 834 | 250 000 | 167 |
| Երկրորդական | 250 000 | 167 | 1 500 000 | 1000 | 250 000 | 167 |

Աւետարանական դպրոցներ

ԱՏ = Ամերիկեան Տղար

ԼՈ = Լիբանանեան Ոսկի (փոխարժեք՝ 1ԱՏ = 1500ԼՈ)

| | Չայ աւետարանական գոյճ | | | | Կերրոնական բարձրագոյն վարժարան | | | | |
|-----------------------|-----------------------|-----|------------------|------|--------------------------------|-----|-------------|---------|-----|
| | Արձանագրութիւն | | Ուսումնական գոյճ | | Արձանագրութիւն | | Ուսումնական | | |
| | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ | |
| Մանկապարտէզ | 500 000 | 334 | 1 885 000 | 1256 | 350 000 | 233 | | 300 000 | 200 |
| Մանկամուր | | | | | | | 1 775 000 | 1183 | 200 |
| Մանկապարտէզ I | | | | | | | 2 475 000 | 1650 | 200 |
| Մանկապարտէզ II | | | | | | | 2 475 000 | 1650 | 200 |
| Ա կարգ | 500 000 | 334 | 2 400 000 | 1600 | 350 000 | 233 | 3 075 000 | 2050 | 200 |
| Բ կարգ | 500 000 | 334 | 2 400 000 | 1600 | 350 000 | 233 | 3 075 000 | 2050 | 200 |
| Գ կարգ | 500 000 | 334 | 2 650 000 | 1766 | 350 000 | 233 | 3 075 000 | 2050 | 200 |
| Դ կարգ | 500 000 | 334 | 2 650 000 | 1766 | 350 000 | 233 | 3 375 000 | 2250 | 200 |
| Ե կարգ | 500 000 | 334 | 2 650 000 | 1766 | 350 000 | 233 | 3 375 000 | 2250 | 200 |
| Զ կարգ | 500 000 | 334 | 2 750 000 | 1833 | 350 000 | 233 | 3 375 000 | 2250 | 200 |
| Է կարգ | 500 000 | 334 | 2 800 000 | 1866 | 350 000 | 233 | 3 625 000 | 2416 | 200 |
| Ը կարգ | 500 000 | 334 | 3 000 000 | 2000 | 350 000 | 233 | 3 625 000 | 2416 | 200 |
| Թ կարգ | 500 000 | 334 | 3 050 000 | 2033 | 350 000 | 233 | 3 625 000 | 2416 | 200 |
| Ժ կարգ | 500 000 | 334 | 3 400 000 | 2266 | 350 000 | 233 | 4 325 000 | 2883 | 200 |
| ԺԱ կարգ | 500 000 | 334 | 3 800 000 | 2533 | 350 000 | 233 | 4 325 000 | 2883 | 200 |
| ԺԲ կարգ | 500 000 | 334 | 4 000 000 | 2666 | 350 000 | 233 | 4 325 000 | 2883 | 200 |

Աւետարանական դպրոցներ

ԱՏ = Ամերիկեան Տոլար

ԼՈ = Լիբանանեան Ոսկի (փոխարժեք՝ 1ԱՏ = 1500ԼՈ)

| | Կերթմենեան | | Այնճար | | Զանազանք | |
|--------------------|------------|---------|--------|-----|-----------|------|
| | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ | ԼՈ | ԱՏ |
| Մանկապարտեզ | | | | | | |
| Մանկամանուր | | | | | | |
| Մանկապարտեզ I | | | | | | |
| Մանկապարտեզ II | | | | | | |
| Ա կարգ | | 300 000 | | 200 | 1 200 000 | 800 |
| Բ կարգ | | 300 000 | | 200 | 1 200 000 | 800 |
| Գ կարգ | | 300 000 | | 200 | 1 200 000 | 800 |
| Դ կարգ | | 300 000 | | 200 | 1 200 000 | 800 |
| Ե կարգ | | 300 000 | | 200 | 1 200 000 | 800 |
| Չ կարգ | | 300 000 | | 200 | 1 350 000 | 900 |
| Է կարգ | | | | 233 | 1 350 000 | 900 |
| Ը կարգ | | | | 233 | 1 350 000 | 900 |
| Թ կարգ | | | | 233 | 1 350 000 | 900 |
| ժ կարգ | | | | 266 | 1 500 000 | 1000 |
| ժԱ կարգ | | | | 266 | 1 500 000 | 1000 |
| ժԲ կարգ | | | | 266 | 1 500 000 | 1000 |

Աւետարանական դպրոցներ

ԱՏ = Ամերիկեան Տոյար

ԼՈ = Լիբանանեան Ոսկի (փոխարժեք՝ 1ԱՏ = 1500ԼՈ)

| | Թողութեան | | Շամլեան-Թաթիլեան | | Չամլեան-Թաթիլեան | | Զանազանք | |
|-----------------------|----------------------|-----|--------------------|------|----------------------|-----|--------------------|------|
| | Արձանագրութիւն ԼՈ | ԱՏ | Ուսումնաւճար ԼՈ | ԱՏ | Արձանագրութիւն ԼՈ | ԱՏ | Ուսումնաւճար ԼՈ | ԱՏ |
| Մանկապարտեզ | 300 000 | 200 | 1 800 000 | 1200 | 200 000 | 133 | 300 000 | 200 |
| Մանկամանուր | | | | | | | 1 050 000 | 700 |
| Մանկապարտեզ I | | | | | | | 1 150 000 | 766 |
| Մանկապարտեզ II | | | | | | | 1 250 000 | 833 |
| Ա կարգ | 300 000 | 200 | 2 050 000 | 1366 | 200 000 | 133 | 1 500 000 | 1000 |
| Բ կարգ | 300 000 | 200 | 2 050 000 | 1366 | 200 000 | 133 | 1 650 000 | 1100 |
| Գ կարգ | 300 000 | 200 | 2 050 000 | 1366 | 200 000 | 133 | 1 750 000 | 1166 |
| Դ կարգ | 300 000 | 200 | 2 050 000 | 1366 | 200 000 | 133 | 1 900 000 | 1266 |
| Ե կարգ | 300 000 | 200 | 2 050 000 | 1366 | 200 000 | 133 | 2 150 000 | 1433 |
| Զ կարգ | 300 000 | 200 | 2 050 000 | 1366 | 200 000 | 133 | 2 400 000 | 1600 |
| Է կարգ | 300 000 | 200 | 2 300 000 | 1533 | 200 000 | 133 | 2 500 000 | 1666 |
| Ը կարգ | 300 000 | 200 | 2 300 000 | 1533 | 200 000 | 133 | 2 650 000 | 1766 |
| Թ կարգ | 300 000 | 200 | 2 300 000 | 1533 | 200 000 | 133 | 2 750 000 | 1833 |
| Ժ կարգ | | | | | 200 000 | 133 | 2 900 000 | 1933 |
| ԺԱ կարգ | | | | | 200 000 | 133 | 3 050 000 | 2033 |
| ԺԲ կարգ | | | | | 200 000 | 133 | 3 250 000 | 2166 |

Յաւելուած Է - Բառացանկ

Բառացանկը կազմելու եւ առհասարակ տեղեկագիրը գրելու եւ թարգմանելու ընթացքին գործածուած են nayiri.com կայքին վրայ տեղադրուած հայոց լեզուի բառարանները, մասնաւորապէս Յ. Մ. Աւգերեանի, Յ. Գ. Աւետիքեանի, Յ. Խ. Սիւրմելեանի, Յ. Գ. Ճելալեանի, Յ. Աճառեանի, Ս. Մալխասեանցի, Է. Աղայեանի, Ս. Գույումճեանի, Ա. Ղարիբեանի (խմբ.), Յ. Յ. Վ. Աւգերեանի, ինչպէս նաեւ Ռուբէն Թարումեանի բառարանները, «Մայքրոսոֆթ» ընկերութեան բառարանը, Մաքսիլան բառարանը, translator.am, armdict.com, coe.am կայքերու բառարանները, Թոււօ կեդրոնի համար Վիուէտ Գրիգորեանի կազմած բառացանկը:

| Բառացանկ | | |
|-----------------------------|---|---|
| Բազմամիջոց եւ բազմամիջավայր | այս եզրը կը գործածուի երբ բովանդակութիւնը ունի բազմաթիւ ձեւեր (գիր, պատկեր, ձայն, եւ այլն) եւ կը գործածէ բազմաթիւ միջոցներ ու միջավայրեր (ձայն, շարժանկար, տեսանիւթ, ձայն եւ տեսանիւթ, ձայն եւ եռաչափ պատկեր, եւ այլն): | multimedia |
| Ընկերային հաղորդամիջոցներ | «ընկերային հաղորդամիջոցներ» բառակապակցութեան տակ կը խմբուի մարդոց հաղորդակցումը իրարու հետ համացանցային «տարիրական համայնքներու» եւ «ընկերային ցանցերու» մէջ: | social media; médias sociaux |
| Թուային պատմասութիւն | թուային պատմասութիւնը դէպքերու, յուշերու, իրադարձութիւններու, պատմութիւններու պատումն է թուային հարթակներու միջոցով: Կրթութեան մէջ ան յաճախ կը կազմակերպուի ընկերային միջավայրերու մէջ որոնք վաւերական յուշումներ կու տան այդ պատմասութենէն քաղուելիք գիտելիքի կիրարկման համար: | digital storytelling; récit numérique |
| Խելատախտակ | փոխազդական հպազգայուն գրատախտակներ: Առաջինը արտադրեց ՍՄԱՐԹ ընկերութիւնը՝ ՍՄԱՐԹպօրտ անուան տակ: | interactive white-board; tableau interactif [SMART Board] |
| Խօսոյթ | «տուեալ հաղորդակցման պահին ըսուածի, լեզուի իրական դրսեւորումը կազմող խօսք» (լեզուաբանական եզրոյթ, Աղայեան, 1976), նաեւ «խօսութիւն», (Մալխասեանց, 1944): | discourse; discours |

| | | |
|---|---|---|
| <p>Հաղորդամիջոցի գրագիտութիւն</p> | <p>հաղորդամիջոցի գրագիտութիւնը տարբեր հաղորդամիջոցներու մէջ հաղորդանիշեր վերլուծելու, արժեւորելու եւ ստեղծելու հմտութիւններու ամբողջ «երանգապնակ» մըն է: Կրթութեան մէջ անոր նպատակը յատկապէս հաղորդամիջոցներու ոլորտին առնչութեամբ աշակերտներուն ստեղծագործ եւ քննադատական ունակութիւնները զարգացնելն է: Գրագետ աշակերտները դիւրութեամբ կրնան վերլուծել հաղորդամիջոցներէն իրենց ստացած հաղորդանիշերը (հեռատեսիլ, համակարգիչ, գովազդ, թերթեր, եւ այլն): Պետք չէ շփոթել կրթական արհեստագիտութեան կամ կրթական հաղորդամիջոցներու հետ:</p> | <p>media literacy; al- phabétisation média- tique, éducation aux médias</p> |
| <p>Հաւասարակիցներով ուսուցում</p> | <p>Երբ ուսումնական դասական գործընթացին ծիրէն ներս աշակերտները տարբեր ձեւերով իրարու կը սորվեցնեն եւ իրարմէ կը սորվին:</p> | <p>peer learning; l'apprentissage par les pairs, enseigne- ment pair à pair</p> |
| <p>Հաւատարմագրային տնօրինումով դրամագլուխ</p> | <p>Նուիրատուն այս դրամագլուխը կը վստահի երրորդ կողմի մը (հաւատարմագրային), իսկ շահառուն (սովորաբար կազմակերպութիւն մը կամ անչափահաս մը) անկէ օգուտ կը ստանայ:</p> | <p>trust fund; fonds en fidéicommiss</p> |
| <p>Ջնչերթ</p> | <p>պտոյտ բազմամիջոց տեղադրումներուն մէջ, ընկերակցութեամբ տուեալ տեղադրումի բնաշխարհը (բնութեան եւ շրջապատի), մարդկային ձայներն ու կենսապատմութիւնը պատկերող ձայնագրութեան:</p> | <p>audiowalk; parcours audioguidé</p> |
| <p>Ջնչլորտ</p> | <p>բանաւոր պատմութեան որպէս կիրառական դրսեւորում գործածուող այս աշխատանքի նպատակը տուեալ պահի, դրուագի, դէպքի հնչիւնային աշխարհը վերարտադրելն է:</p> | <p>soundscape; envi- ronnement sonore</p> |
| <p>Յուշապատկեր</p> | <p>տուեալ վայրի, դրուագի, իրի, մարդոց կամ յղացքի նախկին եւ ներկայ յիշողութիւններու համայնապատկերը՝ յուշերու տարբեր հաղորդամիջոցներով եւ տարբեր հաղորդամիջավայրերու մէջ պատումով: Կրնայ պարունակել հնչերթ, հնչլորտ, եւ այլ թուային հարթակներ:</p> | <p>memoryscape; pay- sage de mémoire</p> |

| | | |
|--|---|---|
| Ներակայ ուսումնական ծրագիր | դպրոցի մը ներակայ ուսումնական ծրագիրին մէջ կը մտնեն այն սկզբունքները, կեցուածքները, համոզմունքներն ու արժէքները, որոնք անուղղակիօրէն կը փոխանցուին աշակերտներուն: | hidden curriculum; enseignement implicite, curriculum caché |
| Նպատակային, անձեռնմխելի տոկոսաբեր դրամագլուխ | Նուիրատուի կողմէ նպատակային յատկացուած դրամագլուխ մը, որուն միայն տոկոսները կարելի է գործածել, եւ մայր գումարը անձեռնմխելի է: | endowment fund; fonds de dotation |
| Շարժերեւակ | թուային միջոցներով շարժաւորուած պատկերաշար | animation film; film d'animation |
| Տեւակայունութիւն | Ժամանակի ընթացքին դիմացող եւ զարգացող կայունութիւն: | sustainability; viabilité et durabilité |

Յաւելուած Ը - Ուղեցոյց-հարցարան

Ստորեւ բերուածը մեկնակետային հարցաթերթիկ մըն է, որ գործածուեցաւ որպէս ուղեցոյց: Իւրաքանչիւր հանդիպում, իւրաքանչիւր գրոյց, բնականաբար իր հունով ընթացաւ եւ տեւեց 1-3 ժամ:

Տեղեկութիւն եւ վիճակագրական ընդհանուր տուեալներ

1. Դպրոցի շրջանաւարտները ո՞ր կը յայտնուին: Քանի՞ առ հարիւրը հայագիտական մասնագիտութիւն մը կ'ընտրէ.
 - Ա) Յետ-բարձրագոյն վկայականներ եւ մանկավարժութիւն իբրեւ ասպարէզ
 - Բ) Այլ համայնքներու թերթի խմբագիրներ
 - Գ) Այլ համայնքներու լրագրողներ
 - Դ) Այլ համայնքներու ուսուցիչներ, կրթական գործիչներ:
2. Դասագրքային, գրաւոր եւ ոչ գրաւոր աղբիւրներ - տարիքային խումբեր.
 - Ա) Ուսուցիչին համար ի՞նչ աղբիւրներ, միջոցներ, հնարներ Լիբանանի մէջ կը պատրաստուին.
 - ա. Դասագիրքեր - լիբանանի եւ/կամ սփիւռքի շուկային համար
 - բ. Մանկապատանեկան գրականութիւն
 - գ. Արտադպրոցական - մանկապատանեկան ամսագրեր, այլ աղբիւրներ կամ միջոցներ
 - դ. Ձայնային գիրքեր.
 - Բ) Այս աղբիւրները եւ միջոցները այլ համայնքներ «կը տարուի՞ն»: Անոնք այլ համայնքներու սպառման համար պատրաստ են, թե՞ պետք է յատուկ ապսպրանքով պատշաճեցուին:

Ուսուցիչներ եւ կրթական այլ մշակներ

1. Հայերէնագիտական նիւթերու ուսուցիչներու միջին տարիքը:
2. Մանկավարժական պատրաստուածութիւնը, կրթութիւնը, փորձառութիւնը:
3. Ի՞նչ վկայականներ ունին ուսուցիչները եւ ի՞նչ մասնագիտութիւններ ուսանած են:
4. Նորարար ի՞նչ մօտեցումներ կը կիրարկեն.
 - Ա) Մանկավարժական ստեղծագործ ռազմավարութիւններ
 - Բ) «Փոխադարձ ունակութիւններու» յանգող մօտեցումներ
 - Գ) Դասաւանդման մէջ արուեստի վրայ հիմնուած մեթոտաբանութիւններ
 - Դ) Ստեղծարար արհեստագիտութիւն
 - Ե) Բոլորի խառնուրդ:
5. Սովորական դասապահի մը նկարագրութիւնը:
6. Ի՞նչ տեսակի դասագիրք եւ ուսումնական աղբիւրներ, միջոցներ (շօշափելի թէ ոչ նիւթական) կը գործածուին:
7. Որո՞նք են իրենց դիմագրուած գլխաւոր մարտահրաւերները:
8. Դասարանի չափը -մեծ, պզտիկ- ի՞նչ առաւելութիւններ/անպատեհութիւններ կը ներկայացնէ:
9. Ուսուցիչներուն միջեւ համագործակցային ինչ աշխատանք կայ (եթէ կայ). (տեղւոյն վրայ՝ դպրոցին մէջ կամ դպրոցներու միջեւ, տարածաշրջանային՝ Մերձաւոր Արեւելքի այլ երկիրներու, անդրազգային եւ համազգային՝ սփիւռքեան այլ համայնքներու եւ/կամ Հայաստանի հետ):
10. Ուսուցումը որքանով աշակերտակեդրոն է:
11. Դասաւանդման իրենց փիլիսոփայութիւնը.
Ի՞նչ կերպ կ'աշխատին աշակերտներուն հետ: Խմբային աշխատանք, համագործակցային աշխատանք: Նախագիծերու վրայ հիմնուած աշխատանք: Ընթերցանութեան եւ շարադրանքի աշխատանոցներ:

12. Ուսուցչական անձնակազմի անդամներով եւ կրթական առաջնորդող օղակին կողմէ իրար աջակցելու ի՞նչ տեսակի կապեր կան, կա՞յ աջակցութեան ցանց, ի՞նչ տեսակի Յայ ուսուցիչներու միութեան գաղափար (տեղական եւ համասփիւռքեան):
13. Ըստ իրենց, ի՞նչ պէտք է ըլլայ դպրոցի ղեկավարութեան դերը:
14. Ի՞նչ տեսակի աջակցութիւն կը վայելեն հիմա (համայնքէն ներս թէ դուրս, անդամակցութիւն մասնագիտական միութիւններու, այլ):
15. Ի՞նչ մարտահրաւերներու դէմ յանդիման են (դասաւանդում, դպրոց), եւ ըստ իրենց ինչպէ՞ս կրնան զանոնք յաղթահարել: Իրենց տեսլականը ի՞նչ է:
16. Իրենց կարծիքով, իրենց դպրոցը ի՞նչ ներգործութիւն ունի Լիբանանի մէջ, տարածաշրջանին մէջ, համազգային առումով:
17. Ինչպէ՞ս պէտք է ըլլայ իտեալական դասարանը, դպրոցը, համագործակցութիւնը, մասնագիտական աճի հնարաւորութիւնը: Կազմել փափաքներու ցանկ:

Տւօրէններ

1. Դպրոցը կայքէջ կամ համացանցային ներկայութիւն ունի՞:
2. Ուսուցիչներուն, աշակերտներուն, ծնողներուն հետ իբր կապի միջոց համացանցային գործիքները նշանակալից կերպով կը գործածուի՞ն.
3. Աշակերտներու թիւի առումով դպրոցը ի՞նչ մտահոգութիւններ ունի. Իրենց կարծիքով ծնողներու՝ զաւակները օտար դպրոց ղրկելու թիւը ո՞ր ուղղութեամբ շարժ կ'արձանագրէ.
4. Շրջնաւարտներ. մտահոգութիւններ, թիւեր, համեմատութիւններ, եւ այլն.
5. Նիւթականի խնդիրներ.
 - Ա) Երկարաշունչ ի՞նչ ծրագիրներ կան.
 - Բ) Տեսակայունութիւն ապահովելու համար ի՞նչ ջանքեր կը թափեն: Հանրութեան հետ կապ հաստատելու, դրամահաւաքի, շուկայավարումի, իրենց դպրոցի մակնիշը կերտելու ի՞նչ ռազմավարութիւններ կը կիրարկեն.
 - Գ) Ծնողները եւ/կամ շրջանաւարտները դեր ունի՞ն. ի՞նչ է այդ դերը.
6. Ուսումնալծարը որքա՞ն է: Համեմատած ոչ հայկական դպրոցներուն բա՞րձր է, թէ՞ ցած.
7. Մասնագիտական աճ.

Դպրոցը «մանկավարժական կազմաւորումի օրեր» եւ/կամ մասնագիտական աճի այլ ձեռնարկներ կը կազմակերպէ՞.
8. Ի՞նչ է տեսակայուն կրթական համակարգի իրենց պատկերացումը, համակարգ մը, որ ընդգրկէ ծնողները, ուսուցիչները, աշակերտները, համայնքը՝ իր ամենալայն առումով եւ ամենաժողովրդական խաւերով. ծնող-ուսուցիչ միութիւն, շրջանաւարտից միութիւն.
9. Ի՞նչ տեսակի աջակցութիւն կը վայելեն հիմա (տեղական, միջհամայնքային եւ/կամ համազգային, անդամակցութիւն մասնագիտական միութիւններու, այլ).
10. Կրթութեան արհեստավարժներուն ո՞ր միութիւններուն տնօրէնը կամ դպրոցը անդամ է: Տեղական (հայկական թէ օտար), տարածաշրջանային, միջազգային.
11. Իրենց դպրոցը ինչ դեր ու ներգործութեան ունեցած է տեղւոյն վրայ, տարածաշրջանային եւ անդրազգային/համազգային առումով.
12. Իրենց դպրոցը ի՞նչ մարտահրաւերներ կը դիմագրաւէ: Իրենց կարծիքով ինչպէ՞ս կրնան յաղթահարել այդ դժուարութիւնները: Ի՞նչ պատկերացումով.
13. Ինչպէ՞ս պէտք է ըլլայ իտեալական դասարանը, դպրոցը, համագործակցութիւնը, մասնագիտական աճի հնարաւորութիւնը: Կազմել փափաքներու ցանկ:

Յաւելուած Թ - Առաջադրանքի պայմաններ. «Դպրոցները եւ կրթութիւնը լիբանանահայ համայնքին մէջ»

Պատուիրատու՝ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունք
Հետազօտող՝ դոկտ. Հուրիկ Ադարեան
2013 յուլիս

Նպատակ

Ուսումնասիրութեան նպատակը լիբանանահայ դպրոցներու դիմագրաւած գլխաւոր մարտահրաւերներու մասին համապարփակ ակնարկ մը, ինչպէս նաեւ կրթական քաղաքականութեան վերաբերեալ առաջարկ-յանձնարարականներ ներկայացնելն է: Գաղտնիք չէ, որ հայկական դպրոցներու աշակերտներու թիւը զգալի կերպով նուազած է, որ կրթութեան որակը ինկած է, եւ որ հայկական դպրոցները նիւթականի լուրջ սահմանափակումներ կը դիմագրաւեն: Այս ուսումնասիրութիւնը կը նպատակադրէ այս միտումներուն պատճառները վերլուծել եւ բերել կանոնակարգային եւ ծրագրային նորարար, բայց եւ իրապաշտ լուծումներու առաջարկներ: Ասոնք կրնան իրականացուիլ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան (ԳԿՀ), այս մտահոգութիւնները ունեցող այլ կազմակերպութիւններու թէ Լիբանանի մէջ գործող այլ առանցքային շահառուներու կողմէ՝ յօգուտ հայ հանրութեան:

Տիրոյթ

Ուսումնասիրութեան աշխարհագրական տիրոյթը Լիբանանն է: Աշխատանքը պէտք է տարածուի լիբանանահայ համայնքի կրթական համակարգի բոլոր բաղադրիչներուն վրայ՝ ՀԲԸՄ-ի դպրոցները, ազգային վարժարանները, Համազգային ճեմարանը, հայ ակտարանական եւ հայ կաթողիկէ համայնքներու դպրոցները: Ան պէտք է նաեւ ներառնէ Հայկազեան համալսարանի դերակատարութիւնը:

Գլխաւոր հարցեր եւ մեթոտաբանութիւն

Ուսումնասիրութեան կեդրոնական, ուղեցոյց հարցումը հետեւեալն է. «Ի՞նչ է լիբանանահայ դպրոցական համակարգի դերը արեւմտահայերէնի պահպանումին մէջ, եւ ինչպէս կարելի է ակտիվ մեծ դերակատարութեան վերածել զայն»: Յաճախ կ'ըսուի, որ արեւմտահայ մշակոյթի պահպանման համար այս դպրոցները անշրջանցելի դեր ունին: Այս փաստարկը ի՞նչ ապացոյցներով կրնանք հիմնաւորել: Եւ Մասնաւորապէս, ուսումնասիրութիւնը պէտք է վերլուծէ լիբանանահայ դպրոցներու դիմագրաւած մասնայատուկ մարտահրաւերները, ինչպէս նաեւ ցոյց տայ, թէ ի՞նչ կարելի է ընել դպրոցներու կարողութիւնները բարելաւելու առումով:

Անշուշտ, մեծ հարցեր են, եւ մէկ երկիրի վրայ կեդրոնացող ոչ մէկ արագ ուսումնասիրութիւն կրնայ համապարփակ ձեւով ամեն ինչի անդրադառնալ: Այնուհանդերձ, յատկապէս Լիբանանի շրջարկին մէջ կանոնակարգային որոշումներ կայացնելու համար որոշ փաստային եւ վերլուծական հիմքեր անհրաժեշտ են:

Ուսումնասիրութեան յատուկ մեթոտաբանութիւնը պիտի որոշուի զայն ստանձնող փորձագետին կողմէ եւ իտեալականօրէն պէտք է ընդգրկէ.

- Առանց հարցարանի ազատ հարցազրոյցներ որոշ առանցքային անհատներու հետ (համայնքի ղեկավարներ, տնօրէններ, մտաւորականներ, բարձր կարգերու աշակերտներ, եւ այլն) եւ դպրոցներ այցելութիւններ,
- Այս նիւթին առնչուող փաստաթուղթերու, ներառեալ անցեալ ուսումնասիրութիւններու քննում (եթէ կան),

- Միտումներու, շարժերու վերլուծութիւն, օրինակ աշակերտութեան թիւ, աւարտող առ աշակերտ համամասնութիւններ, եւ այլն,
- Ընդհանուր ակնարկ Լիբանանի հայկական դպրոցներու եւ կրթական համակարգի դիմագրաւած նիւթականի դժուարութիւններուն՝ շեշտը դնելով կառուցային, եւ ո՛չ որոշ դպրոցներու պիւտճէի խնդիրներուն վրայ,
- Դպրոցներու եւ դպրոցական համակագերու միջեւ կապերու եւ զանոնք հաստատելու ուսումնասիրում, օրինակ՝ գիտելիքներու փոխանցում, քաղուած դասեր, լաւագոյն աշխատելաճճեր Լիբանանի մէջ,
- Առաջարկներ՝ կապուած Լիբանանի դպրոցներուն եւ Լիբանանէն դուրս գործող դպրոցներուն/ կրթական հաստատութիւններուն միջեւ կապ հաստատելու հետ. հաստատութիւնները կրնան ըլլալ դասական ձեւի կրթութիւն ջամբող թէ այլ:
- Առաջարկներ՝ կապուած ուսումնական ծրագիրներու եւ դասագիրքերու արդիականացման հետ, եթէ հարկ կայ:

Յեղիակին մասին

Յուրիկ Աղդարեանը իր դոկտորական կոչումը ստացած է Գանատայի Մթկիլ համալսարանի Մանկավարժութեան բաժանմունքէն: Այժմ Գոնգորտիա համալսարանի Բանաւոր պատմութեան եւ թուային պատմասութեան կեդրոնի աշխատակից է իբրեւ բանաւոր պատմութեան այցելու պատմաբան: Աղդարեանի՝ կրթութեան մէջ ինքնութեան հարցերու ուսումնասիրման ծիրին մէջ տեղակայուած, մրցանակի արժանացած հետազոտութիւնը կը քննէ ժառանգուած աքսորի, հոգեխոցի, վերապրումի/գոյատեւման եւ ապաքինման ինքնակենսագրական պատումները: Ան ուսուցման լայնածիր եւ բազմազան փորձ ունի՝ տարրականէն երկրորդական դասարաններ, առցանց կրթական հարթակներ եւ բարձրագոյն կրթութիւն: Յայկական կրթական աշխարհէն ներս իր գործունէութիւնը նոյնպէս բազմաբնոյթ է՝ «ուսումնական փոխադարձ ունակութիւններ» զարգացնող մօտեցումներ, հաղորդամիջոցներու գրագիտութիւն եւ համացանցային նախագիծեր ընդգրկող նորարար ուսումնական ծրագիրներու մշակումէն մինչեւ նախագիծերու վրայ հիմնուած համագործակցային ուսումնառութեան մասին ուսուցիչներու կրթութեան աշխատանոցներու վարում: Ան նաեւ ընդարձակ հետազոտութիւններ կատարած է հայերէնը որպէս ժառանգութեան լեզու իւրացուցած անձերու գրագիտութիւն ձեռք ձգելու գործընթացներու մասին՝ տունը հայերէն խօսողներու եւ դպրոցը հայերէն սորվողներու պարագային: Աշակերտներու, ուսանողներու թէ կրթական գործիչներու հետ իր աշխատանքը զարգացած է համագործակցային դրուածքներու մէջ՝ ուսումնառութեան գործընթացին մէջ զարկ տալով համահետազոտումին:

Դոկտ. Աղդարեանը «Յիշողութիւն եւ ինքնութիւն, բազմալեզուութիւնը եւ ժառանգութեան լեզուները կրթութեան շրջարկին մէջ» բնաբանով բազմաթիւ հրատարակութիւններու եւ գիտաժողովներու ներկայացուած զեկուցումներու հեղինակ է, օրինակ՝ *Life/defying fiction: Unearthing traces of fractured memories in the archives* (Երբ կեանքը խրոխտանք է գեղարուեստական գրականութեան հանդէպ. ջարդուփշուր յիշողութիւններու հետքերով), *Narrating displacement: The pedagogy of exile* (Տեղափոխութեան պատում՝ աքսորի մանկավարժութիւն), *Following the trail of oral history: A story of literacy with Armenian children* (Բանաւոր պատմութեան արահետով. հայ մանուկներու հետ գրագիտութեան պատմութիւն մը), *The dictée in multilingual contexts: Exploring literacy memories across cultures* (Ուղղագրութիւն-թելադրութիւնը բազմալեզու իրավիճակներու մէջ. գրագիտութեան յուշերու միջմշակութային հետազոտում, համահեղինակ՝ Ա. Պիր եւ այլք), *The chameleon character of multilingual literacy portraits: Re-searching in “heritage” language places and spaces* (Բազմալեզու գրագիտութեան պատկերումներու յարափոփոխ նկարագիրը՝ «ժառանգութեան» լեզուի վայրերու եւ տարածութիւններու հետազոտութիւն, համահեղինակ՝ Մ. Մակուայր եւ այլք), *Translating mother/tongue: A narrative of memory, displacement and identity* (Թարգմանել մայր-ենի/լեզուն. յիշողութեան, տեղափոխութեան եւ ինքնութեան պատում), *Language ideologies and education: An ethnography of textual resources in heritage language contexts* (Լեզուական գաղափարաբանութիւններ եւ կրթութիւն. ժառանգութեան լեզուի շրջարկին մէջ դասագրքային եւ գրային այլ աղբիւրներու ազգագրութեան փորձ), *Texts and lives: An autobiographical account of learning and teaching with Armenian textbooks* (Գրութիւններ եւ կեանք. հայալեզու դասագիրքերով ուսուցման եւ ուսումնառութեան ինքնակենսագրական պատում): Վերջերս լոյս տեսաւ անոր *Blossoming Roots: Youth collecting life stories* (Բողբոջող արմատներ. երիտասարդները կենսապատումներու բանահաւաք) գիրքը, որ կը ներկայացնէ Մոնթրէալի զանազան համայնքին մէջ իրականացած բանաւոր պատմութեան համայնքային նախագիծ մը:

